Ա Ր Ա Ր Ա Տ

Ա Մ Ա Ս Տ Ա Ր

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲՈՐՈՑԱԿԱՆ

ԵՒ ԱԶԳԱՑԻՆ.

ԹԻՒ Ա.— ՏԱՐԻ Ա.Բ: ՀՈԿՏԵՄԲԵՐ 50:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

		Եր֊ես֊
1.	Մարդկային Հոգեր, Գ. Ե. Ա.	418
2.	Մեռաւ ուրիշների համար, Ս. Տ Գ.	421
3.	Հայաստանի հին պատմութեան աղբիւրները, (պրոֆէսսոր Պ. Պատկանեանի յօդուած), Ս. Տ. Գ.	423
4.	Վարակիչ միազմատիկական հիւանդութիւններ, Գ Տ. Գ.	435
5.	Գուտտէնբէրգ, տպագրութեան հնարող, Մ. Տ. Ա.	441
6.	Իմ Փափաղ (բանաստ.) Ի. Բ.	448
7.	Ազգային տեսութիւն (վերափաք Հայրապետին մատուցված յայտարարութիւն նորէն վ. Սահիմանէի ճանապարհորդութեան մասին: Թիֆլիսի Մասնաժողովի վճիռ: Վլադիկավկազի Հայերի նուէր: Ադմաւերի Հայեր: Նոր-Նախիջեւանցիների խոստումն: Մոսկվայի Հայերի նուէր: Մեծ. Յովհ. Յովնանեանի նուէր: Տ. Յակոբ ա. ք. Սուրէնեան: Ղիմնու տօնավաճառ: Պետերբուրգի Հայերի նուէր: Մեծ. Մկրտիչ Սանասարեանի նուէր: Մեծ. Կարապետ Եղիան: Մեծ. Պ. Սանասարեանի խոստումն աշակերտական դրամարան կազմելու մասին: Գօրի: Մեծ. տիկին Նունէ Սահմանեանի աշխատութիւն եկեղեցական շապիկներ պատրաստելու Տ. Յակոբ ա. ք. Սուրէնեանի գործակցութեամբ: Պատրաստ գումարի հաշիւ: Հայերի ակնկալութիւններ Գ. Ջեմարանից եւ յուսադրութիւն: Մայր Աթոռի դանձարանի դրութիւն վեճ. Կաթողիկոսի ժամանած տարին: Ջեմարանի շինութեան ծախսեր: Միւս բոլոր շինութիւնների վերայ արած ծախսեր: Տպարանի բարւոքումն: Նոր շինութիւնների կարեւորութիւն: Մինչեւ այժմ եղած ժողովարարութիւններ: Մ Աթոռի ընդհանուր տարեկան մուտք 1878 Թուում: Մ. Աթոռի ընդհանուր տարեկան ծախս 1878 Թուում: Գ. Ջեմարանի տարեկան ծախս: Ս. Մեսրոպի նոր եկեղեցու օծումն: Աւազակերտցիների համար ժողովված փողի գործադրութիւն: Սրբ. Գրիգոր եպ. Մուշեղեանի առաջնորդութիւն Պարսկաստանում եւ Արքունիքն: Մեր բարեմաղթութիւններ: Հայ լրագիրների ընթերցիչների սխալ ոճեր: Կարսում պատահած ցաւալի իրողութիւն: Վերջին ամառտուրի վրիպակներ: Վաղարշապատի օրիորդական ուսումնարանի վարժուհի օրիորդ Մամիկոնեան: Վեհափառ Կաթողիկոսի շնորհած կոնդակներ.	448
8.	Պաշտօնական. Ս. Էջմիածնի Սինոդի օրագրութիւնների վճիռներ	464
9.	Խառն լուրեր	467.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՅԻԹ—1879

«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ.

Ամբողջ իւրաքանչիւր ամիս մի անգամ կհրատարակվի, բազկանալով հինգ թերթից այս ինքն քառասուն երեսներից։ Հանգերձ ճանապարհածախսով տարեկան գինն է Ռուսաստանի մէջ 4 ռուբլի։ — Տաճկաստանի մէջ 3 արծ. մէճիտ։ — Պարսկաստանի մէջ 5 ռուբլի։ — Հնդկաստանի մէջ 6 ռուբ.— Եւրոպա (Փարիզ, Լօնդօն, Ցիւրիխ, Բեռլին) 20 ֆրանկ, և բաժանորդագրութիւնը կանխավճար պէտք լինի և ամենագլխից սկսած։

Արտաքուստ եկած յօդուածներից և նամակներից ամենագրիս ուղղութեան և նպատակին վերաբերեալ և յարմար եղածները միայն կընդունվին։ Հրատարակութիւն։ Յօդուածները պէտք պարզ գրել և ամբողջութեամբ ուղարկել առանց շարունակելի թողնելու։

Ամենայն գրութիւնները պէտք այսպիսի հասցէով ուղարկել։ — АРАРАТЪ АМСАГРІ ХМВАГРОІѲЕАН. Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, Въ Редакцію журнала «АРАРАТЪ». Вагаршапатъ.

«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ

ԵՒ ՆՈՑԱ ԸՆԿԱՒՈՒԹԵԱՆ ՏԵՂԵՐ։

Աստրախանի թեմ.

Աստրախան	Սերովբէ քհ. Լազարեան
Արմաւիր - Նոր	Վարդան քհյ. Գասպարեան
Գեորգիևսկ	Սարգիս քհյ. Տէր Պօղոսեան
Եղեսիա	Գէորգ քհյ. Յարութիւնեան
Ղզլար	Խորէն քահ. Ղօրղանեան եւ Յովհաննէս Քուչուքէկեան
Մոզդոկ	Թադէոս ա. քհյ. Խոսրովեան
Ստաւրապոլ	Բարդողիմէոս քհյ. Բէգուլեան
Վլադիկավկազ	Պետրոս քհյ. Կուսիկեան

Բեսարաբիայի թեմ.

Ակկերման	Աբրահամ քհյ. Մարուքեան
Բաղչիսարայ	Պ. Մարտիրոս Պօյեաճեան
Գրիգորիօպոլ	Դաւիթ քհյ. Շահինեան



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Ժ. — ՇՐՋԱՆ ԺԲ. ՏԱՐԻ ԺԲ. — ՀՈԿՏԵՄ. 1.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳԻՆԵՐ։

Մի մի ժամանակ սիրտս շատ կոտրած է լինում. երբեմն տան հանգամանքն է ինձ նեղացնում, երբեմն իմ և ընտանիքիս կեանքի ապագան է ինձ հոգսերի մէջ ձգում, երբեմն չարախնդաց և կրքոտ մարդիկների դաւաճանութենից է սիրտս վախ ընկնում, թէև դիտաւորութիւն ունեցած չեմ նոցա ինձ թշնամի դարձնելու։ Ա՛խ ինչպէս կցանկայի բոլոր աշխարհի հետ հաշտ ու խաղաղ ապրել. ոչքան չանացել եմ, ոչքան կառավարվել եմ, որ միայն թէ այս ցանկութեանս հասնեմ, բայց և այնպէս հնար չեմ գտել։

Մինչ իմ արած բանը այնպէս չէ հասկացվել, կամ ծուռ է թուել ուրիշի աչքին, միշտ դժուարութիւն, անպատշաճութիւն, կամ գայթակղութիւն է յառաջ եկել, և շատ անգամ, որ ես կարծել եմ թէ ահա վերջապէս միտգամ իմ երկինքս բացվեցաւ, ընդհակառակն սև սև ամպերով է ծածկվել։

Շատ անգամ մտքիցս անց է կենում գլուխս առնել մի անտպատ փախչել, որ այնտեղ ինքս իմ գլխիս լինիմ և մարդիկների հետ ամենևին գործ չունենամ, պատճառ որ նոցա վարմունքը, ինձ հետ ունեցած նիստ ու կացը, նոցա ինձ հետ բռնած գործը, մինչև անգամ նոցա բարեկամութիւնը վերջը վերջը այնուլ է վերջանում, որ իմ կեանքիցս գոհ գրութիւնս ու սրտիս հանգստութիւնը երկար ժամանակ ինձանից կորչում։

Այս տխուր, սիրտս մուխ պատած ժամերում զուր եմ աշխատում ինձ ամեն տեսակ մխիթարանքներ տալ և ինքս ինձ հանգստացնել. հոգսերս մտքիցս դարձեալ չեն դուրս գալիս։ Երեկոյեան անհանգիստ սրտով ու վախով եմ տեղեր մտնում, առաւօտը տեղիցս վեր կացայ թէ չէ,

աչքս բացի թէ չէ իսկոյն ցաւերս, հոգսերս միտքս են ընկնում ու նորոգվում։ Այսպէս իմ կեանքս շարունակ նեղութիւններ, հոգսեր, անհանգստութիւններ պէտք է լինին։ Իմ ունեցած կեանքիս ժամերին ուրախ չեմ լինում և միշտ մին մինի ետևից եկող նոր նոր տանջանքների ծանրութեան տակ ընկնումեմ, այլ ևս չկարողանալով դիմանալ։

Այդ ժամանակը գիշերուան այդ մութի մէջ լսումէ ականջիս մի խօսք, որ կարծես մի հրեշտակի ձայն է ինձ ասում, այս այն խօսքն է, որ իմ բարեպաշտ ծնողներիցս քանի քանի լսել եմ փոքր ժամանակս թէ Ձ-ո-ք ի՛ անել -- յոյժ Ա-ստ-ծ-ո վէրայ դէր։ Որչափ որ աւելի եմ մտածում այդ խօսքի վերայ, այնչափ աւելի պարզ եմ հասկանում, որ քրիստոնէական իմաստուն կեանքի ուղ և ծուծն է։

Այո՛, պէտք է ո-ղջն անեմ, և ամբացած ամեն բանի մէջ, ինչ որ Աստուած ինձ կամեցել է ի-ր վերայ յոյս դնեմ -- իրան յանձնվիմ։ Ես այն բանի վերայ միայն հոգ կանեմ, ինչ բանի մասին որ պարտականութիւնս է հոգ անելու, և իմ պարտաւորութիւններս կկատարեմ, որչափ որ ձեռքիցս կգայ. Աստուած կհոգայ դ-ո ամեն բանը, ինչ որ իմ ձեռքս չէ և իմ ոյժիցս վեր է։ — Կեանքի այս կանոնը իսկոյն կարդի է բերում իմ խառնված մտքերս, ցոյց է տալիս ինձ իմ գործունէութեանս շրջանը, որ նորանից դուրս չգամ և ինձ ազատ է պահում այն հոգսերից, որ Աստուծուն պէտք է ձգեմ, որովհետև Իւր գործն է։

Սորանից են ևս իմաստուն բան կլինի՞։ Սորանից աւելի ազատ և առողջ բանականութեան կանոններին համաձայն բան կլինի՞։ Ո՛րչափ համաձայն է մեր Տէրոջս ու Երկնաւոր Ուսուցչիս ասած խօսքին թէ. «Խնդրեցէք առաջ Աստուծու արքայութիւնն ու Նորա արդարութիւնը, -- ձ-ա-յ-ն ամեն բանք ձեզ կտրվի. որովհետև ձեր երկնաւոր Հայրը գիտէ թէ ի՛նչ է ձեզ պէտք։»

Ցիրաւի շատ անգամ մեր նեղութիւնը յառաջ է գալիս բոլորովին զուր տեղը հոգսեր անելուց, երբ որ մենք աւելի սակաւ ենք հոգ անում այն բանի համար ինչ որ յատուկ մեր բանն, մեզ ընկնելու գործն է, և ծուլութեամբ մեր յոյսը դնումենք Աստուծու վերայ, թէ մեր չարածի տեղը Նա կտայ, կհասցնէ, կամ թէ այնպիսի բաների վերայ ենք սաստիկ հոգ անում ու մեզ ուտում, որ բոլորովին Աստուծու գործն է և ուր որ մարդիս ձեռքից ոչինչ չի գալ։

Մեր անելու գործն այն է, որ մենք մեր երկրաւոր կեանքի պարտականութիւնները, որի համար աշխարհ եկած ենք, հաւատարմութեամբ ու խղճմտանքով կատարենք։ Մեր երեսի քրտինքով պէտք է մենք աշխատենք, որ ոչ թէ միայն մեր և մերոնց օրական հացը ձեռք բերենք, այլ և խնայողութեամբ մի քիչ բան յետ ձգենք այն օրերի համար, որոնց համար պէտք է ասենք, թէ այդ օրերը իմ սրտիս կամեցած օրերը չեն։ Մեզ անելու գործն ու մեր պարտականութիւնն է որ մեզ նման մարդի հետ սիրով ապրինք, նորան լաւութիւն անենք, որչափ որ ձեռներիցս կգայ, անսիրութեամբ նորա սիրտը չդառնացնենք, այլ առաւելապէս նորա թոյլ կողմերին աչք

փակենք, նորա պակասութիւններին համբերութեամբ տանենք ու նորան ներենք։ Մէջ գործն ու պարտականութիւնն է մանաւանդ ամենայն օր աճել պիտութեան և առաքինութեան մէջ, որ մաքուր սրտով կանգնենք Աստուծոյ առաջ։ Ա՛յս է մէջ գործերն, որ կատարելու համար շատ բան ունինք անելու, քանի որ այս կեանքիս մէջ ենք. բայց մեր ամենայն ջանքի, ամենայն աշխատութեան հետևանքն Աստուծոյ ձեռքն է։ Ինչի համար ընդդիմութիւն պիտի ցոյց տայինք իմաստութեանը մեր մեծ Հօր, որ մեզանից աւելի լաւ գիտէ թէ ինչ է հարկաւոր մեր փրկութեան համար։ Երբ որ ես իմ պարտականութիւնս հաւատարմութեամբ կատարել եմ ու իմ խըղճմտանքս ինձ չէ տանջում որ և իցէ անհաւատարմութեանս համար, այլ ևս ինչի՞ պիտի ինքս ինձ չարչարեմ հոգս անելով այն բանի համար, ինչ որ Աստուած դիտաւորութիւն ունի անելու։

Մեր շատ դժգոհութիւնները նորանից են լինում, որ մենք այս այն մեր բոնած գործին մէջ մեր ցանկութիւններն ենք աչքի առաջ ունենում ու հաշուի չենում և ոչ թէ մեր ունեցած ոյժը, եթէ որ դու քո դրութեանդ մէջ մի անգամից չափից դուրս բան չկամենայիր, եթէ որ դու կարողանայիր աւելի սակաւով բաւականանալ, մաքուր դրածից ու յոյս ունեցածիցդ պակաս ձեռք բերածովդ, ևս աւելի գոհ կլինէիր։ Հազարաւոր մարդիկ կան, որ քեզանից պակաս ունին, և սակայն իրանց ունեցածով աւելի բաղդաւոր են, որովհետև բաւականանում են իրանց աստուածապաշտութեամբ։

Ինչի՞ ես ձգում դու քեզ միշտ նոր նոր հանգամանքների, նոր նոր գործերի մէջ, որոնց տակն ես ճնում նորա համար, որ գլխիդ վեր շատ են։ Մի՞թէ հազար ու մէկ հոգսերով ու քեզ տանջող մտքերով անց կացրած շաբաթներդ ու ամիսներդ կարժեն այն սակաւ օրերի ուրախութեանդ, որոնց համար պիտի ասես թէ այժմ ես շատ բան ձեռք բերի։ Ոչ թէ տեսակ տեսակ փայլն ու շատ տեսակ վաստակն է մեզ մեր անձից գոհ անողը, այլ քաջին և ուժին անելը, որ մարդիս ամենայն ջանքն պէտք է լինի։ Դու շատ տեսակ հոգսերից աղատ կմնայիր, եթէ որ կեանքիդ համար շատ բան չցանկանայիր։ Պարզամիտ մարդիկ այդպէս կանեն. անդադար այս գործից այն գործին կվազեն, այս հոգսից միւս հոգսի մէջ կընկնեն, որ մի ժամանակ մի անգամ գուցէ ծերութեան օրերում, այնպիսի մի կարողութիւն ունենան, որը վայելել արդէն չեն կարող։ Նոքա չեն մտածում որ եթէ իրանց ժամանակն ու գործերը, ինչպէս որ պէտք է, այնպէս բաժանէին, այս բաղդաւորութիւնը այժմ կարող էին վայելել. չեն մտածում, որ վաղուան օրը ամենևին իրանց ձեռքը չէ և նորա վերայ իրանց յոյսը դնելը բոլորովին զուր է։ Նոքա չեն մտածում, որ շարունակ հոգսերը իրանց համար վերջապէս այնպէս բնութիւն կդառնան, որ նոքա այն ժամանակ ևս հանդիստ օրեր անցկացնել չեն կարողանայ, երբ որ կկարծէին թէ արդէն հասած են անհոգ կեանք ունենալու իսկ ժամանակին։

Ցիրաւի՛, շատ մարդիկների միշտ հոգ անելը իրանց գտնված դրութեան հարկաւոր հետևանքից չէ, այլ իրանց ունեցած սովորութենից։ Նոքա

գանգատվումեն, որովհետև իրանց սովորութիւնն է ոչ մի իրանց ունեցած բանով գոհ չլինել։ Օր ու գիշեր տանջումեն իրանք իրանց այնպիսի բաների համար, որ իրանց ուրախութիւն պարգևելու համար, երբեմն հազիւ թէ մի քառորդ ժամ չափ նշանակութիւն կամ ազդեցութիւն ունին։ Շատ անգամ այդպիսի մարդիկը արդէն բաղդաւորութեան բարօրութեան մէջ են, լաւ ու պատուաւոր հանգամանքի մէջ են, իրանց օգուտ բերող գործունէութեան շրջան ունին, բայց դարձեալ իրանց համար հնարաւոր հազարաւոր հոգսեր, նեղութիւններ, տանջանքներ, որ ամենևին պիտի չունենային, որոնց մասին տեղեկութիւն անգամ պիտի չունենային։

Մի լրտեսի նման ինքդ քեզ վերայ նայիր։ արդեօք շատ անգամ այս անմիտ սխալները դու ևս արած չե՞ս։ Մի մի անգամ ամենանչիմն կարծիքներովդ քեզ սաստիկ տանջած չե՞ս այն պատճառով միայն, որ տխրելու և քեզ ցաւ անելու աւելի կշիռ ունեցող պատճառներ չէիր տեսնում։—Ինչի՞ համար թունաւորումեն դու քո կեանքդ։ Ուրախացիր այն օրուան վերայ, որ Աստուած քեզ պարգևել է, կատարիր քո պարտաւորութիւններդ, մնացածի համար ևս թող որ քո Երկնաւոր Տէրն ինքն հոգս քաշէ։ Տխրութեան օրերն ևս մի ժամանակ կգան, քեզ կգտնեն, առանց քո դէպի քեզ կանչելուդ։

Մի մի մարդ դժգոհ է իւր ներկայ դրութենից, թէև իսկը որ նայես, իւր այդ դրութիւնը ուրիշ կողմից իւր ամենայն ջանքի նպատակն էր։ Դու այժմեան դրութենից գոհ չես, կամենում ես փոխուիլ, պարձեալ սաստիկ կցանկաս մի ուրիշ դրութեան մէջ լինել, խելքդ միտքդ այդ բանին ես տուել։ Բայց հաստատ գիտե՞ս, որ դու, երբ որ մտքումդ դրած բանին կհասնիս, նորից քեզ խաբված չես տեսնի, և գարձեալ չես փափագի ամենայն սրտով լինել առաջուան դրութեանդ մէջ, որ այժմ բանի տեղ չես դնում։ Այս է մեր յաւիտականից մտքով ունեցած ակնկալութիւնների սովորական պտուղը, որ մենք կքաղենք մեր ունեցած չափազանց ու անխոհեմ ցանկութիւններից։ Շատ ու շատ անգամ մոռանումենք մենք, որ ամեն մի վիճակ, կամ դրութիւն, ամեն մի օր, ինչպէս Փրկիչն մեր ասում է, իւր չարն ու չարչարանքն ունի։ Մենք մոռանումենք, որ մարդիս բաղդաւորութիւնը երբէք դուրսի հանգամանքներից չէ, այլ առաջ իւր մէջն պէտք է ունենայ։ Ով որ իւր սրտում գժգոհութիւն ունի, իւր սրտում բաւական չէ իւր վիճակից, դուրսը ոչ մի տեղ բաւականութիւն գտնել չէ կարող, որ գոհ, ուրախ, բաղդաւոր իրան համարի։ Այսպիսի դրութեանդ ճարն այն է, որ դու ներկայի լաւ կողմն առնես ու նորանից շահիս, այսինքն է ինչպէս պէտք է փոխուիս, այն ժամանակ քո դուրսի աշխարհն ևս կփոխուի։ Կառավարվող բնութիւն, գոնէ վարմունք ունեցիր, բարեկամներ կունենաս, համեստ եղիր, թշնամիներ չես ունենայ։ Քիչով բաւականացող եղիր, բաւական հարուստ կլինիս, օգտակար կերպով գործունեայ եղիր, ոչ մի պակասութիւն, կարօտութիւն չես ունենայ։ Մեր դրութիւնը վատ է, կասեն ու գանգատ կանեն սովորաբար չբաւականացող ու գժգոհ մար-

պիկը, նոցա վիճակի այդ վատութիւնը շատ սակաւ կպատահի, որ նոցա արտաքին դրութենից լինի, այլ նոցա իսկ ունայնասիրութենից, կամ ծուլութենից, իրանց ընչասիրութենից, կամ սիրտները լաւ ապրել կամենալուց, իրանց ինքնահաճոյ կամակորութենից, կոշտութենից, հպարտ բնութենից, իրանց ուրիշների վերայ իշխանութիւն բանեցնել սիրելուց, կամ շիտակ ու պատուաւոր մարդ չլինելուց։ Սորա համար ասպէզ քահանայ ոչ Աստուծոյն յանձնվելը ամեն հոգսերէն մեզ աղատ կպահի։

Ա՛խ, շատ հոգսերից ազատ կմնայ մարդս, երբ որ միշտ առաջուանից ամեն կողմից լաւ մտածէ ու իրան պարզէ այն բանը, ինչին որ մտքում դրել է հասնելու։ Երբ որ ինքն լաւ հասկանայ պարզ կերպով թէ ի՞նչ բանի մէջն է այն բաղդաւորութիւնը, որին ցանկանում։ Իւր սրտի ցանկացածը ունենալը յիրաւի՞ ցանկալի է արդեօք նոյնպէս և իւր քրիստոնէական պարտաւորութիւնները կատարելու համար։ Եւ երբ որ պատասխանը լինի թէ այո՛, այն ժամանակ պէտք է մտածէ մարդս, թէ ի՛նչ կարօղ է ինքն անել իւր ձեռքից և ոյժից եկածի չափ, որ հասնի սրտի ցանկութեանն, որ իւր կամեցածն ձեռք բերէ։

Այս մեծ կշիռ ու արժէք ունեցող հարցերը քրիստոնեան իւր առաջը պէտք է դնէ ամեն մի նոր գործի կպչելուց առաջ։ Իւր ընդունած պատասխանից շատ բան կպարզվի իւր ապագայի համար։ Աւելի մխիթարված, հանգիստ ու քաջ սրտով ու հաստատ կամքով գործի կկպչի ու կաշխատի, ինչպէս որ պէտք է, երբ որ և քանի որ աւելի յայտնի է իրան թէ բարի յաջողութիւն ունենալու համար դլխաւոր բանն իւր աշխատասիրութիւնն է, որից կախումն ունի իւր սկսած գործի լաւ կերպով դլուխ գալը։ Աւելի ղդայ կերպով գործին ձեռք կտայ, չափազանց յոյսեր չի կապի, սիրտն առաջուանից հանգիստ կլինէ, արդէն առաջուց մտքիցն անց կացնելով, որ իւր մտքում դրածները կարօղ են ամենևին չյաջողիլ ու բոլորովին ձախ դնայ բանը, որչափ որ աւելի պարզ կհասկանայ, թէ իւր բռնած գործի մէջ յաջողութիւնը կէսի չափովը իւր ոյժի վերայ չէ, այլ հանդամանքներից է, որ առաջուանից իմանալ կարելի չէ թէ ի՛նչ կբերեն։ Ուրեմն նա կանէ այն, ինչ որ իւր պարտաւորութիւնն է անելու մի նպատակին հասնելու համար, բայց միւս ամեն բանի մէջ իւր յոյսն ու վստահութիւնն Աստուծոյ վերայ կդնէ։ Խաղղ ու պատահմունքի վերայ յոյս դնելով սկսած մեծ ձեռնարկի համար ոչ ոք չէ կարող վստահ և անկասկած կերպով դուշակել թէ խաղի վերջը այսպէս կամ այնպէս կլինի։ Եթէ որ հետևանքը լաւ դուրս եկաւ, քո բաղդից և քո ցանկութենից աւելի եղաւ, ընդունիր այն իբրև սիրոյ պարգև, քո Ստեղծողից ձեռքից, որովհետև քո կողմից ամենաքիչ բանը միայն կարող էիր անել այդ դործում։ Իսկ եթէ քո յոյսդ դատարկ դուրս գայ — այն ժամանակ ևս քեզ համար լաւ է ու վատ չէ այն կողմից, որ դու մտքիցդ արդէն անց էիր կացրել, որ բանը կարող էր վատ դուրս գալ, պատրաստված էիր նաև պատահելու ձախորդութեանը։ Ուրեմն քո վճռի մի առանձին վնաս

կամ վտանգ չբերից այդ անյաջողութիւնը։ Աստուածուն շնորհակալ եղիր ու փառք տուր, որ թոյլ չտուեց այն լինի, ինչ որ քո վրկութեանը համար իրօք բարի ու շահաւէտ չէր։ Կամ թէ դու քո լաւ կեանք ունենալուդ համար ծուռ և սխալ ճանապարհ էիր բռնել, դորա համար արգելքները եկան այն ճանապարհին փակեցին։ Բայց մի՛ ատեր հանգամանքները, և ոչ այն մարդիկներին, որոնք քեզ արգելք եղան քո նպատակիդ հասնելու. վասն զի նոքա Աստուծու ձեռքին գործիքներ էին քո լաւութեանդ քո բարուդ համար։ Եթէ որ նոցա ատելու լինիս, քո երկնաւոր Հօրդ իմաստութեանը նախատինք բերած կլինիս։ Եթէ որ քո ձախ գնացած մի մտադրութեանդ ու գործիդ համար սրտիդդ արիւն ևս գնալու լինի, այն ժամանակ ևս դու ասա, թէ ինձ բարի եղաւ, վասն զի Աստուած այսպէս կամեցաւ, այսպէս առաջնորդեց։

Եւ ինչ որ փոխել կարելի չէ, եղածը եղած է, այլ ևս վերան մի՛ մտածեր։ Եթէ որ երկիւղ ընկնի վերադ այն բաների համար, որ դու Աստուծու արածը պէտք է ճանաչես. որովհետև դու չես տէրը և քո իշխանութեանդ տակը չէին, իմացիր, որ այդ երկիւղդ քեզ կթուլացնէ, այժիդդ ու գործ կատարելու վստահութենիդդ քեզ կզրկէ, որով այս աշխարհիս Աստուծու կողմանէ քո վերադ դրած մարդկային պարտականութիւններդ կատարել չես կարողանայ։ Ունայն բան է, ինչպէս որ եղած բանին համար չկարողանալ ինքն իրան մխիթարել, անդադար միտք անելով ինքն իրան ուտելը, նոյնպէս և ինքն իրան նեղացնելը միտք անելով այն բաներին համար, որ կարելի է լինին, պատահին, բայց նշանները չկան ու կարելի է ամենևին պատահելու ևս չեն։ Այժմ չիշած երկրորդ տեսակ իրանց մըտքից բաներ շինելով հոգս անող մարդիկը, աչքին ղարհուրելի բաներ երևեցող մարդի են նման, որովհետև նորա աչքին երևեցածը, կամ մտքի առաջն եկածը աւելի մեծ անբաղտութիւն է, քան թէ իսկական անբաղտութիւնը, որից մարդս վախ է քաշում։

Արդարև հոգսը, որ մի մահկանացու մարդի սրտի մէջ մտել է, կնմանի մի նետի, որ ատամներ ունի։ Արդէն հանել ևս մարմնի մէջը մտած ու վիրաւորված տեղից, վէրքը դարձեալ այրվում շարունակ։ Այնպիսի անբաղտ մարդիկ կճանաչեմ, որ հոգս անելով, հոգս անելով, սրտները բոլորովին կոտրվել է, կեանքը ամենևին աչքներին չէ եկել, և մինչև անգամ այլ ևս չեն կարողացել դարձեալ մարդի կարգ մտնել և մարդկային կեանք անցկացնել, մշտական մի տխրութիւն նոցա սիրտը որդնի նման կրծել է և մինչև այնտեղն է հասել որ այլ ևս սիրտ ամենևին չէ մնացել վերանները և խաւար սրտով մտել են խաւար գերեզման։ Այսպիսի միշտ հոգս անող ու տրտում սրտով իւր օրերը անց կացնող մարդը. եթէ որ այն պատճառով այդպիսի խղճալի կեանք ունի, որ մարմնական տխրութիւն վերան բերող մի տկարութիւն ունի, որից նորա հոգսն ու տխրութիւնը աւելանում, այն է որ այդպիսի մարդը իւր տկարութիւնը քրիստոնէական համբերութեամբ պէտք է տանի իբրև Աստուծուց վերան եկած բան. իսկ

եթէ հոգստուԹիւնն ու տխրուԹիւնը Թոյլ ու վախկոտ սրտով մարդ լինելուցն է, յուսալի է, որ այդ ողորմելի դրուԹենիցն կազատվի, միշտ այդպէս չի մնալ։ Մարդիս սիրտը ոչ մի ժամանակ այնքան չի հեւանալ Աստուծուց, որ այլ ևս բարեպաշտուԹեան զգացմունքը իւր միտք չընկնէն, այն սուրբ զգացմունքը, որոնց մէջ մի ժամանակ իրան երջանկուԹիւն էր գտնում, որովհետև այն զգացմունքովն արդարև երջանիկ էր։ Մինչև անգամ անհաւատ մարդը իւր բոլորովին գրեԹէ քարացած սրտովն այնպիսի րոպէներ ունի, որ յուսահատուԹենից յաղԹահարված և իւր անարժանուԹիւնը զգալով, ամենակարող Աստուծու առաջին ծունր է խոնարհեցնում և իւր սևացած սրտին միԹիԹարուԹիւն խնդրում։ Այն ժամանակ պատահումէ այն բանը, որ նորա հոգու գիշերուան խոր խաւարի մէջ մի մի լուսի նշոյլ է ընկնում, որ լուսաւորելով ցոյց է տալիս նորան դէպ ի իւր երկնաւոր Հայր յետ դառնալու։ Ճանապարհը, վեր կաց տեղիցդ, այ դու երկար ժամանակ տխրուԹեան ու թշուառուԹեան մէջ Թաղված ողորմելի մարդ. գնա դարձեալ այս ճանապարհը, յոյսդ Աստուծուդ վերայ դրած, և դու կհասկանաս, որ քո հոգսերդ այնպէս կհեռանան, կկորչեն, ինչպէս որ մութ ամպերը կցրուին, երբ որ զօրաւոր ու պայծառ արեգակը կերևի։

Լաւ կարող ես դու, ով վախկոտ ու Թոյլ սրտով մարդ, լաւ կարող ես աղաւթել քո հոգսերիցդ քո կեանքդ սևացնող մտատանջուԹենիցդ։ Մի այն ԹԷ Փրկչի իմաստուն կերպով կեանք վարելու համար քեզ տուած պատուէրի ուղեցոյցը քո մտածմունքիդ հոգին արա քեզ համար, որ Հ. ՈՒղիդ անել և Ապրածդ քեզ յոյս ու վստահուԹիւնը դնել։ Դու նեղլոյծ մէջ քո պարտաւորուԹիւնդ կատարիր, Աստուած ապագան իմաստուն կերպով կկառավարէ. Իւր ձեռքն է։ Այն ժամանակ յիրաւի չես հարցնի ԹԷ ի՞նչ յոյս ունենամ, ի՞նչպէս պիտի լինի իմ վերջս. որովհետև դու կհաւատաս բոլորովին, որ Աստուած է քեզ համար ամենայն բան հոգացողը ապագային մէջ ևս, և այդ քո հաւատիդ մէջն է այն յոյսը, որ երբէք մարդիս չի խաբի։

Հոգսերի մէջ ընկած հայր, հոգսերից տարակուսած մայր, սիրտդ դող է ընկնում քո զաւակիդ մասին, երբ որ մտածումես ԹԷ ի՞նչ կլինի նորա վիճակը այն ժամանակ, որ այլ ևս քո աչքդ նորա վերայ չի լինի, ինչպէս, կլինի նորա դրուԹիւնը, ով նորան տէրուԹիւն կանէ։ Ո՛վ հայր ով մայր ՈՒղիդ անելը և Ապրածդ ապահովելը ձեր դժոխ լինի, ձեզ զօրուԹիւն ու կարողուԹիւն տայ։ Քանի որ կենդանի ես, քանի որ աչքդ բաց է, կատարիր քո պարտաւորուԹիւնդ քո զաւակիդ վերայ, չանաչ այնպիսի աղղեցուԹիւն ունենալ նորա վերայ, որ նորա սրտի ու մտքի մէջ տպաւորես առաքինի զգացմունք ու մտածողուԹիւն, պատժիր նորան արած սխալանքներին համար, նորա միտքը ուսմամբ լուսաւորիր. Թող վարժատունների մէջ, Թող գործերի մէջ օգտակար յարմարուԹիւններ ստանայ, այն ժամանակ ուղիղ ճանապարհ բռնած կլինիս, այն ժամանակ ինչ որ ուղիղն է, այն

արած կլինիս։ Մնացածը բոլորը Աստուծու բանն է։ Կարծո՞ւմ ես որ նա քեզանից պակաս հոգս կ'քաշէ քո զաւակիդ համար։ Քո զաւակդ Աստուծու զաւակն ևս չէ՞ մի։

Հալածանք կրող քրիստոնեայ, ինչի՞ համար ես քո սիրտդ վախ ձգում այն պատճառով, որ քո թշնամիներդ քեզ չարութիւն կարող են անել։ Եթէ որ դու, ինչ որ աղնիւ բան է, այն ես արել, ինչի՞ համար ես դողում այն մարդիկներից, որ Աստուծու ձեռքն են, Նորա իշխանութեան տակն են։ Եթէ Աստուած քո կողմն է, ո՞վ կարող է քեզ հակառակ լինել։ Մաքուր լինի թող քո սիրտդ, ուղիղ լինի խղճմտանքդ, և դու քո թշնամիներիդ առաջը դուրս կգաս իրանց յաղթող մարդի սրտի ազնիւ հանգստութեամբ, այն մարդի, որից ամենայն բան խլել կարելի է, բայց իւր վսեմ անմեղութիւնը ոչ մի ժամանակ։ Նոքա ինչի՞ են քեզ հալածում, նոցա մի վատութիւն արած ունի՞ս։ Չէ, բայց Աստուած նոցա ուղարկում է քո դէմդ, որ դարձեալ ուղիղ ճանապարհի բերէ քեզ։ Դու զգուէս, դու հասկանուս, որ այդ քո կրքոտութեանդ պատիժն է, որ ստանում ես, դու դարձեալ սկսում ես հաւատալ, որ աշխարհիս մէջ մի բարոյական կարգ ու կանոն կայ։ Այժմ ճանապարհիցդ յետ դարձիր։ Այս րոպէից սկսած դարձեալ ուղիղ ճանապարհը բռնիր, ուղիղն արա և առաքինութեան երջանիկ անող հետևանքներն դարձեալ կտեսնես ու կզգաս։ Արա, ինչ որ ուղիղն ու օրինաւորն է, և խղճմտանքով կատարած պարտաւորութեանդ առաջին ներգործութիւնը քո վերայ այն կլինի, որ նորից յոյս ու վստահութիւն կունենաս քո Աստուծուդ վերայ։ Աստուած քեզ կազատէ։ Մինչև քո պատիժը դադարի անդամ քեզ համար ազատութիւն, փրկութիւն է։

Ո՛վ իմ Փրկիչ, ով իմ աստուածային Խորհրդատու, ես քո երկնային խօսքերիդ խորհն ու երջանկացնող միտքը հասկացայ։ Իմ սիրտս լցված է հրճվեցնող հանգստութեամբ։ Այլ ևս ոչ մի թշնամուց ահ չունիմ. այլ ևս սիրտս դող չի ընկնի ձախորդութենից։ Ո՛վ ողորմած Հայր, քո ամենակարող ձեռիդ են թէ իմ թշնամիներս և թէ իմ անյաջողութիւնները։ Յոյս ու վստահութիւնս բոլորովին քեզ վերայ եմ դրել հանգիստ սրտով։ Արա ինչ որ ինձ համար լաւ ու բարի կհամարիս, ես մխիթարված սրտով հանդարտ ու հանգիստ կմնամ ու այլ ևս չեմ յուսահատի։ Եթէ մի օր, մի ժամանակ դարձեալ նոր ու ծանր ժամերի հանդիպիմ, թող հնչէ երկնքից հեղիկ ու հանդարտիկ հոգու մէջ իրրև մխիթարութեան աւետիք Փրկչիս խօսքը թէ՝ «Վախենաս, բայց դէմն հաւատա»։

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

ՄԵՌԱՒ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

Գիշեր էր, փողոցներում լուսիւն կարիբէր, թատրոններ և սրճանոցներ արդէն փակված էին։ Լապտերի լոյսով կարելի էր նշմարել երբեմն բժշկի եաև գնացող մարդին և երբեմն արբած մարդին, որ կվինտռէր իւր բնակարանը և երբեմն վախկոտ կնոջ հանդարտ տունը մտնելիս։ Քաղաքի վերայ եղած անլուսին մուխ երկինքը չէր հրապուրում խեղճ մարդիկների հայեացքը, որոնք ականջներ ցցած կնայէին այս և այն կողմ, որ հեռուից լսեն ոստիկան պաշտօնեայի ոտի ձայնը։

Ոստիկան պաշտօնեայն դարձաւ դէպի մի նեղ փողոց—, ուր իւրաքանչիւր տունը մրջնանոցի նման լցված էր խեղճ աշխատաւորներով։ Նա ուշադրութեամբ կղննէ այս տները, որոնց բնակիչները խոր քնի մէջ ընկղմած էին, բայց ահա ներքևից նա կտեսնէ կարմիր լոյսը և ծխի հոսանքը և առանց ժամանակ կորցնելու նա շուտով բարձր ձայնով կչմացնէ և նշան կտայ հրդեհի մասին և յետոյ լուսամուտները և դռները բաղխելով կզարթեցնէ անհոգ բնակիչներին։ Սոցանից երկուսը զարթնելով և տեսնելով հրդեհը իսկոյն կօգնեն ոստիկան պաշտօնեային զարթեցնելու միւսներին։ Քիչ ժամանակից յետոյ մարդիկ կանայք և կիսամերկ մանուկներ մէկ միւսի եաևից սանդուղքից կիջնեն աղաղակելով. «Հրդեհ» «Հրդեհ»։

Ահա լուսամուտը ճեղքվեցաւ և դուրս կգար նորա մէջից ամպի նման մուխ, և կրակը գնալով կշատանար և վերջապէս ահագին կայծեր արձակելով պատեց սանդուղքի շուրջը։

Վերին լուսամուտների մէկի մէջից մի սարսափած կին իւր որդու հետ միասին երևեցաւ, բոլորովին աղատութեան յոյսը կորցրած։ Զանգակները կհընչէին ամեն տեղ, երբ հրդեհաշէջներ օգնութեան հասան, և ժողովուրդը շուտով ժողովվելով այս և այն կողմից կշտապէին սանդուղք դնել։

Հրդեհաշէջներից մի քանի երիտասարդ տեսնելով խեղճ կնոջը մանուկի հետ լուսամտի վերայ կանդնած, իսկոյն իւր գլխի սաղաւարտը ուղղելով և կացինը ձեռքն առած կբարձրանայ սանդուղքի վերայով աղաղակելով. «Հեռացէք այնտեղ ներքև», կշարժէր այս և այն կողմը կացինն, և փողոցի վերայ կընկնէին ապակու և փայտի կտորները. իսկ ժողովուրդը աչք չէր հեռացնում նորա փայլուն սաղաւարտից և կացինը շարժող ձեռքից։ Նա իսկոյն կնստեցնէ իւր ուսի վերայ մանուկին և նորա մօրը և կիջնէ ներքև, իսկ ժողովուրդը նորան կքաջալերէր «կեցցէ» ասելով ամեն մի քայլում։ Բայց հաղիւ թէ ներքև էր հասած, երբ տեսաւ նա որ կոտրված լուսամտի մէջից մի մարդ կհամնայ ինքն իրան ձգել ներքև, շտապով սանդուղք կմօտեցնէ, նորան կիջեցնէ, իսկ ինքն լուսամտից ներս մտնելով, կտեսնէ այրված տախտակամածի վերայ ուշաթափ ընկած կնոջը, ուստի շուտով նորան իւր ուսի վերայ զրած կիջնէր ներքև։ Ա՛յնու ամենայնիւ կրակի հետ պատերազմ դարձեալ չվերջացաւ. երրորդ անգամ կբարձրանայ այս քաջ երիտասարդը և

կիջնէ ազատելով մի մարդին, որն ասաց Նորան Թէ դնա ևս մնացած կան այնտեղ սենեակի մէջ շատ մարդիկ։ Ա՛յս բանը լսելուն պէս Նա չորրորդ անգամ ևս կրաձրանայ և յանկարծ կանհետանայ լուսամտից դիմաց մէջ և կսկսէ խարխափելով որոնել ուշաթափ ընկածներին և ծխից թմրածներին։ «Դարձեալ մէկ» աղաղակեց երիտասարդը բարձր ձայնով, քարշելով դժուարութեամբ թուլացած մարդին, իսկ ինքն յոգնածութենից, շղթից և ծխից տատանվելով, կինդրէր Նորան ժողովուրդը որ կամացուկ իջնէ սանդուղքից։ Բայց այս դիւցազն յանկարծ ուշքից գնալով կթուլանայ և կընկնի շնչասպառ, վեց հոգուն աղատելուց յետոյ։ Աղգականները և բարեկամները ուրախութեամբ կորոնէին իւրեանց բարեկամին, բայց Նա արդէն մեռած էր, Նորան կշրջապատէր լաց ու կոծ անող ժողովուրդը։ Միւս օրը այս երևելի անցքի լուրը քաղաքի մէջ տարածվեցաւ և ամենքի սիրտը շարժեց։

Շատ հասկանալի է որ բոլորն ևս փութացին Նորա ընտանիքի դրութիւնը թեթևացնելու համար։ Ա՛յս դիւցազնի դագաղի ետևից կերթար բազմաթիւ ժողովուրդ պատուելով Նորա սուրբ յիշատակը որ անձնազոհ եղաւ իւր մերձաւորների համար։

Սակայն ո՛րքան անհասկանալի է մարդկների անտարբերութիւնը դէպի Նա։ Որը մեռաւ նոցա համար աւելի ծանր մահով պարգևելով նոցա այս աշխարհի անդաւոր կեանքից աւելի մեծ բարութիւնը։—Աստուծու որդին թաղնելով երկնային փառք ու պատիւ եկաւ երկրիս վերայ կատարելու Նորա սուրբ կամքը։ Փրկիչն ամենից առաջ իբրև մի մանուկ ամեն տեսակ չարչարանք ու զրկողութիւն կրեց, որոնց առհասարակ ենթարկված է մարդկային բնութիւնը։

Տասն և երկու տարեկան եղած միջոցին ծնողները Նորան կգտնեն տաճարի մէջ վարդապետների մօտ նստած, որ կլսէր նոցա ասածները և հարցմունքներ կառաջարկէր։ Բոլոր նորան ունկնդիրներ կզարմանային Նորա իմաստութեան և տուած պատասխանների վերայ։ Ցիսուս, ինչպէս որ կասէ Ղուկաս աւետարանիչ, կզարգանար իմաստութեամբ, հասակով, աստուածային և մարդկային շնորհներով։ Փրկիչը լինելով Աստուծու որդի, կաշխատէր ինչպէս մարդի որդի, իւր սեփական ձեռներով ճարել հանապազօրեայ հաց, մնալով միշտ հլու և հնազանդ իւր ծնօղներին, և ահա այսպիսի իաղաղ և անդորր կեանք կանցուցանէր Փրկիչն աշխարհիս վերայ, առանց խնդրելու մարդկներից ամենևին ոչ փառք և ոչ դովասանք։ Նորա ուրեմն ամենամեայ ամենօրեայ աշխատանքը ամենաճարտար կերպով կյայտնէ Նորա անձնանուէր սէրը։ Բայց արդեօք ո՞վ կմտածէ այս մասին, Որի՞ սիրտը կդոհանայ Նորանից, որ այնքան տարիներ համբերութեամբ անցուց իբրև խոնարհ մարդ։ Մի՛այն շատ քիչեր կգտնվին Նորան սիրողներ և Նորա շաւղին հետևողներ։ Մարդկների մեծ մասը բաւականանալով Նորանով միայն, որ նոքա արդէն վաղուց գիտեն Նորա կեանքի աւետարանական պատմութիւնը, կարհամարհեն Նորան չլսելով Փրկչի ասածին, որ կասէ. «բոլոր այն ճանապարհով գնացող անձեր, նայեցէք և տեսէք կայ արդեօք ինձ նման վիշտ կրող»։

Կանգնեցէք մի վայրկեան Նորա բարեկամ Ղազարոսի գերեզմանի մօտ և տեսէք, թէ ինչպէ՞ս Աստուծու որդին կ'թափէ դառն արտասուքներ Նորա համար։ Լսեցէք աստուածային բանի զօրութիւնը. «Ղազարէ, եկ արտաքս»։ տեսէք ինչպէս կ'հնազանդեն Նորան մահ և գերեզման, որոնք չեն կարողանում պահել իւրեանց մէջ որսը։

Սարսափելի պատերազմ վարեց մեղքի և դժոխքի դէմ, և երբ Նորա աշխարհից վերանալու ժամանակ մօտեցել էր, կամեցաւ դնալ Երուսաղէմ։ Նայեցէք Փրկչի չարչարանքի սուրբ պատկերին, ինչպէս նա չէ ցոյց տալիս բարկութեան որ և է նշան, այլ ընդհակառակն մեղաւորների տուած ամեն տեսակ չարչարանքներին և նախատինքներին համբերութեամբ կատնի։ Նայեցէք Ցիսուսի վերայ, որ ծախված է մի սարկի գնով և իբրև մեղապարտ ի մահ դատապարտված, ինչպէս կանցնի նա իրան ծաղրող ղենուորների և կատաղի ժողովրդի մէջից։ «Սա է Աստուծու գառն»։ Ահա Նա կը մեռնի խաչի վերայ իրան չընդունող աշխարհի համար։

Լսեցէք աւազակին փրկող Նորա խօսքերը, որոնք կաւետեն տարակուսած տիեզերքին. «ամենայն ինչ կատարեալ է»։ Նա պղտիկ խոնարհեցրեց գէպի իւր ստեղծված և արիւնով ներկված գետինը և աւանդեց հոգին։ Բայց ո՛վ կմտածէ մեղաւորների բարեկամ Աստուծու որդուն Ցիսուսի վերայ, որը իւր չարչարանքներով սովորեցրեց մեզ համբերութիւն ու հնազանդութիւն, և իբրև յանցաւոր դատվեցաւ մարդկային ազգը յաւիտեան փրկելու համար։

Ո՞վ կմտածէ արդեօք Նորա կեանքի և մահի մէջ երևեցող սէրի այս մեծ գաղտնիքի վերայ, որի մէջ կփափագեն թափանցել հրեշտակները։ Ո՞վ կարողանէ ճանաչել Նորան, որին ճանաչելը յաւիտենական կեանք է։

Ս. Տ. Գ.

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ։

Ներկայ գիտնական հետազօտութիւնը կպատկանի Պետերբուրգի համալսարանի Հայկաբանութեան պրօֆէսսօր մեծ. պ. Պատկանեանին և տպված էր ռուսերէն «Արգային լուսաւորութեան նախարարութեան օրագրում»։ Կ'յուսանք յօժարութեամբ և հարցասիրութեամբ պիտի կարդան մեր ընթերցողներն այս յօդուածը, ծանօթանալով գիտնական պրօֆէսսորի նոր հայեացքների հետ մեր պատմութեան վերայ։ Խմբ։

Քրիստոսից VIII — VII դար առաջ Հայաստանի հնագոյն պատմութիւնը մեզ ամենևին յայտնի չէ։ Այն ժամանակի պատմութեան վերաբերեալ ոչ մի աւանդութիւն չէ պահված ոչ նոյն ինքն Հայերի և ոչ դրացի ազգերի մէջ։ Աստուածաշնչի պատմութիւնը Եդեմական դրախտի և այն սարի մասին, որի վերայ կանգնեցաւ Նոյի տապանը, կվերաբերվի գլխաւորապէս աւելի երկրի աշխարհագրութեանը քան թէ նորա պատմութեան։ Մենք

չենք իմանում մինչև այժմ թէ ի՞նչ տեսակ ժողովուրդ բնակեց Հայաստանում և ի՞նչ է արած։ Կտեսիոս (Փիոդոր. II, 1) կ՚իշատակէ Նինոսի ժամանակակից Հայկական Բարշանէս թագաւորի մասին, բայց այս պատմութիւնը, ինչպէս նաև բոլոր Ասորեստանին, չինծու է։ Մեզ ին վերջին ժամանակը կարողացանք ծանօթանալ Քրիստոսի X — V դար առաջ եղած Հայաստանի անցքերի հետ, այն էլ Ասորեստանի յիշատակարանների և պարսկական սեպագրերի շնորհով, որոնք շատ հեշտութեամբ կկարդացվին նոր ժամանակներս։

Բայց որպէս զի սեպաձև տառերով գրված պատմութեան ցոյց տուած ծառայութիւնները գնահատենք, ամենից առաջ հարկաւոր է քննել թէ Հայաստանի հին պատմութիւնը մինչև նոր ժամանակը ի՞նչ դրութեան մէջ կգտնվէր, և որքա՞ն կարելի է հիմնվել մինչ ցայսօր Հայաստանի պատմութիւն համարված աւանդութիւնների վերայ։

Ի նկատի ունենալով Հայաստանի աշխարհագրական դիրքը, մենք կարօղ ենք համարձակ ասել, որ նա բնակութեան որորան էր դարձած ամենահին ժամանակներում։ Արիական ցեղի մի ճիւղի անցնելը դէպի Եվրօպայ եղաւ Հայաստանի միջով, և արիական առաջին գաղթականները, որոնք դէպի արևմուտք պիտի գնային, Հայաստանում բնակած պիտի լինէին, եթէ նոքա լեռները և հովիտները բռնած չլինէին բնիկները։ Արդէն Հայաստանի բարձրաւանդակները բռնելուց յետոյ, հետևեալ գաղթականութիւնները կարօղ էին միայն առ միայն անցնել Փոքր Ասիա, չկարօղանալով դէմ կենալ նորեկներին, և տալով աստիճանաբար նոցա տեղ, իւրեանք կգնային աւելի դէպի արևմուտք ոչնչացնելով հարաւային Եվրօպայի հին բնակիչներին։

Թեսալիայում, Թրակիայում և Յունաստանում եղած շատ յատուկ անունների մի և նոյն լինելը Հայաստանի մէջ եղած յատուկ անունների հետ կարօղ է ապացոյց լինել, որ այս երկիրների բնակիչները որ և իցէ ժամանակ կամ Հայաստանում են բնակած և կամ թէ նորա միջով են անցած։ Հին Յոյները յատուկ անունների նմանութենից հակառակ եզրակացութիւն արին Հայաստանի բնակիչների մասին ասելով թէ Հայաստանը գաղթականութիւն եկած է արևմուտքից և մինչև անգամ Հայաստանն իւր անունը ստացած է առասպելական Յասոնի ընկեր Արմենոսից, որ ծնված էր Թեսալիայի Արմենոս քաղաքում (Ստրաբ. XI, 530)։

Միւս կողմից, սուրբ գրքում շատ տեղ ցոյց է տուած այն որ եթէ ոչ բոլոր սեմական ցեղը, գոնէ նորա մի մասի գաղթելու ճանապարհը Հայաստանն էր, որի հարաւային սահմանները Մծբնին կից էին Միջագետքում։ (Renan, hist. des langues sém. եր. 31 և 45)։

Ինչ և իցէ, աներկբայելի է այն, որ Հայաստանը ամենահին ժամանակներ բնակիչներով լցված էր, և գտնվելով հին աշխարհի քաղաքակրթված ազգերի կեդրոնում, արևելեան և արևմտեան ազգերի պատերազմական ասպարէզ էր դարձած։ Հայաստանը իրրև թագաւորութիւն մարդ-

կութեան պատմութեան մէջ մի նշանաւոր դեր չէր կատարում, միայն նորա անունը յայտնի է աշխարհագրական դիրքից, որի մէջ հզօր ազգերն իւրեանց կռիւներն կվճռէին. օրինակ Ասորեստանցիներ, Մարեր, Պարսիկներ, Յոյներ, Հռովմայեցիներ, Պարթեւներ, Արաբներ, Թիւրքեր, Մօնգօլներ, Օսմաններ և Ռուսներ.

Հայաստանը հին ժամանակներում այժմեան Ֆրանսիայի չափ տեղ բռնած լինելով իւր դեղեցիկ աշխարհագրական դիրքով Կասպեան և Սև ծովերի մէջ տեղը, որոնցից նա կըաժանվի միայն լեռնաշղթայով կամ մի կտոր հողով, կներկայանար բնութեան ամենատեսակ բերքերով հարուստ երկիր: Նորա դաշտերը և հովիտները կըաւականացնէին հացով, գինով և իւղով ոչ թէ միայն տեղական բնակիչներին, այլև նորան շրջապատող ազգերին. եռների ստորոտներում կարածվէին ձիերի և ընտանի անասունների դեղեցիկ հօտերը, որոնց արժանաւորութիւնը յայտնի է հին աշխարհին: Նորան ղանազան ուղղութեամբ կտրող սարերը շատ դիւրաւ կպաշտպանէին նորան թշնամիների յարձակմունքից: Եփրատը և Տիգրիսը հաղորդակցութեան ամենահեշտ ճանապարհ կկազմէին Միջագետքի և Պարսկային ծոցի հետ: Հնդկաստանի վաճառականութեան նշանաւոր մասը մինչև վերջին ժամանակներս Հայաստանի միջով կտանէին դէպի Պոնտոս: Ընդհակառակ այս բոլոր արդիւնքներին և երկրի դեղեցիկ դրութեանը, որպիսին չունէր Նախասիայում ոչ մի երկիրը, այնու ամենայնիւ Հայաստանն, որքան յայտնի է, քաղաքակրթված ազգի հայրենիք չէ եղած և նորա բնակիչները համարեա երբէք չեն եղած աշխարհակալ ժողովուրդ և ոչ ևս երկար ժամանակ ունեցել են ինքնուրոյնութիւն: Այդպիսի երևոյթի պատճառը դրացի ազգերի քաղաքական հզօրութիւն համարելը բոլորովին հիմնաւոր չէ: Այս հզօր ազգերը պէտք լինէին զօրեղ, բայց ինչի՞ չափ կարողանային Հայաստանի բնակիչները կազմել մի զօրեղ քաղաքական մարմին: Սորա փոխարէն մենք կտեսնենք Հայերի մշտական կախումն դրացի հզօր ազգերից և միշտ հպատակութիւն օտարներին: Թէև այս հարցի վճռելը չէ վերաբերում մեր յօդուածին, այնու ամենայնիւ կասենք միայն, որ ոչ թէ քաջութեան, արիութեան և հայրենասիրութեան պակասութիւնը կարգելէր Հայերին ահարկու երևիլ դրացի ազգերին և ծաղկեալ դրութիւն ունենալ ի ներքուստ, այլ այն քաղաքական բանականութեան և այն սկզբունքի պակասութիւնը, որոնք հզօր տէրութիւններ կստեղծեն: Արդէն անցել է այն ժամանակից 24 դար, ինչ որ յայտնվել են Հայերը պատմութեան մէջ իւրեանց անունով. ամբողջ ժողովրդից մնացին մինչև անդամ հայրենիքի հողի վերայ հին բնակիչների ցրուած բեկորներ, բայց Հայերը միշտ նոյն մնացին, ինչ որ էին առաջ. այսինքն իւրեանց հայրենական հողի վատ տնտեսներ, օտար ժողովրդին լաւ ծառաներ . . . .

Հայաստանը ինքնուրոյնութեան հաղուագիւտ վայրկեաններում անդամ չէր կազմում կեդրոնական զօրեղ իշխանութիւն ունեցող տէրութիւն: Նա, որքան մեզ յայտնի է, միշտ բաժանված էր բազմաթիւ փոքր ինքնուրոյն իշ-

խանութիւնների և նախարարութիւնների, որոնցից իւրաքանչիւրը կապրեր առանձին։ Այս բաժանմանը բաւական կնպաստեր երկրի ֆիզիքական դրութիւնը. վասն զի նորան զանազան ուղղութեամբ կտրող լեռները կկազմէին բազմաթիւ նահանդներ, որոնցից իւրաքանչիւրի մէջ կապրեր առանձին մի իշխան կամ մի նախարար։ Այս անկասկածելի է, որ կլինէին դէպքեր, որ երբեմն զօրեղ թագաւորներին կամ առաւել հզօր իշխաններին կյաջողվէր վասալներին իւրեանց իշխանութեան տակ ձգել ժամանակաւորապէս և ստիպել նոցա օգնելու արտաքին թշնամիների և անհնազանդ իշխանների դէմ, բայց այս չէր կարող երկար տևել։

Անսաստ վասալները հնար գտնելուն պէս կդաշնէին իւրեանց անմերձենալի ամրոցները և զօրութեամբ զօրութեան դէմ կկենային։ Թագաւորական իշխանութիւնը, երբ գոյութիւն ուներ, այն հաստատուն նշանակութիւնը չուներ ինչպէս որ դրացի ազգերին—Ասորեստանցիներին, Պարսիկներին և ևն։ Այն ժամանակի Հայերը դեռ ևս մի երևելի զօրեղ կեդրոնական իշխանութեան նշանաւորութիւնը ճանաչելու չէին հասած։ Այսպէս էր նաև միջնադարեան Գերմանիայում։ Իւրաքանչիւր իշխանը ոչ թէ իւր անձնական շահերը կծառայեցնէր թագաւորական շահերին, այլև սորա հակառակ, նորա թուլութենից իւր օգուտ կքաղէր։ Իւրաքանչիւր զօրեղ իշխանը անմիջական յարաբերութիւն կունենար դրացի թագաւորութեան հետ, և հակառակ թագաւորական իրաւունքի, կաշխատեր իւր անկախութիւնը ձեռք բերելու համար։

*Նայելով Քսենեփոնտի (Cyroped. III. c. 1) և Մովսէս Խորենացու պահած աւանդութիւններին, մենք կտեսնենք, որ առաջին Աքեմենեանների ժամանակը Հայաստանում կային թագաւորներ։ Այս աւանդութիւնների մէջ պահված է հայկական թագաւոր Տիգրանի և նորա հօր մասին յիշատակարան, բայց թէ արդեօք նոցա իշխանութիւնը անցաւ նոցա յաջորդներին և կամ թէ Աքեմենեանները զրկեցին Հայաստանը հայկազեան գերի թագաւորներից, մենք չգիտենք։ Բիսուտունեան *) արձանագրութենից մեզ յայտնի է, որ Դարեհ մի քանի անգամ դուրս բերից պատերազմական դաշտը իւր զօրքերին, և միայն սաստիկ պատերազմներից յետոյ կարողացաւ կոտրել Հայերի յամառութիւնը։ Այս արձանագրութեան մէջ կյիշվի միայն Հայ ժողովրդի մասին և ոչ թէ նոցա թագաւորի, մինչդեռ մի և նոյն արձանագրութեան մէջ խօսելով միւս ազգերի հետ ունեցած պատերազմների մասին, Դարեհ ամեն անգամ առաջ կբերէ թագաւորի կամ գլխաւոր զօրավարի անունը։ Իւր թագաւորութեան առաջին կէսի պատերազմները համառօտ նկարագրելով այս արձանագրութեան LI յօդուածում **)*

(*) *Բիսուտունեան արձանագրութիւնը անգլիերենից թարգմանված տպվեցաւ Ազգասեր տետրակում № 7 եւ 8, պ. Գօրգեանի աշխատութեամբ։*

(**) *Տես բնագիրը.* Archetypa inscriptionis Behistani, tabula IV, 2, Inscriptiones Palaeo-Persicae, *պրօֆ. Կօսսօվիչի, երես* 36—37։

կիմուէ և կասէ. «Դարեհ Թագաւոր կ'ծանուցանէ, որ ամեն բան կատարեցի Որմիզդի կամքի համաձայն։ Քսան պատերազմ մղեցի ապստամբ Թագաւորներին դէմ։ Որմիզդի կամքով ես ոչնչացրի նոցա զօրքերը և յաղթեցի իւնն Թագաւորին։ Գաումատա անունով մի մոգ կտէր և կասէր.» Ես Կիւրոսի որդի Բարդիա (Սմերդիս) եմ» և իմ դէմ հանեց Պարսկաստանին։ Ատրինա անունով մէկ սուզեցի կտէր ու կասէր. «Ես Սուզիանայի Թագաւոր եմ» և աղմկեց իմ դէմ Սուզիանան։ Բաբելոնացի Նադիտաբիրա անունով մէկը կտէր ու կասէր. «Ես Նաբոնիդայի որդի Նաբուկոդոնոսոր (Նաբուգոդոնոսոր) եմ» և իմ դէմ հանեց Բաբիլոնը։ Մարտիա անունով մի Պարսիկ կտէր ու կասէր, «Ես Սուզիայի Թագաւոր Իմմախս եմ։ Փրաւարտիս անունով մի մարաստանցի կտէր ու կասէր. «ես Ուվախշատրա (Կիաքսարա) ցեղից Կշատրիտա եմ» և աղմկեց Մարաստանը։ Զիտրա-տախմա անունով սագարտիենցի (Asagartiya) կտէր ու կասէր. «ես Կիաքսարի ցեղից Սագարտիայի Թագաւոր եմ և աղմկեց Սագարտիային։ Փրատա անունով մարգիանեցի մէկը կտէր ու կասէր. «ես Մարգիանի Թագաւոր եմ, և աղմկեց Մարգիան։ Վահյազատա անունով մի Պարսիկ կտէր ու կասէր. «ես Կիւրոսի որդի Սմերտիս եմ» և աղմկեց Պարսկաստան։ Արաքա անունով մի Հայ (Արմինիա) կտէր ու կասէր. Ես Նաբոնիտայի որդի Նաբուգոդոնոսոր եմ» և աղմկեց Բաբիլոնը։ Դարեհ Թագաւոր կ'ծանուցանէ. «Ահա այն իւնն Թագաւորները, որոնց ես բռնեցի պատերազմների մէջ»։ Ինչպէս կտեսնէ ընթերցողը, Հայերի մասին ընաւ չէ յիշատակում, որովհետև Արաքա Հայն Բաբելացիների առաջնորդ էր։ Մինչդեռ ԻԶ—Լ յօդուածներում Դարեհ մանրամասն կպատմէ Հայաստանի մէջ արած արշաւանքների մասին, որ ձեռնարկած է Գրաւարտիս աղմկարարի դէմ մեղական արշաւանքի սկզբի և վախճանի միջոցում։ Այս հինգ յօդուածի մէջ կխօսէ Հայերի մասին, բայց մի խօսք չկայ նոցա Թագաւորի վերաբերմամբ։ Շատ հաւանական է որ այն ժամանակը Հայկազեան ցեղի սերունդներ ոչընչացած էին և չկար Հայերի *) մի առանձնապէս նշանաւոր ներկայացուցիչ։

Իշխանութեան անհաստատութեան պատճառով, Հայաստանի որպէս Թագաւորութեան սահմանները նմանապէս չէին կարող հաստատուն մնալ։ Հայկական սերունդները կապրէին ոչ թէ միայն Արարատեան նահանգի մէջ, այլև Հարաւային և արևմտեան նահանգներում, առանց կազմելու հիւսիս-արևմտեան Հայաստանի կեդրոնի բնակիչների հետ քաղաքականապէս սերտ կապված մի մարմին։ Նոքա զանազան կոչմունքով զանազան ազգեր էին համարվում։ Քսենոփոնտը իւր զօրապետի հետ միասին ամբողջ Հայաստան անցնելով կգտնէ նորա մէջ զանազան ազգեր և միայն մէկ տեղ կգտնէ Հայերին։

(*) Թովմաս Արծրունի նայն մասնաւ կխօսի Հայկազն Տիգրանի մահից յետոյ հասած ժամանակի վերաբ., երես 42։

Մի անգամ միայն Հայաստանը կարողացաւ ձեռք բերել զօրեղ միացեալ իշխանութիւն, այն ևս Պարթևների ժամանակը, երբ որ Արշակունիները՝ համարեա առանց պատերազմի նուաճելով Հայաստանը հիմնեցին այնտեղ մի ցեղապետութիւն, որ տևեց մօտ 500 տարի։ 150 տարի Քրիստոսի ծնունդից առաջ սկսված այս ցեղապետութեան առաջին ժամանակում Հայաստանը կկազմէր մի հզօր թագաւորութիւն, և նորա ազդեցութիւնը նկատելի եղաւ, թէ արևելքում Պարսկաստանի մէջ, և թէ արևմուտքում Հռովմայեցիների դէմ եղած պատերազմների մէջ։ Այն ժամանակը Հայաստանի թագաւորութեան սահմանները բաւական պարզ որոշված էին. Կուկասը, Մարաստան, Միջագետքի միջավայրերը, Կապադովկիա, Հալիս գետ։ Մինչև այն ժամանակը իրրև ինքնուրոյն առանձին իշխանութեան տակ ապրող հայկական ցեղերը չունէին ծանօթութիւն միմեանց համապատկերութեան մասին և նորա կոչվում էին ոչ թէ ընդհանուր ազգային անունով, այլ ցեղի կամ նահանգի մասնաւոր անուններով։ Ազգայնութեան միութեան ճանաչողութիւնը միայն այն ժամանակ կերևի, երբ ցեղերը կապող կեդրոնական իշխանութիւնը կզօրանայ, երբ ընդհանուր մատենագրական կամ պաշտօնական լեզու կծնվի և կտարածվի ընդհանուր կրօն և երբ քաղաքական շահերը հասարակաց կլինին։

Խօսելով Հայաստանի հին պատմութեան մասին, նախ պէտք է ծանօթանանք մենք Մովսէս Խորենացու հետ, որ իւր ազգի լիակատար պատմութեան առաջին գրող եղաւ, սկսելով դիւցազնական ժամանակներից և հասցնելով մինչև իւր ժամանակը, այսինքն մինչև հինգերորդ դարը Քրիստոսից յետոյ։ Մովսէսը իւր մականունը ստացաւ Խորէն *) գիւղից Տարօն նահանգում Վանի լճի արևմտակողմ։ Այս պատմչի մանրամասն կենսագրութիւնը մենք չգիտենք։

Իւր շարադրութիւնների մէջ իւր մասին կողմնակի հաղորդած նորա տեղեկութիւններից մեզ յայտնի է, որ Մովսէսն աշակերտ էր Սահակ Հայրապետի և նորա գործակից Մեսրովբ վարդապետի, որ հնարեց կամ աւելի ճիշդ ասած կատարելագործեց հայկական այբ ու բէնը։

Սահակ Հայրապետը, ի նկատի ունենալով հայերէն Աստուածաշնչի ուղղելն վճռեց ուղարկելու մի քանի ուշիմ երիտասարդներին յունական քաղաքներ, որոնք երևելի էին այն ժամանակ իւրեանց բարձրագոյն դպրոցներով, յունական լեզուի մէջ կատարելագործվելու համար։ Այս երիտասարդ անձների մէջ կգտնվէր նաև մեր ապագայ պատմիչ Մովսէս Խորենացին։ Նա ճանապարհորդեց Եգեսիա, Պաղեստին և Աղէքսանդրիա, Եգեսիայում, որ երևելի էր այդ ժամանակը դպրոցներով և մատենադարաններով, երկար չկեցաւ, կամ ինչպէս որ ինքն կասէ «Թևթևակի ընդ խորս

(*) կամ Թէ Խորնի, բայց Խորենացի մականունը կարող էր ծագել Խորէն ձեւից, որովհետեւ երկրորդից պիտի լինէր Խորնեցի։

դիւանին նուիրել»։ Պաղեստինում նա նոյնպէս մնաց շատ քիչ ժամանակ և միայն կարողացաւ երկիրպագանել սուրբ տեղերին և ծանօթանալ այն տեղի զարդացնելի հետ, այն տեղից նա շտապով ուղևորվեցաւ Աղէքսանդրիա իւր ուսման ծարաւը յագեցնելու համար։ Ա յստեղ հելլենական լուսաւորութեան կեդրոնում շատ տարիներ անցկացրեց, սովորելով մի փիլիսոփայի առաջնորդութեամբ, որին նա կանուանէ «Նոր Պղատոն»։ Ա յստեղ ի՞նչով նա պարապեց և ի՞նչ դիտութիւններ ձեռք բերեց, այս մասին քնաւ չէ յիշում։ Շատ հաւանական է, որ նա այնտեղ հմտացաւ յունական լեզուին և հիմնովին ծանօթացաւ Նոր պղատոնական ուսման հետ։ Աղէքսանդրիայում աւարտելով իւր պարապմունքը, նա նաւեց դէպի Եղեզտա, բայց հողմերը նորա նաւը ձգեցին հարաւային Իտալիայի ափերը, այս դէպքից նա օգուտ քաղելով այցելեց Հռոմին։ Ա յստեղից նա ուղևորվեցաւ Աթէնք, ուր ձմեռը անցկացնելով, գարնան սկիզբը ուղևորվեցաւ դէպի իւր հայրենիքը, հասնելով մի քանի ժամանակ Կոստանդնուպօլսում։

Նորա բացակայութեան միջոցին Հայաստանում շատ բան կերպարանափոխ եղաւ։ Խոսրենաքին Մոզեց Հայաստանը Արշակունիների վերջին շառաւիղի թագաւորութեան միջոցին, հայրապետական աթոռի վերայ նստած էր Սահակ Հայրապետը Պարթևական Արշակունիների հրևելի ցեղից։ Վերադառնալով իւր հայրենիքը, նա գտաւ Հայաստանը բոլորովին զրկված անկախութիւնից և պարձած պարսկական մի նահանգ։

Սասանեանները, Արշակունիներին գահընկեց առնելով Պարսկաստանում, չէին կարող գրացի երկրում թոյլ տալ այս ցեղապետութեան*) տիրապետութիւնը։ Առաջիկայ դէպքից օգուտ քաղելով, նորա գահընկեց արին հայկական Թագաւոր Արտաշիրին, և այսպէսով Արշակունիների քաղաքական տէրութեան վերջ տուին։ Պարսկական արքունիք չէր կարող անտարբերութեամբ նայել այն բանին, որ Հայերի գլուխը կանգնած էր Սահակ կաթողիկոսը։ Նա պարսկական նոր արքունիքին կրկնապատիկ անհաճելի էր. նախ ինչպէս Արշակունի, լինելով ցեղակից Պարսկաստանում գահընկեց եղած ցեղապետութեան, մեծ ազդեցութիւն ունէր Հայաստանի մէջ. երկրորդ ինչպէս քրիստոնեայ աւելի համակրելով Բիւզանդիոնին քան Թէ Պարսկաստանին, որտեղ այս միջոցին վերանորոգված էր Զրադաշտի կրօնը, այս պատճառով Սահակ կաթողիկոսն ամենաչնչին բանի համար գահընկեց էր լինում, և Հայկական հայրապետութեան աթոռի վերայ կբազմէին քաղաքական դէմքեր չունեցող անձները։

Ա յսպիսի հանգամանքներում վերադարձաւ Խոսրենացին իւր հայրենիքը բաղմամեայ բացակայութենից յետոյ. առանց բարեկամների ողջոյնը գտնելու նա հանգիստ նախանձաւոր վարդապետների ջարախօսութեան և բամբասանքին։ Նա հրաժարվեցաւ աշխարհային կեանքից, և այս միայնու-

(*) Տես հեղինակի Опытъ Исторіи Династіи Сасанидовъ по свѣдѣніямъ, сообщаемымъ Армянскими писателями. С. П. Б. 1863. Գիրքս այս, էջեր 1—18։

Թեան ժամանակը մոռացված ամենքից կպարապէր իւր սիրելի պարապմունքով — յունական լեզուից թարգմանութիւններ անելով։

Մօտ 460—470 թուին Հայաստանի մարզպան Սահակ Բագրատունին երևելի ցեղից կինդրէ Նորանից գրել Հայաստանի պատմութիւնը։ Խորենացին ուրախութեամբ ընդունեց նորա խնդիրը, և իւր կեանքի վերջին տարիները այս դժուար աշխատանքով անցկացրեց։ Այս պատմութեան շատ տեղերից կերևի որ Խորենացին առանձին առանձին գլուխներ կգրէր և կուղարկէր Սահակ Բագրատունուն, որից կստանար պատասխան որոշ ցուցմունքով։

Ինչպես կերևի, Սահակ Բագրատունին բոլորովին բաւականացած չէր Խորենացու պատմութեան շարայարութենից և շատ անգամ ցանկութիւն կյայտներ, որ հեղինակն աւելի ուշադրութիւն դարձներ ժողովրդական տարրի, հայկական պատմութեան պարսկականին հետ ունեցած կապի և այն աւանդութիւնների իմաստին, որոնք կպտնվէին ժողովրդի մէջ նորա ժամանակը։ Բայց Խորենացին յունական դպրոցներից կատարեալ արհամարհանք ստացած լինելով դէպի ոչ — յունական աղբիւրները, շատ անգամ կասկածաբար կընդունէր այն, ինչ որ յունական մատեաններում չէր կարդացած։ Խորենացու գրած գիրքը մեծ համարմունք կարող էր ունենալ, եթէ նա Սահակի ցոյց տուած ճանապարհով ընթանար, և Հայաստանի պատմութեան վերաբերմամբ ուղարկված հարցերի պատասխաններ գրէր։

Բայց Խորենացին նորան չէ լսում և ներողամտաբար նորան կանուանէ անփորձ և երիտասարդ և կշարունակէ իւր գործը։ Եթէ նա, փոխանակ օգուտ քաղելու անյայտ յունական մանր գրողների (памфлетистъ) ընչին աշխատութիւններից, ուշադրութիւն դարձներ Պարսիկների և Հայերի ժողովրդական ասացուածների վերայ, հատուածներ քաղէր առանց բականանալու միայն դժուարիմաց ակնարկութիւններով, նորա գիրքը ներկայ ժամանակում կարող էր կրկնապատիկ օգուտ տալ և դառնալ մեզ համար անկասկած հետաքրքրական։ Այնու ամենայնիւ անտեղի է տրտընջալ այն բանի վերայ, որը փոխել անկարելի է։ Խորենացին իւր դարի որդի և Աղէքսանդրեան դպրոցի ուսումնական էր և միայն այն կարող էր անել, ինչ որ արաւ։

Ստոյգ պատմիչ այն անցքերի, որոնց նա ականատես էր եղած կամ վկայ, աղնիւ Հայրենասէր Մովսէսը նսեմացրեց իւր արդիւնաւոր աշխատութեան նշանակութիւնը աղբիւրների անքննական ընտրութեամբ և յունական մատեաններին աւելորդ հաւատ ընծայելով։

*Հասնելով Խորենացին խորին ծերութեան կվախճանի հինգերորդ դարի վերջը, և նայելով Թովմաս Արծրունու ասածին, նա ապրել է 120 տարի *)։ Նորա աշխատութիւններից մեզ հասած է մի աննշան մաս, եթէ*

(*) *Այնու ամենայնիւ պէտք չէ սորա վերաբերմամբ հիմնվել Թովմաս Արծրունու համոզման վերայ, որը նոյն երեսում տալիս է Սահակ Կաթուղիկոսին 120 տարի։*

նորա բազմամեայ գործունէութիւնը ի հաշուի առնենք, մանաւանդ յունական լեզուից արած թարգմանութիւնները, այսինքն ա.) Ճարտասանութիւն *), որին կանուանէ նա «Գիրք պիտոյից» Աղէքսանդրեան Թէոնի համաձայն, բ.) Աշխարհագրութեան համառօտ նկարագիրը, ըստ Պաղոմէոսի և Պապպի, գ.) Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց, դ.) Նամակ առ Սահակ Արծրունի, ե.) Ճառ վարդավառի։ Այս բոլորը տպագրած են Մխիթարեանները Վենետիկում 1823 թուին, և հրատարակած են Մովսէս Խորենացու լիակատար մատենագրութեան մէջ։ Նոյնպէս սորա գրած կհամարվին մի քանի աղօթքներ և շարականներ. նոյնպէս սորա թարգմանած կհամարեն Աղէքսանդր Մեծի - Պսեվդօ - Կալիսթենի կենսագրութիւնը և Եւսեբիոս Կեսարացու ժամանակագրութիւնը։ Նորա ամենալաւ աշխատութիւնն է «Պատմութիւն Հայոց», որ բաղկացած էր առաջ չորս գրքից, բայց մեր ձեռք հասածը բաղկացած է երեք գրքից։ Ի նկատի չունենալով այժմ պարապել Խորենացու ամբողջ պատմութեան քննութեամբ, մենք ուշադրութիւն կդարձնենք առաջին գրքի վերայ, որի բովանդակութիւնը մեր աշխատութեան ներկայ և յաջորդ գլուխների նիւթ պիտի լինի։

Խորենացու պատմութիւնը բացի Հայաստանի պատմութեան համար ունեցած նշանակութիւնից, երկար ժամանակ կհամարվէր մի գիրք այնպիսի աղբիւրներից կազմված, որոնք այժմ անդառնալի կերպով անհետացած են, և հետևաբար կբովանդակէր իւր մէջ մատենագրական գլխաւոր ցուցմունք. նա կերպով իմն կարող էր այսպէս համարվել, մինչև որ ներկայ դարի սկզբում գտնվեցաւ Եւսեբիոսի ժամանակագրութեան հայկական թարգմանութիւնը։ Այն ժամանակից հանգամանքները սակաւ ինչ փոխվեցան։ երբ քննութիւնը հետզհետէ խոր թափանցեց Խորենացու շարադրութեան մէջ, կորած աղբիւրների թիւը զգալի կերպով սկսաւ նուազել և ներկայ ժամանակս պատմութեան առաջին գրքում (բացի Մար - Աբաս Կատինայից, որի մասին յետոյ պիտի խօսենք) հազիւ կմնայ երեք կամ չորս հատուած, որոնք դեռ ևս բոլորովին որոշված և պարզված չեն, թէ որտեղից Մովսէս Խորենացին նոցա քաղեց։ Իսկ բոլոր մնացածը, եթէ ուշադրութեամբ կարդանք, մեզ հասած են հին մատենագիրների զանազան հատուածներում և ուրիշ ճանապարհներով, գլխաւորապէս Եւսեբիոսի ժամանակագրութեան մէջ։ Ի նկատի ունենալով հանգամանօրէն խօսել այս մասին մեր ձեռնարկած Խորենացու պատմութեան թարգմանութեան համար քննական ծանօթութիւնների մէջ, մենք միայն թեթև կանցնենք ներկայ յօդուածում այս աղբիւրների մասին (I Գ.), բացատրելով այն թէ արդեօք Մովսէս Խորենացին իսկապէս օգուտ է քաղած այն կորած գրաւոր յիշատակարաններից, որոնց անունները

(*) Նորա աշխատութիւնների մանրամասն նկարագրութիւնը կարելի է գտնել Collection etc. մէջ հ. I, երես 397—987, հ. II, երես 48—52։

նա կ՚յիշատակէ, կամ թէ միայն քաղած է երկրորդական և երրորդական աղբիւրներից, որոնք մինչև ներկայ ժամանակս հասած են։

Խորենացու աղբիւրների մասի կարգում՝ որոնք մեզ համար ունին մի անտերկբայելի կարևորութիւն և պատմական նշանակութիւն, պէտք է հաշուել ժողովրդական աւանդութիւնները և վիպասանական երգերը, որոնց մէջ կերևէր ազգի հայեացքը անցեալի վերայ *)։ Նորա կդանվէին Խորենացու ժամանակը ժողովրդի բերանում։ Բայց աւաղ, որ մեր պատմիչը նոցա հետ այնպէս չվարվեցաւ ինչպէս ինքնուրոյն աղբիւրների հետ։ Նա նոցանից օգուտ է քաղում միայն հարևանցի այն հաստատելու համար, ինչ որ նա կարդացած է գրքերի մէջ։ Շատ սակաւ հատուածներ կբերէ նա նոցանից, բայց շատ անդամ կյիշէ այն երգերի մասին, որ կերգէին նորա ժամանակը բամբիռի **) վերայ (լարեր ունեցող քնար)։

Մովսէս Խորենացին իւր պատմութեան առաջին գրքում կյիշատակէ հետևեալ մատենագիրների աշխատութիւնները։ Քաղդէացի պատմիչ Բերոզի, Աղէքսանդր Պօլիհիստորի, Աբիդենի, Նիկոդիմի, Եպիփան եպիսկոպոսի և դլխաւորապէս Քրիստոսի ծննդից երկու դար առաջ եղած ուսումնական Անտրի Մար-Աբաս Կատինայի պատմական գրուածները։ Խորենացու պատմութեան հետազօտութեամբ պարապող ուսումնականներից շատերը կհամարէին վերոյիշեալ մատենագիրներին Խորենացու անմիջական աղբիւրներ։ Ուրիշները կկասկածեն թէ Խորենացին ունեցած լինէր այս գրուածների իսկական բնագրները։ Մենք վերջին կարծիքի ենք և կաշխատենք արդարացնել մեր հայեացքը համառօտ խօսքերով։

1) Բերոզ, որին կվերաբերեն երկու պատմական գրուածներ «Բաբիլոնիկա և Քաղդէկա», կասեն, Աղէքսանդրի ժամանակակից էր։ Նորա աշխատութիւններից մեզ միայն հասած են փոքրիկ հատուածներ Ասորեստանի և Բաբիլոնի հնութիւնների վերայ։ Խորենացու մէջ Բերոզա անունը (Բիւրոս, Բիւրիոս, գիրք Ա. գլ. Բ. Դ.) կպատահի միայն երկու անգամ և երկու անգամ էս հարևանցի կերպով, այնպէս որ մինչև անդամ նորա չէ կարելի անուանել աղբիւր, որովհետև նորա գրուածներից ոչինչ առաջ չէ բերված։ Շատ հաւականալի է, որ Խորենացին նորա հետ ծանօթացաւ Եւսեբիոսից։ Մեր հեղինակի մէջ երրորդ անդամ կպատահի այս անունը իբրև ածական, երբ նա կխօսէ Բերոզեան Սիբիղայի վերայ, որից նա կքաղէ նախաջրհեղեղեան թագաւորների պատմութիւնը — Ջրուան, Տիտան և Յապետոսթէ։ Բայց նա այտեղ էս ուղղակի չէ քաղում այն գրուածներից, որոնք Քրիստոսի ծննդից երկրորդ դարի կէսում յայտնի եղան Բերոզեան Սիբիղայի պատ-

(*) Տես նմանպէս Ed. Dulaurier—Études sur les chants historiques et les traditions populaires de l'ancienne Arménie. Journ. Asiat. Janvier. 1852։

(**) Տես նմանպէս Petermann—Ueber Moses Chorenensis und die Quellen seiner Geschichte der Armenier. Monatsberichte, 1851, եր. 456–458։

գամախօսների անունով և մասամբ պահված էին մինչև մեր ժամանակը *)։ Այս նորանից կհետևյննինք մենք, որ Սիբիլեան պատգամախօսների գ. գլխում մէջ բերված են միւս անուններ, և նոյն իսկ պատմութիւնը շատ տեղերում կատարելվի Խորենացու հաղորդածից։ Թէև Խորենացին կարող էր ծանօթանալ այս գրուածի հետ Աղէքսանդրիայում, բայց իւր պատմութիւնը գրելու միջոցին նա այն չունէր ձեռքի տակ և միայն օգուտ քաղած է այս գրուածի միւս խմբագրութենից, որ ըստ ամենայն հաւանականութեան կազմվի Մար-Աբաս Կատինայի աշխատութեան մէջ։ վերոյիշվածների փոխանակ Սիբիլեան գրքերում հետևեալ անունները կյիշատակվին։

Եւ կթագաւորէին Կրոնոս, և Տիտան, և Յապետոս։

Նախ այստեղ Զրուանի մասին խօսք չկայ, որի տեղ գրված է Կրոնոս։ Բայց այս փոփոխութիւնը ինքն Խորենացին արած չէ, այլ գտած է այս ձևով հեր աղբիւրի մէջ, որովհետև նա նոյն տեղ կասէ որ «արևելեան երկիրներում Սեմին Զերման կանուանեն» և հետևեալ պլսում կաւելցնէ. «Բայց ես ասեմ զԿրոնոսդ անուն և զԲէլ Նեբրովթ լեալ»։ Մէկ խօսքով նա Կրոնոսին Զրուանի տեղ չէ դնում։ Երկրորդ, նորա առաջ բերած երրորդ անունը Յապետոսին յունական խոպհտոստեի վատ և չհասկացած ընթերցուածն է, այսինքն միւս խմբագրութեան հեղինակը չէր հասկացած յունական մանրիկի միտքը և կպցնելով նորան Յապետոս անունի հետ ստեղծել է մի նոր անուն, որ սխալեցրեց շատ եվրոպական ուսումնականներին **)։ Բայց նոյն ինքն Խորենացին անցկացնելով իւր կեանքի շատ տարիները յունական լուսաւորութեան կեդրոնում, և կատարելագործվելով յունական լեզուի մէջ, այդպիսի խոշոր սխալմունքը չէր կարող անել, եթէ որ նորա մօտ լիներ յունարէն իսկական բնագիրը։ Որ Խորենացին ունեցած է ուրիշ մի խմբագրութիւն, որը Յոյնի շինած չէ և որի մէջ արդէն Յապետոսի ձևը կաղմված էր, կատացուցանվի դէտ ևս նորանով, որ նա այնպէս չէ հաղորդում անունը, ինչպէս որ նա կգտնվի յունականի մէջ մանրիկի հետ կպած, այսինքն ոչ թէ Յապետոսէ, այլ Յապետոսթէ, որ արդէն ոչ մի կերպով չէր կարող անել ոչ թէ միայն Խորենացին, այլ և նորա ընկերներից ոչ մինը, որոնք մանրակրկիտ կերպով կաշխատէին հայկական և յունական այլ ու բնեի տառերը միմեանց յարմարեցնել։ Սուրբ գիրքը հայերէն թարգմանելիս, թէ Խորենացին օգուտ է քաղած Սիբիլեական գրքերի ուրիշ խմբագրութենից, որ գտած է նա Մար-Աբաս Կատինայի

(*) Fr. Lenormant - Essai de commentaire des fragments cosmogoniques de Bérose d'après les textes cunéiformes et les monuments de l'art asiatique. Փարիզ, 1872, եր. 415—420։

(**) Ռեւելինի պրօֆէսօր Պէռերմանն իւ Մինիտրեան միւզեանութենից Ինճիճեանը, որքան մեզ յայտնի է, Յապետոսէ անունի ծագումը որոնողմամբ նաև լինելը բացատրեցին։ Տես Monatsberichte, 1852, երես 413—439։

գրքի մէջ, կհաստատուի նոյնպէս Խորենացու (գլ. Թ) բնագրի մէկ տեղը, ուր Մար-Աբասի գրքի բովանդակութիւնը տալուց յետոյ, կաւելացնէ. «Որոյ սկիզբն լեալ ասէ զԶրուան և զՏիտան և զՅապետոսէ»։ Պարզ յայտնի է որ Խորենացին Յապետոսա անունի այս ձևը իւրացրած է Մար-Աբասի գրքից։ Այս կերպով, մենք կհամոզվենք որ Բերոզին չէ կարելի անուանել Խորենացու աղբիւրը, և թէ Բերոզեան Սիբիլլայի հետ նա ծանօթացած է Մար-Աբասի *) գրքից։

2) Աղէքսանդր Պօլիհիստորի **) անունը միայն մի անգամ կյիշատակէ մեր հեղինակը Բերոզի անունի հետ միասին (գլ. Դ.) և նորա գրուածքից ոչինչ մէջ չէ բերած։ Նորա հետ Խորենացին նոյնպէս ծանօթ է, ըստ երևոյթին Եւսեբիոսից, որի ժամանակագրութեան թարգմանիչ նորան կը համարեն։

3) Աբիւդենոս հին պատմաբան, որի ինչ ժամանակ լինելն յայտնի չէ. այս անունը Խորենացին կյիշատակէ երեք անգամ։ Առաջին անգամ կյիշատակէ (գլ. Դ.) ասելով. «զԲիւռոս ասեմ, զբազմավկէն և զԱբիւդենայ. կամ զնոյն ինքն նաւակառուցէն և զայլոց նահապետացն»։ Երկրորդ (Ր. գիրք, գլ. Ը), Աբիւդենոս պատմէ այսպէս ասելով. մեծաշքօրն Նաբուգոդոնոսոր բռնադոյն էր քան զԵրակլէս Լիբիացւոց»։

Բայց այս երկու տեղերն դրեթէ բառ առ բառ կգտնվին Եւսեբիոսի մէջ, այնպէս որ նորա հետ Խորենացին այնքան ծանօթ էր, որքան որ նորա աշխատութիւններից հատուածներ պահպանված էին Եւսեբիոսի մէջ։ Երրորդ անգամ խօսելով Աբիւդենոսի վերայ (գլ. Զ.) նա առաջ կբերէ Ասորեստանի թագաւորների ազգաբանութիւնը Բելից մինչև Նինոս և Հայկական թագաւորներինը Արմենակից մինչև Արա Գեղեցիկը։ Ուստի պէտք է կարծել որ Խորենացին այս անգամ ուղղակի Աբիւդենոսից քաղած է։ Բայց այս ևս կասկածելի կթուի, որովհետև նա կաւելացնէ. «Եւ զայս մեզ պատմէ Աբիւդենոս յիւրում առաջնում արձանականի ի մանր ազգաբանութեան

(*) Նկատելի է, որ Թովմաս Արծրունի (երես 3—4) բոլորովին ուրիշ կերպով կհաղորդէ այս պատգամախօսների բովանդակութիւնը. «Տիտան բռնացեալ ի վերայ Զրուանայ առնու զԲաբիլոն, եւ շինէ քաղաք թագաւորութեան իւրոյ անդ, որ էր հինդերորդ Զրուան Քսխսութեւս։ Եւ քանզի առեալ էր կաւենայ իւր կին զՌեա յադէ Զրուանայ, եւ յինքն գրաւեալ զթագաւորութիւնն եւ ոչ զոք թուլացուցանէր թագաւորել Զրուանայ, դաշնաւորել երդմամբ մինչեւ որ ի կնոջէն ըՌեա, որ ի Զրուանայ զարմից էր ծնեալ արու, անդէն ի ծննդեան սատակէր. բայց միայն մանուկ մի Դիոս անուն, զոր գաղտաբար տալեցոյց մայրն, եւ անտի եւ անդ ոչ զք զօրէր Զրուանայ թագաւորել բայց միայն կին մի անուանի Դիոնեսիա, հարստասէրդ վաճառաց հոմանի բարուք. սա անուանէ զնոսն իւր ըստ անուան հաւտին իւրոյ Սեմայ Սեմիրամ, որ ըստ Սիւղոքայիցն ի հայկական լեզուէ Շամիրամ ձայնաւորի։ Ակներեւ է որ նախկին առասպելի այս փոխոխութեան վերայ եղած է մոգդեղնի ազդեցութիւնը. Տես Fr. Lenormant—Essai de comment de .Bérose, երես 415—430։

(**) Տես Fragmenta historicorum qraecorum. Ch Muller. Հ. III.

ասէ. զոր աստ ուրեմն յետոյ ոմանք բարձին »։ Ի՞նչ կնշանակէ բարձին։ Արտագրողը պատահմամբ բաց է Թողած արդեօք մի օրինակում, կամ թէ մէկը դիտմամբ է բաց Թողած նրել Աբիւդենոսի աշխատութեան բոլոր օրինակների մէջ. առաջին անգամից հասկանալի չէ երևում այս տեղը։

Բայց գործը կպարզվի, եթէ մենք կրկին դէպի Եւսեբիոս դառնանք։ Այնտեղ (երես 37, հրատարակութիւն Աւգերեանի) իսկապէս կտեսնենք Ասորեստանի Թագաւորների ազգաբանութիւնը Բէլից մինչև Նինոսը, բայց հայկական Թագաւորների մասին ոչ մի խօսք չկայ։ Որտեղի՞ց առաւ Խորենացին, քանի որ այս ազգաբանութիւնը կգտնվէր Աբիւդենոսի մօտ և չէ՛ տոյ բաց էր Թողված։ Մեր կարծիքով նոյն ինքն Մար - Աբասից։

4) Կեփալիոնի անունը երկու անգամ կյիշատակէ Խորենացին. նախ կգտնենք նորան Շամիրամի Հնդկաստանի դէմ արած պատերազմի պատմութեան մէջ (գլ. ԺԲ)։ Այս կգտնվի նոյնպէս Եւսեբիոսի մէջ (երես 44)։ Երկրորդ անգամ Խորենացին առաջ կբերէ Կեփալիոնից եօթն տողից բաղկացած հատուած (գլ. Ե)։ Այս հատուածի իմաստը կգտնվի Կեփալիոնից առնված Եւսեբիոսի քաղուածների մէջ (երես 45), բայց ակներև է, որ Խորենացին քաղած է ոչ Թէ Եւսեբիոսից, այլ ուրիշ տեղից։

(Կշարունակի)։ Ս. Տ. Գ.

ՎԱՐԱԿԻԶ ՄԻԱՋՄԱՏԻԿԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ.

(« ԱՐԱՐԱՏ », սեպտեմբեր)։

Միաշմատիկական հիւանդութիւնների ծագման և համաճարակ տարածման համար բաւական չէ միայն նոցա յատկանիշ Թոյների ազդեցութիւնը, որովհետև հիւանդի մարմինը պատրաստ Թոյն դուրս չէ հանում, այլ տալիս է ֆ (դեռ անյայտ) գործակալ նորա վերանորոգման համար, ֆ-ս գործակալը, ինչպէս մի քանի անգամ յիշել ենք, պէտք է ընդունել որ գեանի զրութենից է կախված, վասն որոյ և հիւանդութեան համաճարակմունքը կարող են տարածվել միայն այն տեղերում, ուր գտնվում են Թոյնի վերանորոգման պայմաններ։ Եթէ չկան այդ պայմանները, այն ժամանակ ներս բերված պատրաստ Թոյնը անգամ կարող է մի քանի մասնաւոր հիւանդութեան դէպքեր առաջացնել, մինչև որ հիւանդութիւն զարթուցանող պաշարը նուազի, և կամ կարող է պատահել որ ներս բերված հիւանդութեան փոքր քանակութեամբ Թոյնը հիւանդութեան մի կամ երկու դէպք առաջացնէ և կամ բոլորովին առանց հետևանքի մնայ։

Ուրեմն իրաւացի մի տեղ չէ նպաստում վերոյիշեալ հիւանդութիւնների Թոյների վերանորոգման և տարածման համար։ Խոլերան և ժանտախտը համաճարակ տարածվում են միայն քանի մի քաղաքներում, իսկ

միւս տեղերում բոլորովին չեն երևում, ենթադրվում որ նոցա յատկանիշ թոյները պիտի որ անկասկած ներգործած լինին։ Մի և նոյնը պատահում է որովհետև ծիծի և դեղին տենդի համաճարակման ժամանակ, մինչև անգամ այն տեղերում, ուր նորա տեղական են (эндемическія)։ Թէ քաղաքում և թէ գիւղում վարակման առանձին բոյներ են կազմում, որով հիւանդութիւնը աւելի նշանաւոր փողոցներում և կամ առանձին տներում է ներգործում, իսկ նոցա հարևան տեղերը վարակումից ինայվում են։ Ա յստեղ կարելի է յիշել այն փաստը, որ Եվրոպայում շատ քաղաքներ և գիւղեր կան, ուր խոլերան դեռ ոչ մի ժամանակ համաճարակ չէ երևացել, ենթադրվում որ այդ տեղերում շատ անգամ խոլերայի թոյն է ներս բերված եղել։ Աւելի զարմանալի օրինակ կարելի է յիշել Նիօն քաղաքը, որ մինչև ցայժմ խոլերայից անընդունակ է եղել, մինչև անգամ երբ Փարիզ և Մարսիլիա քաղաքները ենթարկված լինելով այդ հիւանդութեան, շատ գաղթականներ են ուղարկել Նիօն, որոնք ի հարկէ կարող էին ներսեանց հետ տանել խոլերայի թոյնը մեծ քանակութեամբ։ Պետերբուրգում խոլերայի համաճարակվածքի միջոցին, երբ կը նկատվել որ հիւանդութիւնը կարողանար համաճարակ տարածվել նորա շրջակայքում գտնված Յարսկօէ Սէլօ անուանված տեղում, ենթադրվում որ այդ երկու քաղաքների մէջ եղած յարաբերութիւնները համաճարակման ժամանակ ևս շարունակվել են։

Բժշկական գրականութեան մէջ կան օրինակներ, որոնք հաստատում են որ թէ տիֆը և թէ խոլերան կենդրոնանում են մինչև անգամ քաղաքի նշանաւոր տներում, իսկ քաղաքի միւս մասերը կամ բոլորովին ազատ են մնում, և կամ շատ թեթև են տարուածքում։ բացի դորանից հետևեալ համաճարակմունքի ժամանակ մի և նոյն տները և փողոցները են զոհվում։ Ներկրդ ասում է որ 1847 թ. Փարիզի Սալպետրիէր անուանված հիւանդ ձեր կանանց համար) այնպէս փաստիկ տեղական խոլերայի համաճարակումն կար, որ այդ հիւանդութեան 5000 բնակիչներից մնա 1200 հիւանդացան։ Նմանապէս երևեցաւ որ խոլերայի համաճարակմունքը կարող են յայտնվել մինչև անգամ մեծ հիւանդութիւնների առանձին մասներում կամ սենեակներում։ այնպէս որ մի և նոյն տան, մի և նոյն գործով պարապող, և ընդհանրապէս մի և նոյն պայմանների մէջ գտնվող բնակիչները համաճարակման ժամանակ տարբեր բաղդ ունին հիւանդանալու։ Իրրև զարմանալի օրինակ կարելի է այստեղ յիշել 1873 թ. խոլերայի համաճարակման ժամանակ եղած երևոյթը Լատրբէնի բանտում (Բաւարիայում), ուր ենթադրվում որ բոլոր բանտարկեալները մի և նոյն պայմանների մէջ էին, բանտի արևելեան մասում երկուշաբաթվան միջոցին խոլերան սաստիկ կատաղաբար էր ներգործում, իսկ բանտի միւս մասերը խոլերայից ազատ մնացին։ Ա յս տեսակ օտարոտի փաստերը աչքի առաջ ունենալով պիտի ընդունել, որ վարակված շինուածներում կան նշանաւոր տեղեր, որոնք համաճարակումից ազատ են, ինչպէս և նկատված է որ վարակված փողոցներում գտնվում են վարակված տներ, կամ վարակված

երկիրներում չվարակված տեղեր։

Միազմատիկական հիւանդութիւնների այս տեսակ օտարոտի տարածման համար բաւական չէ պատճառ բերել կլիմայական և մթնոլորտական պայմանները, որովհետև յայտնի է որ մի և նոյն կլիմայում, մի և նոյն մթնոլորտի աղդեցութեան ժամանակ, մի որ և իցէ փողոցների մի քանի տները, խօլերայի և որովայնատիֆի կենդրոն են դառնում, իսկ նոցա մերձակայ տները բոլորովին ազատ են մնում։ Ճշմարիտ է որ կլիմայական և մթնոլորտական պայմանները անտարբեր չեն մնում խօլերայի, դեղին տենդի, որովայնատիֆի և այլն...տարածման եղանակների վերաբերութեամբ, այս պատճառով է որ օրինակի համար Եվրոպայում խօլերայի համաճարակմունքը երևում են ամառվան վերջերին և աշնան, բայց դրա չեն բացատրում, թէ ինչի մի քաղաքում սաստիկ խօլերայ է առաջանում, իսկ նորանից մի քանի մղոն հեռաւորութեամբ քաղաքը ազատ է մնում խօլերայից և ինչի փողոցի մի տան մէջ հիւանդութիւնը սաստկանում է, իսկ նորա դէմ յանդիման միւս տունը խնայվում։

Մենք անցեալ անդամ պատմեցինք թէ ինչ կապ կայ գետնի յատկութեան — առաւել ևս գետնի ծակոտկենութեան և խոնաւութեան — և տիֆի կամ խօլերայի համաճարակմունքի երևելու մէջ։ Դորանով պէտք է բացատրել վերին աստիճանի միազմատիկական հիւանդութիւնների տարածման օտարոտի եղանակը։ Շատ հետազօտութիւններից երևում է որ վարակիչ միազմատիկական հիւանդութիւնների տարածվելուն նպաստում է աւելի ծակոտկէն և ջրի ու օդի համար դիւրաթափանց գետինը, ինչպես օրինակ շատ խիճ պարունակող ջրաբեր գետինը (наносная почва)։ իսկ ժայռոտ գետնի վերայ կառուցված քաղաքները և դիւղերը ազատ են մնում միազմատիկական հիւանդութիւններից։ Ուրեմն եթէ երկու մերձակայ տեղեր գտնվում են տարբեր գետնի վերայ, զարմանք չէ որ նոցանից մէկում միազմատիկական հիւանդութիւնների թոյները ներս ըերելուց յետոյ համաճարակումն է առաջանում, իսկ միւս մերձակայ տեղում համաճարակումը բոլորովին չէ երևում և կամ երևում է մի քանի դէպքերով։ Մի և նոյնը պէտք է ասել քաղաքի և կամ շինութեան առանձին մասերի համար։ Շատ անդամ պատահում է որ աւելի փոքր տարածութեամբ գետնի յատկութիւնները ամենայն տեղ հաւասար չեն լինում, այնպէս որ թէ տների և թէ մեծ շինութիւնների առանձին մասերը կարող են կառուցված լինել այլ և այլ յատկութեամբ գետնի վերայ։

Թէ տիֆը և թէ խօլերան այն նմանութիւն ունին որ երկուսն էլ գետնի յատկութիւններից են կախված։ իսկ Եվրոպայի վերաբերութեամբ այդ երկու հիւանդութեան մէջ այն նշանաւոր զանազանութիւնը կայ, որ տիֆը Եվրոպայի շատ մասերում պայմաններ է գտնում իւր անընդհատ գոյութեան համար, իսկ խօլերան մինչև ցայժմ դեռ չէ կարողացել արմատանալ ոչ Եվրոպայում և ոչ այլ աշխարհների մասերում բացի իւր հայրենիքից — արևելեան Հնդկաստանից։ Մեր երկիրներում խօլերային թոյնը մի ձը-

մեռվանից աւելի չէ կարողանում երկարել, որովհետև գետնի յատկութիւնները, մինչև անդամ ժամանակաւորապէս խօլերայից տրամադրված տեղերում այնպէս չեն որ կարողանան նպաստել խօլերայի թոյնի միտական վերանորոգման։ Այն հանդամանքը որ խօլերան բարձր տեղերում աւելի քիչ է երևում քան թէ գետային հովիտներում նմանապէս պէտք է վերաբերել գետնի յատկութիւններին։ Կարծում էին թէ կայ մի որոշ բարձրութիւն, որի սահմանից խօլերան դուրս չէ անցնում, բայց այս կարծիքը հաստատելու բաւականաչափ փաստեր չկան, որովհետև կենդրոնական Ասիայում օրինակի համար կան այնպիսի տեղեր, որոնք ծովի մակերևոյթից 2000 — 2500 մետր բարձրութիւն ունեին, այսու ամենայնիւ խօլերան երևում է և այս տեղերում։ Միջին Եվրոպայում առաւել ևս Շվէյցարիայում և Գերմանիայում որքան յայտնի է խօլերան 800 մետր բարձրութենից չէ բարձրացել, այնպէս որ բարձր եղած տեղերը փորը ի շատէ պահպանվել են նորանից։ Անտարակոյս գետնի չորութիւնը խօլերայի թոյնի վերանորոգման չէ նպաստում, այդ պատճառով անտարակոյս երկար ճանապարհորդութեան ժամանակ (մօտ երեք շաբաթ) խօլերան անհետանում է։ Խօլերան նմանապէս անհետանում է ծովով երկար ճանապարհորդելու ժամանակ, թէև խօլերայով վարակված նաւահանգիստ ունեցող քաղաքների հետ հաղորդակցող նաւերի մէջ պատահում են հիւանդութիւններ, բայց սովորաբար հիւանդութիւնը հարուածում է այն ճանապարհորդներին, որոնք յամառ են դուրս գալու, ուրեմն այնտեղ և վարակվում են։ Իրրև բացառութիւն պատահում է երբեմն, որ նաւերից դուրս չգնացողներն ևս հիւանդանում են խօլերայով։ Ընդհանրապէս նաւերը խօլերայի թոյնի զարգացման կեդրոն չեն կարող դառնալ։ Հիւանդութեան դէպքերը նմանապէս շատ քիչ են պատահում և այն նաւերում, որոնք խօլերայով վարակված նաւահանգիստ ունեցող քաղաքներից բնակիչներ են տեղափոխում։

Այժմ այլևս կասկած չկայ որ վարակիչ միաղմատիկական հիւանդութիւնները տարածվում են մարդիկների յարաբերութեան միջոցով, այդ հիւանդութիւնները մի տեղից միւս տեղ չեն կարող տեղափոխվել, մինչև որ հիւանդաբեր թոյնը մարդիկ և կամ առարկաները չտարածեն։ Ոչ մի ժամանակ չէ պատահել որ խօլերան մարդիկների յարաբերութենից առաջ մի տեղից միւսը տարածվի։ Այդ պատճառով երբ երևանն Թուրքաններին խօլերան այցելեց Եվրոպային, երկու տարվան միջոցին հաղիւ կարողացաւ Կասպեան ծովի եղերքից մինչև Փարիզ հասնել, այդ ճանապարհորդութիւնը կարող էր խօլերան անել եթէ կարելի է ասել «ոտով» և կամ աւելի շուտ ձիով։ Այժմեան ճանապարհների հաղորդակցութիւններին նայելով (երկաթուղի), խօլերան այդքան ճանապարհը կարող է մի քանի օրում անել։ Բոլորովին հասկանալի է ինչի միշտ հիւանդութիւնը ճանապարհների հաղորդակցութեան համեմատ է տարածվում, ուր գետային հաղորդակցութիւնը զարգացած է կամ ուր ցլնաւոր ճանապարհները գետերի ուղղութեամբ են գտնվում, այն

տեղ խօլերան այդ ճանապարհներով է տարածվում. երկաթուղիների գծերի վերայ եղած բնակութեան տեղերում խօլերան աւելի շուտով է տարածվում. ծովեզրեայ երկիրներում կամ կղզիներում խօլերան երեւում է ամենից առաջ նաւահանգիստ ունեցող քաղաքներում: Համաճարակման համար քամիների ուղղութիւնը անտարբեր է, որովհետեւ հիւանդաբեր թոյնը օդի հոսանքով չէ տարածվում. գետերի հոսանքները այն նշանակութիւնը ունին, որ նոցանով որոշվում է մարդկային յարաբերութիւնների դիւրաւոր ուղղութիւնը: Կոստանդնուպօլսի միջազգային խօլերային ժողովի արձանագրութիւններից երեւում է որ 1865 թ. խօլերան բերած էին Հընդկաստանից և Ճավայից Մեկկայ մահմեդական ուխտագնացները և այդ տեղից վերադարձող ուխտաւորները խօլերան տարածել էին մահմեդական երկիրների բոլոր մասերում և Աղեքսանդրիայից սկսած մինչև Միջերկրականի համարեա բոլոր քաղաքները:

Ինչ որ պատմեցինք խօլերայի մասին կարելի է վերաբերել նոյնը և միւս միազմատիկական հիւանդութիւններին:

Հիւանդաբեր թոյնի տարածողը կարօղ է ինքն մարդը լինել թէ առողջը և թէ հիւանդը, որովհետեւ երկուքն էլ լինելով խօլերային տեղում, իրանց շորերի և կամ մարմնի հետ կարօղ են թունաւոր նիւթ տարածել խօլերայից տակաւին աղատ երկիրներում: Այս վերջին հանգամանքը շատ բժիշկներին սխալանքի մէջ է ձգել, ստիպելով նոցա ընդունել այդ հիւանդութիւնը իբրև փոխադրական (կպչողական),—ընթերցողը արդէն գիտէ թէ ո՛րքան անհիմն է այդ հայեացքը:

Անշունչ առարկաները — ուտելիքները, ապրանքները և այլն կարող են նմանապէս նպաստել թոյնի տարածմանն, որովհետեւ նա կպչելով այդ առարկաների վերայ կարօղ է երկար ճանապարհորդութիւններ անել: Հիւանդների կղկղանքները չեն պարունակում իւրեանց մէջ պատրաստ թոյն, ուրեմն և ուղղակի չեն կարող վարակել, միայն պէտք է ընդունել որ նոցա մէջ թոյն ծագելու սկզբունք կայ, որ գեանի գործակալների նպաստմամբ, խօլերայի թոյն է առաջացնում:

Վերոյիշեալ միազմատիկական հիւանդութիւնների թոյները մարդի կազմուածքի մէջ թոքերով են ներս մտնում և ոչ թէ ընդունվում ըմպելի ջրով: Այս հարցի մասին բժիշկների մէջ սաստիկ վիճաբանութիւններ եղան, որոնք մինչև ցայժմ դեռ վերջնական վճիռ չեն ստացել: Թէ ըմպելի ջուրը կարող է տիֆային և խօլերային հիւանդութիւնների միջնորդ լինել սա մասամբ միջնադարեան աւանդութիւնից է առաջացած, որ համաճարակմունքի տարածումը վերաբերում էր ջրհորների թունաւորութեան, և մասամբ ևս այժմեան շատ հարևանցի արած հետազօտութիւններից, որով աշխատում են մի կապ դնել տիֆային կամ խօլերային հիւանդութիւնների և խմելու ջրի գործածութեան մէջ, որի հետ մի կերպով (ջրհորների և արտաքնոցների մօտ լինելով, հիւանդների կղզ-

*կղանքների ջրի հետ խառնվելով և այլն) իբր թէ հիւանդաբեր թոյնը խառնելել է։ Հիւանդութեան ու ջրի գործածութեան մէջ եղած կապը հաստատ էին ընդունում, եթէ հետազօտութեան միջոցին գտնում էին ջրի մէջ աւելի գործարանաւոր նիւթեր և կամ բորակաթթուատ և այլն. և կամ եթէ կասկածելի ջրհորը խափանելուց յետոյ համաճարակումը դադարում էր։ Մի և նոյն ժամանակ մոռանում էին որ հիւանդների կղկղանքները բոլորովին չեն պարունակում պատրաստ տիֆային կամ խօլերային թոյն — որ այդ հիւանդութիւնների համաճարակմունքը առաւել ևս սահմանափակեալ տեղերում կամ փողոցային և տնային համաճարակմունքը կարճ ժամանակ են տեւում — և թէ ջրի մէջ փոքր ինչ սովորականից ա ելի գործարանաւոր նիւթերի կամ բորակաթթուատի ներկայութիւնը չեն կարող ապացոյց լինել որ հիւանդաբեր թոյնը նորա մէջ գտնվում է, և վերջապէս ուշադրութիւն չէին դարձնում գետնի յատկութիւնների վերայ և նմանապէս այն փաստի վերայ, որ ամենայն ժամանակ և ամենայն տեղ վարակվում են և այնպիսի անձներն, որոնք կասկածելի ջուր անգամ գործ չէին դնում։ Այսպիսի թերակատար հետազօտութիւնները ոչ մի ժամանակ օրինաւոր հետևանքներ չեն կարող տալ և ճշմարիտ որ ամենայն տեղ, ուր վերաստուգված դիտողութիւններ են արած, երևացել է որ խօլերայի կամ տիֆի և ջրաբաշխութեան մէջ բոլորովին կապ չկայ, և եթէ մի որ և իցէ տեղ նկատված է եղել այդ տեսակ երևակայական կապ, միշտ կարելի էր լինում համաճարակման տարածումը այլ կերպ բացատրել, աւելի համապատասխան այդ հիւանդութիւնների յատկութիւնների վերայ ունեցած տեղեկութիւններին։ Մինչ բանիւ մինչև ցայժմ ոչ մի դէպքում անկասկածելի գիտնական ճշդութեամբ հաստատված չէ որ թէ տիֆը և թէ խօլերան կարող են տարածվել ջրի միջոցով, և մինչև անգամ չկայ ոչ մի դէպք, որով շատ թէ քիչ հաւանական լիներ ընդունել հիւանդութեան այդ կերպ տարածումը։

Ուրեմն պէտք է ընդունենք որ օդն է միայն խօլերայի, տիֆի և ընդհանրապէս միազմատիկական հիւանդութիւնների վարակման միջնորդը, և ինչպէս մենք բացատրեցինք գետնի յատկութիւնների մէջ պէտք է զըտնենք միազմատիկական հիւանդութիւնների թոյների զարգացման նպաստող գործակալներ, ուրեմն և գլխաւորապէս մենք պէտք է երկիւղ կըրենք գետնի օդից, որն առաւել շատ է պարունակում իւր մէջ հիւանդաբեր գործակալներ։ Պետենհօֆերը քանի մի անգամ ուշադրութիւն դարձրեց գետնի օդի և մեր բնակարանների օդի մէջ եղած միտական հաղորդակցութեան վերայ. մեր բնակարաններում առաւել ևս ձմեռ միջոցին միշտ գետնի օդի հոսանքը բարձրանում և խառնվում է բնակարանների օդի հետ և ոչ ոք չէ կասկածում որ նեղքնասենեակների կամ մառանների օդը, իւր բաղադրութեամբ համարեա նոյնանման է գետնի վերին շերտերի օդին, և պէտք է ուրեմն այդ ճանապարհներով բնակարանները ընդունեն վարակիչ միազմատիկական թոյները, բացի դրանից ամեն մի ձանրաչափա-

կան ձնշողութեան ցածանալը պիտի որ դետնի օդի հոսանքը դետնից վեր բնակարաններում աւելացնէ, և ճշմարիտ որ մի քանի բժիշկների հետազօտութիւններից երևեցաւ որ տիֆային և խօլերային համաճարակմունքը ուղեկից են եղել ծանրաչափի սաստիկ ցածանալուն և մինչև անգամ համաճարակման զօրութեան փոփոխութիւնը մեծաւ մասամբ ուղեկցել է ծանրաչափական ճնշողութեան փոփոխութեանը։

Ինչ որ կվերաբերվի անհատի տրամադրութեան դէպի միազմատիկական հիւանդութիւնները, նկատված է որ տիֆով հիւանդանալու տրամադրութիւնը աւելի մեծ է 15—20 տարեկան հասակում, տիֆը մեծաւ մասամբ հարուածում է առողջ և պնդակազմ անհատներին, իսկ խօլերան թոյլ և նուաղ մարդկներին։ Ցեղը կարծես թէ առանց ազդեցութեան չէ մնում. Բրիզէնի 20 տարվան տեղեկագրական աղիւսակներից երևում է որ Հնդկաստանում խօլերայից մեռել են հազար եվրոպացիներից 54 հոգի, իսկ տեղական ժողովրդից 4. այսինքն եվրոպացիները մօտ 13 անգամ աւելի են վնասվում քան թէ տեղական բնակիչները։ Տեղական բնակիչներից Սիպանները աւելի քիչ են տրամադրված վարակման, քան թէ միւս բնակիչները — Հօրկասները, որոնք չնայելով որ միևնոյն պայմանների մէջ են գտնվում, ինչպէս և Սիպանները։ Նկատված է որ Նեգրերը դեղին տենդով համարեա բոլորովին չեն վարակվում, և նոցա տրամադրութիւնը դէպի այդ հիւանդութիւնը աւելանում է միայն այն ժամանակ, երբ նոքա բարեխառն երկիրներում երկար մնալուց յետոյ վերադառնում են իւրեանց հայրենիքը։

Գ. Տ. Գ.

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ,

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀՆԱՐՕՂ։

Ա.

Մարդկութեան բարերարների եւ մեծագործ անձների վերայ որքան շատ դրվի եւ խօսվի, երբէք ծանծրալի չէ, այլ առաւել եւս ղգացմունք կշարժէ։ Այս մտքով յօժարութեամբ կրկրատարակենք Գուտտէնբէրգի կենսագրութիւնը, որ երբէք չէ կարող հնանալ, այլ քանի որ կզարդանայ մարդկութեան քաղաքակրթութիւնն, այնքան մարդկութեան այսպիսի բարերարներն արժէք կստանան։

Յովհան Գուտտէնբէրգը ծնվեցաւ 1400 թ. Մայնց աղատ եւ հարուստ քաղաքի մէջ Րէյնի ափին Գերմանիայում։ Նա հին ազնուական ցեղից էր։

Մայնց, Ստրազբուրգ, Վօրմս եւ ուրիշ ինքնավարչական քաղաքները, Գերմանիայի ծայրագոյն իշխանութեան տակ գտնվելով, կկառավարվէին ինքն ըստ ինքեան ինչպէս փոքրիկ հասարակապետութիւններ։ Նոցա ժողովուրդը բաղկացած էր պատուբազմաէջր ազնուականներից, քաղաքացիներից եւ աշխատաէջր հասարակ ժողովրդից։

Ազնուականների եւ քաղաքացիների մէջ յաճախ վէճեր կրգային իշխանութեան համար, իսկ ժողովուրդը կմիանար կամ այս կամ այն կողմին, որոնք փոփոխաբար կամ նորա սիրտը կառնէին կամ կճնշէին: Այս վէճերը, որոնք կծադէին այս կամ այն մարդի անձնական օգտի կամ անավարութեան համար, յաճախ կվիրավէին ներքին պատերազմների, որոնց մէջ յաղթութիւնը կմնար կամ ազնուականներին կամ քաղաքացիներին եւ կամ ժողովրդին, եւ հետեւաբար այս քաղաքների ժողովուրդը միշտ երկու կրաժանվէր՝ յաղթողներ եւ յաղթվածներ: Յաղթվածների թուից շատերը սովորաբար կենթարկվէին աքսորին:

Բ.

Իր մայրենի Մայնց քաղաքի վէճերի մէջ երիտասարդ Գուտտէնբէրգը, լինելով բուն ազնուական, բնականաբար կպատերազմէր այն ընկերութեան համար, որին կպատկանէին ինքն, իր հայրը եւ իր պապը: Այս անգամ յաղթութիւնը չմնաց ազնուականներին եւ Գուտտէնբէրգը իրայիններով աքսորվեցաւ Մայնցից: Նորա մայրը եւ քոյրերը միայն մնացին իրենց տունը եւ կալուածը կառավարելու. նորա մեզաւոր չէին համարած:

*Գուտտէնբէրգի այս առաջին աքսորումն երկարատեւ չէր. վիճող դասերը խաղաղացան եւ աքսորվածները վերադարձան: Բայց շուտով 1420ին մինի գրգռմամբ Բօքերտ Թաղաւորի Մայնց հանդէսով զօրքով մուտք գործելու ժամին առաջ դնալու իրաւունքի համար եղած կռուից նոր խռովութիւն ծագեց եւ 19 տարեկան Գուտտէնբէրգը այս երկրորդ անգամ աքսորվեցաւ հայրենիքից: Այս անգամ Ֆրանկֆուրտ ազատ քաղաքը միջամուխ եղաւ եւ խաղաղացրեց վիճող կողմերը: Աքսորված ազնուականները նորէն դարձան աքսորից այն պայմանով, որ հաւասար իրաւունք ունենան քաղաքացիների հետ քաղաքային վարչութեան գործերի վերաբերմամբ: Բայց Գուտտէնբէրգը — նորանից էր արդեօք որ նա իր քաջութեամբ ուրիշներից աւելի զարհուրելի էր քաղաքացիների համար եւ ինքն սակաւ կհամակրէր նոցա, կամ նորանից էր արդեօք, որ մայրական կաթի հետ ծծած հպարտութիւնը կարգելէր նորան խոնարհել պլեբէյների (հասարակ ժողովրդին) ճնշման տակ, կամ թէ նորանից էր արդեօք — եւ սա առաւել հաւանական է — որ նորա 40 ամեայ ներկայութիւնը Ստրազբուրգի մէջ գիտութիւններ սովորելու համար զարձրած էր նորա ուշադրութիւնը աւելի բարձր նպատակներին, քան թէ որեւիցէ անուտի պատիւներ հասարակապետութեան մէջ, Գուտտէնբէրգը հրաժարվեցաւ հայրենիքը վերադառնալուց: Նորա մայրը, որ Մայնցից չէր դադարում նորա մասին հոգալուց, խնդրեց հասարակապետութենից որ իր որդուն իրաւունք տան ստանալու գոնէ փոքրիկ մի մասն այն իր կալուածներից, որը գրաւած էր հասարակապետութիւնը: Հասարակապետութիւնը պատասխանեց, որ ազնուական Գուտտէնբէրգը իր հրաժարվելովը հայրենիք վերադառնալուց հրատարակից իրեան հայրենիքի թշնամի, իսկ թշնամիներին հասարակապետութիւնն ոչինչ ողորմիկ չի տայ: Գուտտէնբէրգը, որը իր յամառ հպարտութեամբ կամաւոր աքսորման դատապարտած էր իրեան, հարկադրվեցաւ ապրել այն փողով միայն, որը կուղարկէր նորան ծածուկ իր մայրը: Ստրասբուրգի մէջ նա իր բնաւորութեամբ եւ իր պիտանական տեղեկութիւնների համար դրաւեց ընդհանուր յարգանք եւ սէրը

այնպէս որ երբ Մայնցի վարչութեան նախագահը մի անգամ պիտի անցնէր այս քաղաքով, Գուտտէնբէրգի կողմնակիցները բռնեցին նորան եւ բանտ դրին եւ չարճարկեցին, մինչեւ որ Մայնց քաղաքի դրաւոր համաձայնութիւն չտացան Գուտտէնբէրգին իւր հայրենական ժառանգութիւնը վերադարձնելու:

Գ.

Նորէն տէր դառնալով իւր եկամուտներին Գուտտէնբէրգը յանձնվեցաւ իւր զրաւկանական, կրօնական եւ արհեստագիտական զբաղմունքին: Նա սկսեց ճանապարհորդել քաղաքից քաղաք, ուսումնասիրելով իւրաքանչիւրի նշանաւոր բանները եւ այցելելով ամենայն տեսակ մարդիկներին, որոնք որեւիցէ կերպով անուն ստացած էին դիտութիւնների եւ զեղարուեստների, մինչեւ անդամ արուեստների ասպարէզում: Արուեստաւորներն այն ժամանակ Գերմանիայում կանգնած էին հաւասար ատիճանի վերայ նկարիչների հետ: Այս մի ժամանակակէտ էր, ուր նոր հնարված արուեստները զեղարհեստի նշանակութիւն ունէին եւ արուեստանոցների առաջին գործվածները հրաշք էին կարծվում: Գուտտէնբէրգը կճանապարհորդէր միայնակ, պարկը ուսին, որի մէջ կային հագուստը եւ դրքերը, բոլորովին հասարակ ուսանողի մի նման, որ կճափառէ ուսումնարանից ուսումնարան կամ վարպետ պատօղ արուեստաւորի մի նման: Նա շրջեց այս կերպով Բէյնի ափերը, Իտալիա, Զվիցերիա, Գերմանիա եւ վերջապէս Հօլանդիա: Այս ճանապարհորդութիւնը անպատակ չէր: Գուտտէնբէրգը աչքի առաջ ունէր ոչ թէ իւր քմապաշտութիւնը, այլ որոշ մի նպատակ, որը կկրէր նա իւր հետ միշտ եւ ամեն ուրեք: Նորա կամքը ուղղված էր մի կէտի, եւ նախապուշակ ձայնը ասում էր նորան, որ շուտ կամ ուշ նա պիտի հասնէ իւր նպատակին: Այս ախտի ձայնը, որ չէր ծողնում նորան ոչ մի րոպէ, այս նպատակը, որին նա աշխատում էր եւ ճգնում էր հասնել—էր գտնել Աստուծու խօսքը տարածելու մի հնար Աստուածաշնչի միջոցով, աւելի շատ եւ շատ քան թէ տարածել էին մարդիկ առաջ: Ուրեմն Աստուածպաշտութիւնը եւ նախանձախնդրութիւնն Աստուծու համար շարժում էին երիտասարդ Գուտտէնբէրգին, որը հնար էր պատում աշխարհի մէջ միայն մի սերմ ձգելու, բայց հազարաւորների համար գտաւ: Տպագրութիւնը պէտք պարծենայ նորանով, որ իւր սկզբնաւորութիւնը նուիրված է աստուածպաշտական շարժառիթին եւ ոչ թէ առեւտրականին: Կրօնական ջերմեռանդութիւնը միայն արժանի էր որ ամենայն ճշմարտութեան զործիք գտնէր: Զգիտենք ինչպիսի հնարներով էր մտածում Գուտտէնբէրգը իւր միտքը իրագործել: Բայց մի դէպքը տիպեց նորան մոռանալ բոլորը, ինչ որ նա առաջ մտածել էր: Մի րոպէում մօտեցրեց նորան իւր ցանկացած դիտին: Մի անդամ Հօլանդիայի Հարլէմ քաղաքում եկեղեցու զղեստապահ Լավրենտիոս Կօստէրը Գուտտէնբէրգի բարեկամը ցոյց տուեց նորան լատիներէն քերականութիւն հոգեւոր դպրոցի աշակերտների համար փորագրված տախտակի վերայ: Տպագրութեան այս առաջին փորձն եւս սոյն այս ծրի առաջնորդի—դէպքի—շնորհով եղած է:

Դ.

Երիտասարդ եւ ազբատ Լավրենտիոսը Հարլէմ քաղաքի եկեղեցու զղեստապահը դուրս գալով գարնանը ատն օրերին քաղաքի միւս կողմը զբօսնելու եւ մտածելու,

կնոտէր ջրանցքի ափին ուռիների տակ։ Նորա սիրտը լի էր սէրով դէպի իւր հարսը եւ նորա պատկերը երբէք չէր հեռանում նորա երեւակայութենից։ Ուրիշ սիրահարվածների նման նա կղուարճանար նորանով, որ կկտրէր դանակով իւր համար Թանկագին անունի առաջին տառը կից այն տառի հետ, որով կսկսվէր իւր անունը։ Բայց փոխանակ այս տառերը փորագրելու ծառի կեղեւի վերայ որ ծառի հետ մեծանան եւ մնան, նա կկտրէր ուռի փայտը, կհանէր կեղեւը եւ նորա վերայ կփորագրէր իւր սիրելի տառերը եւ յետոյ կբերէր այն փայտը իւր հարսին։

Մի անգամ երբ նորա աշխատութիւնը այս կերպով յաջողեց նորան, նա փաթաթեց ուռենի ճիւղը իւր Թանկագին տառերով մադաղաթի կտորով եւ այս կերպով բերեց Հարլէմ։ Միւս օրը կամենալով զուարճանալ իւր ձեռագործով, բացեց մադաղաթը, եւ ինչպէս զարմացաւ երբ տեսաւ որ մադաղաթի վերայ կերեւին նոյնպիսի տառեր, միմիայն հակառակ դիրքով եւ մուխ-շէկ գոյնով։ Ուռած տառերը, որոնք փորագրված էին ուռենու Թաց ճիւղի վերայ, դիշերը իւրեանցից հիւթ զուրս հանելով տպել էին մադաղաթի վերայ իւրեանց ձեւը։ Կօստերի համար սա դիւտ էր։ Նա վերցրեց տախտակը, փորագրեց նորա վերայ նոր տառեր, քսեց նոցա սեւ հեղանիւթ եւ այս կերպով ստացաւ առաջին տպագրված տախտակ։ Բայց այս տախտակով կարելի էր տպել միայն մէկ երես, նորա տառերը չէին կարող շարժվել, ուստի չէր կարելի փոփոխել, ամեն բառի տառերը տպելու համար։ Խեղճ գղեստագործ Կօստերի եղանակը կծածկէր բոլոր երկրիս երեսը փորագրված տախտակներով, բայց եւ այնպէս այս բոլոր տախտակները այժմեան մի արկղ տառերի տեղ չէին կարող բռնել։ Այսու ամենայնիւ տպագրութեան սկիզբը դրված է Հարլէմի գղեստագործ մէջ։ եւ կարելի կլինէր երկմտել արդեօք Թէ հրին պէտքէր նուիրել այս դիւտի փառքը,—Գուտտէնբէրգին Թէ Կօստերին, եԹէ որ այն հանգամանքը չլինէր, որ Կօստերի գիւտը սերի եւ հասարակ պատահման արդասիք էր, մինչդեռ Գուտտէնբէրգի գիւտը բազմահամբեր հետազօտութիւնների եւ հանճարի արդասիք էր։

Ե.

Սակայն այս կոպիտ փորագրված տախտակը տեսնելով, Գուտտէնբէրգի միտքը լուսաւորվեցաւ։ Նա դննումէ տախտակը. զատում է նորան, մտաւորապէս մասերի է կոտորում, դասումէ, բաժանումէ, փոփոխումէ, լրացնումէ, քսումէ Թանաքը եւ ոլորակով սեղմումէ։ Գղեստագործը զարմացած նորա երկար լուռութեան վերայ ներկայ է դառնվում անգիտակցաբար աշխարհում մեծ դաղափարի ծննդին, որը իւր հիւրը 10 տարի կրումէր իւր գլխի մէջ։ Կօստերի մօտից դնալով, Գուտտէնբէրգը տարաւ իւր հետ մի ամբողջ նոր արհեստ։

Զ.

Միւս օրը, մի գանձ գտած մարդի պէս, որ չէ կարողանում հանդստանալ ոչ ցերեկ ոչ գիշեր մինչեւ որ չէ պահում նորան մի ապահով տեղ, Գուտտէնբէրգը Թողնումէ Հարլէմ, դնումէ արագութեամբ գէպի վեր Բէյնի ափով, գալիս է Ստրաս-

բուրդ, փակվում է իր արուեստանոցի մէջ, յատուկ իր ձեռով շինում է հարկաւոր գործիքները, փորձում է մին միւս, կոտրում է, սկսածը ձգում է, նորէն սկսում է, նորէն ձգում է, նորէն սկսում է իր փորձերը, եւ վերջապէս հասնում է այն կէտին, որ մա-դաղաճի վերայ յաջողութեամբ տպագրվում են այբուբենի բոլոր 24 տառերը: Այս առաջին տպված այբուբէնը էր, որ թէպէտ կոպիտ կոշտ էր, բայց ունէր մեծ նշանակութիւն: Սորա այն սկզբնական 24 տառերն էին, որոնք բազմանալով ծածկեցին վերջապէս բոլոր երկրիս երեսը եւ որի մէջ մարմնացաւ մի նոր աննիւթական տարրը — միտք: Գուտտենբէրգը իւր խնդիրը այս թէ այն կերպով լուծելու շատ փորձերից յետոյ, վերջապէս կանգնեց նորա վերայ, որ փայտից կոտրեց փոքրիկ խորանարդներ եւ նոցա իւրաքանչիւրի վերայ փորագրեց մի մի տառ, յետոյ ծակեց կողքերից այն փայտերը եւ շարեց թելի վերայ համարիչի նման: Այս անգամին փորձը կատարելապէս յաջողվեցաւ:

Է:

Նորան տիրից յառաջադիմութեան յափշտակումն, նա հազիւ կարօղացաւ քնել հետեւեալ գիշերը: Այս խռովեալ եւ թերի քնի մէջ նորան տեսիլ ներկայացաւ, որը յետոյ նա պատմում էր իւր բարեկամներին: Այս տեսիլի մէջ այնքան շատ է մարգարէութիւն եւ այնքան մօտ է ճշմարտութեանը, որ կարդալով, տարակուսանում թէ այն արդեօք մի նախատեսութիւն չէր աւելի քան թէ քնած աշխատաւորի մի տենդային ցնորք: Ահա այս տեսիլի եղելութիւնը այնպէս, ինչպէս որ նա գրված եւ պահված է Բէկի մատենադարանում:

«Ազրօհատի վանքի մի խուցի մէջ նստած էր սեղանի մօտ, գլուխը յենլով ձեռների վերայ մի մարդ գունաթափ երեսով, երկայն մօրուքով եւ անշարժ հայեացքով: Այս մարդի անունն էր Յովհան Գուտտենբէրգ: Երբեմն նա գլուխը վեր էր բարձրացնում եւ նորա աչքերը փայլում էին մի ներքին լոյսով: Այս վայրկեաններին Յովհանը արագ եւ ուրախ շփում էր ձեռով մօրուքը. սա նշանակում էր, որ Յովհանի աչքի առաջ երեւում էր այդ ժամանակ այն խնդրի լուծումը, որի վերայ չարչարվում էր նա: Յանկարծ Գուտտենբէրգը կանգնում է, նորա կուրծքից դուրս է թռչում մի ծայն որ կարծես թէ թեթեւացնում է նորան երկար ընշող մտածմունքից: Յովհանը վազում է դէպի պահարան, հանում է այնտեղից մի սուր գործիք եւ արագութեամբ սկսում է կտրել մէկ փոքր փայտի կտոր: Նորա բոլոր շարժմունքի մէջ երեւում էր թէ ուրախութիւն եւ թէ շփոթութիւն, կարծես թէ նա վախենում է, որ նորա դաղափարը, այն գտած ադամանդը, որ նա կամենում էր կոկել եւ շինել յետագայ սերունդների համար, չփախչէր նորա ձեռից: Յովհանը մեծ ջանասիրութեամբ հարթում էր դանակով փայտը, նորա ճակատը ծածկվեցաւ քրտինքով, իսկ աչքերը ագահարար դիտում էին աշխատութիւն: Երկար նա այսպէս աշխատեց, բայց այն ժամերը անցան նորա համար աննկատելի կերպով: Վերջապէս նա փայտը թաթախում է մի սեւ հեղանիւթի մէջ, դնում է նորան մադաղաճի վերայ եւ բոլոր իւր մարմնի ոյժով սեղմելով այն ձեռը, որով բռնած ունէր նա փայտը, իւր այս ձեռից մի տեսակ մամուլ շինեց: Փորագրված տառերը տպվում են մադաղաճի վերայ: Նա տեսնում է իւր դիւտը եւ հանճարի հրճուանքով լցված նոր աղաղակ դուրս է

Ձուչում Նորա բերանից: Նա ծածկում էր աչքերը այնպիսի երջանիկ կերպով, որին կարող էին նախանձել դրախտի բնակիչներն անգամ եւ Ձուլացած վայր է ընկնում աճոռի վերայ: Եւ երբ սկսեց Նորա քունը տանել, նա կիսաձայն կրկնում էր. «ես անմահ եմ»:

Այն ժամանակ Նորան մի տեսիլ ներկայացաւ, որ խոովում էր Նորա հոգին:

«Ես լսեցի երկու ձայն, ասում էր նա, երկու անծանօթ եւ զանազան ձայներ, որոնք փոփոխաբար խօսում էին ինձ հետ հոգուս խորերում: Նոցանից միևը ինձ ա-սաց. «Ուրախացիր, ցովհան, դու անմահ ես: Այսուհետեւ ամենայն լուսաւորութիւն «պիտի ծաւալվի երկրիս վերայ քեզանով: Այն ազգերը, որոնք բնակուում են քեզա-«նից հաղարաւոր մղոններ հեռու, որոնք մեր երկրի գաղափարներից հեռու են, «կկարդան կըմբռնեն այն մտքերը, որոնք առ այժմ լուռ են, բայց որոնք կատարած-«վին եւ կբազմանան ինչպէս արեւի անդրադարձումն ցօղի կաթիլների մէջ, քո եւ «քո դիւտի շնորհով»:

«Ուրախացիր, ցովհան, դու անմահ ես, որովհետեւ դու այն Ձարգմանն ես, որին «ապատուէին ազգերը փոխադարձ խօսակցութեան համար միմեանց հետ: Դու ան-«մահ ես, որովհետեւ քո դիւտը պիտի տայ յաւիտենական կեանք շատ խելքերին, «որոնք առանց քեզ մեռած պիտի մնային, եւ այս բոլոր խելքերը իւրեանց հեր-«ձին պիտի անմահացնեն Նորան, ով իւրեանց անմահացրեց»:

«Այս ձայնը լռեց, Ձողնելով ինձ յափշտակման մէջ: Բայց միւս ձայն ար ծակվե-«ցաւ, որ ասաց ինձ. «Այո, ցովհան, դու անմահ ես, բայց ինչ գնով: Արդեօք քեզ «նմանների մտքերը միշտ բաւական մաքուր եւ սուրբ կլինին, որ արժէք ունենան «մարդկային հեռաւոր սերունդին լսելի եւ տեսանելի լինելու: Արդեօք շատ մարդ-«կային մտքերը, նոցա մեծագոյն մասը հազար անգամ աւելի արժանի չէին որ ոչըն-«չանային քան թէ կրկնվէին եւ տարածվէին աշխարհիս մէջ»:

«Մարդս լինում աւելի ապականված քան թէ իմաստուն եւ բարի, նա կպղծէ այն «ծիրը, որը դու Նորան յանձնուսես, նա ի չարն գործ կդնէ այն ընդունակութիւնը, «որ դու ստեղծումես Նորա համար: Շատ դարեր քո յիշատակը անէծքով պիտի «կատարին եւ ոչ օրհնութեամբ»:

«Կծնվին մարդիկ կարող եւ դրաւիչ խելքով, բայց հպարտ եւ յանցաւոր սրտով. «առանց քեզ այս մարդիկը ստուերի տակ կմնային, եւ փակված լինելով նեղ շըր-«ջանի մէջ, Նորա անբաղդութիւն կպատանային իւրեանց ժամանակի եւ իւրեանց «մերձաւորների համար: Իսկ քեզանով Նորա կկուրացնեն, կանբաղդացնեն եւ կրթա-«պատրին դէպի յանցանքը բոլոր մարդիկներին եւ ամեն ժամանակներ»:

«Նայիր այս միլիոնաւոր հոգիներին, որոնք կորած են մի ապականված հոգուն «մերձենալուց: Նայիր այս պատանեակներին, որոնք մոլորված եւ ապականված «են այնպիսի գրքերով, որոնց ամեն մի երեսը խեղդը Ձունաւորող Ձոյնով է Ձունա-«տորված»:

«Նայիր այս երիտասարդ աղջիկներին, որոնք կորցրած են ամենայն ամօթը, որոնք «ոչինչ չեն հաւատում, անդուխ են եւ անողորմ դէպի աղքատները այն գրքերի շնոր-«հով որոնք լի են սիրոը Ձունաւորող Ձոյնով»:

«Նայիր մայրներին, որոնք ողբում են իւրեանց զաւակներին»:

«Նայիր հայրերին, որոնք կարմրում են (ամաչումեն) իւրեանց աղջիկների փո-
խարէն»:

«Յովհան, անմահութիւնը, որի համար պէտք վճարել այնքան աշխատութ եւ
«այնքան Զոհութիւններ, արդեօք չափազանց Մանկ դնված չի լինի: Մինչէ կլար-
«ծենաս փառքը այս գնով ծեռք բերելով: Արդեօք չէ սարսեցնում քեզ, Յովհան,
«այն պատասխանատուութիւնը, որ վերցնում ես փառքի համար քո հոգու վերայ»:

«Հաւատա՛ ինծ, Յովհան, ապրիր այնպէս որպէս Մէկ չես արած ոչինչ դիւտ: Նա-
«յիր քո դիւտի վերայ ինչպէս մի հրապուրիչ, բայց վնասակար ցնորք, որի իրագոր-
«ծումն միայն այն ժամանակ օգուտ կլինէր, երբ մարդս բարի լինէր . . . բայց
«մարդը չար է, իսկ չար մարդի ծեռն զէնք տալը չէ նշանակում արդեօք նորա չա-
«րագործութիւններին մասն ունենալ»:

«Ա՛յստեղ ես զարմեցայ վախեցած եւ տարակուսած: Մի րոպէի չափ տատան-
վումէի, բայց յետոյ մտածեցի, որ Աստուծու պարգեւները որչափ եւ վտանգաւոր
են երբեմն, վատ չեն լինում երբէք, եւ մարդի բանականութեանը եւ ազնիւ ծրդտ-
մունքին եւ կամեցողութեանը մի աւելորդ զործիք տալը կնշանակէ նոր, ընդարձա-
կագոյն ասպարէզ բանալ անմահ հոգու եւ յաւիտենական ճշմարտութեան առաջ: Ես
եւս որոշեցի շարունակել աշխատել դիւտիս վերայ»:

Ը.

Գուտտէնբէրգը, առաջին հայեացքից դնահատելով իր դիւտի Մէկ բարոյական եւ
Մէկ շահաւէտ նշանակութիւնը, շուտով զդաց որ այսպիսի մի գործի համար բաւա-
կան չեն իր Ձոյլ ծեռները, իր կարճ կեանքը եւ իւր համեստ կարողութիւնը: Նորա
համար անհրաժեշտ էին միեւնոյն ժամանակ երկու հակառակ բան. գտնել ընկերներ,
որոնք օգնէին նորան իւր ծեռնարկութեան ծախսերի եւ աշխատութիւնների
մէջ, եւ երկրորդ—անհրաժեշտ էր առ ժամանակ ծածկել այս ընկերներից իւրեանց
այս աշխատութիւնների ճշմարիտ նպատակը, որպէս զի մի գուցէ Մէկ նորա հրատա-
րակեն նորա դիւտը եւ ուրիշի ծեռն անցնելով, փառք եւ պատիւն եւս ուրիշը
տանայ: Նա դիմեց իւր ծանօթ քանի մի հարուստ ազնուականներին Ստրասբուրգի
եւ Մայնցի մէջ, բայց երեւի ամենքը բացասացին, որովհետեւ այն ժամանակ
ամենայն ծեռագործ արուեստը ազնուականի համար ստորին էր համարվում. ազ-
նուականը արուեստաւոր դառնալով, պիտի հրաժարվէր իւր հասարակութեան հետ
ամենայն յարաբերութիւններից: Գուտտէնբէրգը վճռեց համարձակ քայլ անել. նա
ինքն արուեստաւոր դարձաւ, արուեստաւորների ընկերութեան մէջ մտաւ, նա խառ-
նվեցաւ ժողովրդի մէջ նորա հմար, որ այն ժողովուրդը բարձրացնէ ժամանակով
բարձր մտաւոր եւ բարոյական աստիճանի:

Նոր եւ հիանալի ճարտարապետութիւններով միասին պարապելու առիթ ընծած,
օրինակ ժամագործութեամբ, ոսկերչութեամբ, քանդակագործութեամբ եւ ականագոր-
ծութեամբ, Գուտտէնբէրգը դաշն կապից երկու հարուստ տպարարութեան արուես-
տաւոր վարպետների հետ. Ա՛նդրէաս Գրիպպէհէնի եւ Յովհան Րիֆֆէլի հետ, եւ յետոյ
Ֆաուստի հետ, որ Մայնցում ականագործ եւ սեղանաւոր էր, որի անունը պատ-
ճառ եղաւ, որ ժողովրդական երեւակայութիւնը խառնեց նորան միւս Ֆաուստի հետ,

որ Գերմանիայում երեւելի կախարդ էր, եւ դիտէր, ըստ աւանդութեան, բնութեան բոլոր գաղտնիքները եւ յարաբերութիւններ ունէր ոգիների հետ. ուստի եւ ապադրութեան ծադումն ժողովուրդն երկար ժամանակ վերաբերում էր կախարդութեանը: Վերջապէս Գուտուէնբէրգը ընկերութիւն կազմեց Հէյլմանի հետ, որը Սարասբուրգում առաջին Աղթի գործարան հիմնողի եղբայրն էր:

(Կը շարունակուի): Մ. Տ. Ա.

ԻՄ ՓԱՓԱԳ.

Մտածող Հայեր, բանական Հայեր,
Պիտի գադարէ՞ք լինել անտարբեր.
Պիտի ցանկաք դուք ազգային պարծանք,
Թէ ձեր կեանք անէք մաշող բամբասանք.
Ճուրջ լուսացած է, դուք ի՞նչի կ՚քնէք.
Անհոգ և անմիտ մնալ ունի՞ արժէք.
Հայեր, միտք արէք, ի՞նչ է ձեր արած.
Ո՞ւր է ջերմ սրտով ձեր պաշտած Աստուած,
Ո՞ւր ձեր անկեղծ սէր առ Իշման սուրբ տեղ,
Որ հայ ազգութեան է խարիսխ զօրեղ.
Իսկ ճշմարտութիւն, հայասիրութիւն
Ե՞րբ պիտի առնեն ձեր մէջ յարութիւն.
Ազգին ծառայել ե՞րբ կ՚համարիք
Իւրաքանչիւրդ ձեր քաղցր պարտիք.
Խեղճ եղբօրդ կ՚լինի՞ք առատ նուիրող
Թէ պիտի պաշտէք անդադար ձեր փող.
Թշուառ մի՛ կացէք, իմ սիրուն Հայեր,
Խելք, ոգի առէք, գործեցէք գործեր:

ԻՇԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ.

ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

«Արարատի» վերջին տետրակում խոստացածիս համաձայն, Վեհափառ Հայրապետի հրամանով, կհրատարակվի Խորէն Վարպապետ Սեւիրանէի յայտարարութիւնը, որ այս է ահա.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ, ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԻՈՐԳԱՑ Դ.ի.

Ամենահոնարհ յայտարարութիւն:

Վեհափառ սուրբ Հայրապետ,

Վեհափառութիւն Ձեր բարեհաճեցայք հրամայել, պի ես յաւուրս ամարային արձակուրդի Գէորգեան Ճեմարանի Ճանապարհորդեցեալ ի Բա-

սիա առ ի յորդորել զբարեպաշտ Հայկազունս յօժանդակութիւն վասն շինուելեան նորոյ ննջարանի Ճեմարանին։

Զկնի աւարտումն տալոյ տպագրութեանն ամենատեարից «Արարատայ» յուլիսի և օգոստոսի, բարեբաղդ գտայ ներկայանալ Ձեր Վեհափառութեան ի Բիւրական, ուր բարեհաճեցայք օրհնել զիս և շնորհել ինձ առ յիշեալ նպատակ ղՀայրապետական Կոնդակն պաշտելի։ Թէև նշանակեալ վասն իմ ժամանակն կարի անձուկ էր, այլև յաւուրս ամարան քնակիչք մեծ քաղաքաց ցրուեալ էին յամարանոցս, ուստի չէր յաւետալի արդիւնաւոր պղՃանապարհորդութեանս, սակայն մեծութեամբ և օգտաւէտութեամբ ի Ձերմէ Վեհափառութենէն ձեռնարկեալ գործոյդ ի սիրտ և ի հոգի շարժեալ, ապաւէն ինձ արարեալ զԱստուածն Գրիգորի, յուշ ածեալ զՀայասէր և զՀայրապետասէր սիրտս Հայոյն ժողովրդեան և քաջալերեալ սուրբ օրհնութեամբ Ձերով Վեհափառութեան, մեկնեցայ ի Ս. Էջմիածնէ. ի 25 յունիսի։

Եւ քանզի Վեհափառ Տէրդ իմ պատուէր եղիւք ի վերայ իմ առ 1 սեպտեմբեալ հասանել ի Ս. Էջմիածին, պարտ էր ինձ արագ արագ կատարել զպաշտօն իմ, փութալով առնել զիմն, կացեալ ի քաղաքս զերիս կամ առ առաւելն զվեց աւուրս եւեթ։ Ի Թիֆլիս քաղաքի ոչ գտի զանձինն, զորս տեսանել հրաման պատուիրանի առի. ոմն ի Կօջոռ, ոմն ի Բօրժօմ և ոմն հետի ևս գտանելոյ։ Զորս մարթի էր գնացեալ տեսի և յորդորեալ զնոսա կազմեցաք ի նոյն անձանց զՄասնաժողովս ի հանգանակել կանխաւորն նուէրս։ Այլ քանզի ի պատճառս տաղնապալի ջերմութեան տարւոյն ժողովուրդ մեծաւ մասամբ գտանելոյ արտաքոյ քաղաքի յամարանոցս, դմին իրիւ անդամք Մասնաժողովոյն, որք միխիթարեալ են ազգաշէն ձեռնարկութեամբ Ձերդ Վեհափառութեան առաջարկեցին ինձ յամեցուցանել զՀանգանակութիւն ցվերջ ամսոյն սեպտեմբերի, յորժամ ժողովուրդ ժողովեսցի ի քաղաքին, զհաստատ խոստումն տուեալ եթէ ոչ 15 հազար, առ նուազն 10 հազար րուբլի նուէրս հանգանակել վասն նորոգ շինութեանն, զոր Վեհափառ Հայրապետդ ձեռնարկեալ էր։ Եւ վասն անդորր և ապահով առնելոյ զՎեհափառ Տէրդ, որպէս զի մի՛ զնուաս նոցա իրրև զլոկ խոստումն համարեսջիք, այլ իրրև զնշղելութիւն իրագործեալ, անդամք Մասնաժողովոյն յօժարեցան զրութեամբ պարտս անձանց համարել առաջի Մեծիհ այրապետիդ, յայտ արարեալ միանգամայն զլուբանց զնորին երախտագիտական զգացմունս, որ վասն մեծամեծ և ազգօգուտ նուիրական քաջագործութեանց Ձերդ Վեհափառութեան։ Ի հոգևորականաց Թիֆլիսոյ ոչ զլացան նուիրել զաշխատութիւնս իւրեանց Գէորգ աւագ քահանայ Տէրտէրեան, Սարգիս աւագ քահանայ Աղաջանեան, Գէորգ քահանայ Գնունի և սարկաւագն Վազգրես Յովսէփեան։

Ի 14 յուլիսի Թողի զԹիֆլիս և գնացեալ հասի ի Վլադիկավկազ, յորում կարի սակաւութիւ Հայք հանգանակելոյն յօգուտ Ճեմարանի գ380 մ։ Ի քաղաքի անդ առանձին բարեհիրութեամբ օգնական եղեն ինձ Պետրոս քահանայ Կուսիկեան, որ վայելէ զհամակրութիւն համայն ժողո-

վրդեան տեղւոյն, Պ. Յովհաննէս Տէրտէրեան, երեսփոխան եկեղեցւոյն Պ. Սիմէօն Օթմարեան և Պ. Մխիթար Սիմէօնեան։ Ի Վլադիկավկազէն գնացի ի գիւղն Արմաւիր, որոյ ժողովուրդն համախօսական վճռով նուիրեաց յօգուտ ճեմարանի ի հասարակական գումարոյ իւրոց ղ300 մ. և ղ29 մ. առանձնապէս, որոյ վասն աշխատ եղեն Վարդան աւագ քահանայ Տէր Գասպարեան և Յարութիւն քահանայն։ ՅԱրմաւիրէ գնացի ի Նորն-Նախիջեւան։ Ի քաղաքի անդ հրաւիրեալք ի տուն քաղաքագլխոյն անձինք նուիրեցին ղ200 մ. և ունէի շարունակել ղՀանգանակութիւն, սակայն ոչ կարացեալ յամել անդ, յանձնեցի մեծապատիւ քաղաքագլխոյն Սահակայ Ալազալեան ղթերթս ստորագրութեան, որ իբրև ներկայացուցիչ քաղաքին խոստացաւ առ նուազն ղ1000 մ. Հանգանակել յօգուտ ճեմարանի և առաքել։ Պ. Պօղոսեանն առաքեալ է արդէն ի կողմանէ իւրմէ ղ200 մ. նուէրս։

Ի Նախիջեւանայ գնացի ի Մօսկվա, ուր Հայաղն ժողովուրդ ամենայն պատրաստականութեամբ մատոյց ղիւր նուէրս յօգուտ Գ. ճեմարանի և պարագլուխ նորին եղև մեծ. Պ. Յովհաննէս Յովնանեան, որ նուիրեաց ղ1500 մ։ Հասարակութիւնն Մօսկվայի նուիրեաց ղ3000 մ։ Ի Մօսկվայի անդ առանձին իմն գոհունակութեամբ ցանկալի է ինձ յիշել առաջի Վեհափառութեան Ձեր ղՀայրենասէր և ղՀայրապետասէր Պ. Յովհաննէս Յովնանեան և ընծայանդամ հոգևոր կառավարութեան տեղւոյն ղՅակովբ աւագ քահանայն Սուրէնեան, որ մեծաւ բարեսիրութեամբ և հայասիրութեամբ աջակցեալ աշխատ եղև ընդ իս։ Նմանապէս ցանկալի է ինձ յիշել զՊարոնեան Էկիզեար և Եզեան, որք աշխատակից եղեն ինձ։ Եւ քանի չէր իմ ժամանակ այլ եւս անելոյ քաղաքաց ուրոյն ուրոյն, բարւոք համարեցայ դնալ ի տօնավաճառ քաղաքին Նիժնի, յորում և Հայքն ժողովին։ Թէպէտ և անյարմար էր միջոցն, սակայն հայկազունք ի զանազան քաղաքաց ի տօնավաճառն անդ ժամանեալք հայրենասիրութեամբ իւրեանց նուիրեցին յօգուտ ճեմարանի ղ2061 մ., յորոց միջի նշանաւորք գտան Հայքն Ղզլար քաղաքի, զիւսաւորապէս բարեպաշտ եղբարքն Իզմիրեանք և Պ. Գ. Մամաջանեան, և Բագուաբնակ Հայքն ընդունին։ Առանձին իմն գոհունակութեամբ ցանկամ յիշել ի Նիժնի անդ զմեծապատիւ Սիմէօն Իզմիրեան, զՊ. Գրիդոր Սուլթանշահ, զՊ. Գաբրիէլ Բէկլարեան, զսարկաւագն Սիմէօն Մարմարեան ի Նորոյ-Նախիջեւանայ և զսարկաւագն Բաղդասար ՀԱստրախանայ, որք շրջէին ընդ իս ի հանգանակել։

Ի տօնավաճառէն Նիժնւոյ շտապաւ վերադարձեալ գնացի ի Պետերբուրգ, որոյ սակաւաթիւ Հայքն ամենայն յօժարութեամբ ընկալեալ զհաւատ Վեհափառ Հայրապետիդ առատութեամբ մատուցին զնուէրս իւրեանց։ Առանձին շնորհակալութեամբ ցանկամ յիշել զՀայրենասէր և զՀայրապետանուէր մեծ. Պ. Մկրտիչ Սանասարեանն, որ անձամբ նուիրեալ 1500 մ., զոր մի ամբողջ շրջեալ ընդ իս օգնութիւն բազում ընծեռեաց։ Նոյն առանձին շնորհակալութեամբ ցանկամ յիշել զմեծ. Պ. Կարապետ Եզեան, զոր ոչ Հայրենասիրացն Պետերբուրգոյ համարել արժան է, Սակաւաթիւ Հայքն

Պետերբուրգայ նուիրեցին ղ3508 մ., ի նոյն հաշիւ են 500 մ. յեկեղեցական գումարաց։ Եւ քանզի ոմանք ի Հայոց Պետերբուրգայ բացակայ էին, Թողի վասն նոցա ղյորդորական նամակս և մեծ. Պ. Սանասարեան և Պ. Եզեան յանձն առին ստանալ ի նոցանէ ղդրամս և առաքել, որ լինելոց է գէթ 500 մ։ Իշխանն Աբամելիքեան հոգալարձու եկեղեցւոյն խոստացաւ առանձին նամակաւ պարտ անձին համարել առաջի Վեհափառ Տեառնդ փոխանակ 150 մանէթից ամ յամէ կրկնակի վճարել յայսմհետէ։ Այլև մեծ. Պ. Սանասարեան իմացեալ ղցանկութիւն իմ որ վասն կազմելոյ զաշակերտական դրատուն, ժողովելով ղդրեան ընծերցանութեան, ղոր օրինակ ժողովեալ է իմ և գնեալ արդէն հատոր հարիւր, առ որ յորդորէի և զայլս, խոստացաւ ընծայել գկարևոր դրեանն, յորժամ մատուցից նմա ղցուցակ դրեանց ընծերցանութեան ընտրելոց խորհրդակցութեամբ ընդ Պ. Եզեանի։ Երկոքին ի Հայոց բնակելոց ի Պետերբուրգ պարտ յանձինս կալան առաքել յայսմհետէ ամի ամի գնուէրս յօգուտ ճեմարանի. Պ. Յովհաննէս Դէնիբեանն ղ50 մ. և Գէորգ Դաւթեանն ղ20 մ։ Ոչ կամիմ ընդ լռութեամբ անցանել գերկոցունց քահանայիցն Պետերբուրգայ զՅովհաննէ Պօղոսեան և զԳէորգայ Խանթարճեան, որք յօժարեցան աշխատակցել ինձ։

Յետ այնորիկ փութացայ գալ Հասանել ի Ս. Էջմիածին առ ի համբուրել զՍ. Աչն Հերդ Վեհափառութեան, քանզի ժամանակ իմ լցացեալ էր արդէն։ Հասեալ ի Թիֆլիս շահեցայ ժամ մինչ և գնացի ի Գօրի, ուր հրաւիրեալ զՀայկազունս տեղւոյն ի նուիրատուութիւն, անձինք չորեքին սկիզբն արարին հանգանակութեան նուիրեալ ղ50 մ., ուստի Թողի և անդ ղթերթս ստորագրութեան խոստումն առեալ ի Սահակոս ա. քահանայէ Տէր Սահակեան, յեղիշէ քահանայէ Սահակեան և ի Պարոնայցն Գրիգորէ Դաւթեան և Գալուստէ Սահիանեան վասն շարունակելոյ զհանգանակութիւնն, և զնուիրեալ ղրամն առաքել ի Ս. Էջմիածին։ Այլև Պ. Դաւթեանն, որ ձայնաւոր անդամ է քաղաքային վարչութեան, խոստացաւ համոզել զի քաղաքն Գօրի նուիրիցէ ղ300 մ. ամ ըստ ամէ յօգուտ ճեմարանի ի պահպանութիւն միոյ որդեգրի։

Մօսկվայաբնակ բարեպաշտ տիկին Նունէ Սահիանեան ի Թիֆլիս քաղաքէ, իմացեալ յինէն թէ Վեհափառ Տէրդ ցանկայ ունել զնոր եկեղեցական շապիկս վասն ժամերգու աշակերտաց ճեմարանի, ղոր ղգենուցուն ի մեծահանդէս տօնս, զառանձին ստորագրութիւն սահմանեաց, նուիրեալ նախապէս ինքն և իւրայինքն ղ100 մ. և զթերթն ստորագրութեան հանդերձ ղրամովքն Թողի առ նոյն ինքն պատուական տիկնին, որպէս զի հանգանակեալ, գործակցութեամբ բարեսէր Տ. Յակոբ ա. քահանայի Սուրէնեան զկարևոր գումարն ի Հայաստն և ի հայասէր տիկնանց որ ի Մօսկվայ, զսուրբ ցանկութիւն Հերդ Վեհափառութեան ի կատար ածցեն։

Ի վերոյիշեալ գումարաց են որ ժողովեալք են և են որ ապառիկք։ Առ ձեռն պատրաստ գումար գոյացաւ 9798 րուբլի., յորմէ ըստ պատուիրանի Հերդ Վեհափառութեան գնեցան տպագրեալ տումնակք փոխա-

դարձ ընկերութեան և երկաթուղւոյ Ցամքով — Սարատովի արժողութեամբ 7826 մ. ծախուքն հանդերձ, որք նշանակեալ են ի կրկին հաշուետոմս առաքեալս ի կողմանէ առևտրական տանն Վօլկովի և յառանձին անդորրագրի, զորս պատիւ ունիմ ընդ սմին ներկայացուցանել Ձերում Վեհափառութեան։ 200 մ. արդէն ստացեալ են ի պ. Պօպօյեանէ յառաջագոյն։ 74 րուբլի յանձնեցան Տ. Ցակոբ աւագ քահանայի Սուրէնեան ի Մօսկվայ վասն գնելոյ ընդ առ ինքն գտանեցեալ փողոյն զնցնօրինակ տակոսաբեր տոմսակս։ Զ1350 մանկեմս հատուցեալ է նոյն Տ. Ցակոբ ա. ք. Սուրէնեան ի դին ձրմոյ և մրոյ վասն տպարանի, որպէս և հեռագրեալ է նա ինքն, և զորոց հաշիւս ստացեալ յանձնեցի, ըստ հրամանի Ձերում, Տպարանական ժողովոյն, և մնացեալ 348 րուբլիք վճարեալ են ճանապարհածախք, որոց զհաշիւն, նմանապէս և 200 րուբլեաց ի Սինօպէն ինձ տուելոց, պատիւ ունիմ, ըստ պատուիրանի Ձեր Վեհափառութեան, ներկայացուցանել ընդ սմին ի դիտութիւն Սինօդի։

Վեհափառ Տէր, զպարտիս և զպաշտօնս, զոր հրամայեցիք ինձ, օրհնութեամբ և սուրբ աղօթիւք Ձերովք կատարեցի որքան հնար եղև. քարոզեցի և ծանուցի ժողովրդեան զմեծամեծ գործս Ձերդ Վեհափառութեան, որք անմահ արձան գոլով անուան Ձերում ձեռնարկին վասն բարոյական և մտաւորական բարերարդ ազգիդ հայկեան աղդի։ Զայս նուիրական նպատակ ի նկատի ունելով, ոչինչ ի ծանուցս համարեցայ զզանազան նեղութիւնս և զտառապանս առաւել քան զտան հաղար վերստս յընթացս միոյ ամսոյ շրջագայեալ, մանաւանդ զի ականատես և ականջալուր լինէի ազնիւ զգացմանց հայրենասիրութեան և հայրապետասիրութեան խորհուն և մտածող Հայոց, որք մխիթարին և ոգևորին բոլորովիմբ ջերմ համակրութեամբ, տեղեկացեալ ճշմարտապէս մեծամեծ գործոց յաղագս բարոյական վերակենդանութեան Հայոց ձեռնարկելոց և կատարելոց ի Ձերմէ Վեհափառութենէն, որով աշխատ լինիք զՍ. Էջմիածին աղբիւր շնորհաց և իմաստութեան առնել, որպէս էր երբեմն յաւուրս բարեբաղդութեան Հայաստան աղդիս։

Ամենայն Հայքն ամբարձեալ ունին զաչս իւրեանց առ Արարատեան Մայրն մեր Ամոռ Սրբոյ Էջմիածնի և առ Գէորգեանն ճեմարան, և ակնկալեալ տկն ունին և պատրաստք են յօժանդակութիւն, եթէ ի վայելումն բարի պտղոց յապագայս յուսալ կարիցեն։

Ուստի յուսադրեմ, Վեհափառ Տէր, զՀայկեան ժողովուրդն, թէ ճեմարան մեր ունի գուն գործել առանց իրիք կասկածանաց, ըստ ցանկութեան բարեսիրացն, պատրաստել բարւոք կառավարութեամբ, կրթական կրթութեամբ. և մարդավարի դաստիարակութեամբ զօգտաւէտ պաշտօնեայս ազդի։ Յուսադրեմ թէ աշակերտեալքն ընդ յարկաւ Գէորգեան ճեմարանի պարտին և ունին ճոխանալ ազգային ուսմամբք արտաքնովքն հանդերձ և մաքրակենցաղ դաստիարակութեամբ մնակեալ կրթեալ բարգաւաճեալ զիիտս և զսիրտս իւրեանց միանգամայն, վերստին ծնեալ յա-

ւաղանի բարոյական կենդանութեան ընդ հովանեաւ դրօշակի, յորոյ վերայ դրօշմեալ են. Լոյս, Ճշմարտութիւն, Բարութիւն։ Եւ փրկաւէտ ակնկալեցաս առհաւատչեայ իմաստուն և հայրենասէր Տնտեսդ և Պաշտպանդ Տանն փրկութեան մերոյ Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի և քաջարթուն Հովանաւորդ և Տնօրէնդ Գէորգեան Ճեմարանի էք։

Ամենախոնարհաբար մատուցեալ Ձեր Վեհափառութեան զներկայ խոնարհագոյն յայտարարութիւնս, աղաչեմ զՎեհափառ Տէրդ իմ հայիլ ներող աչօք ի թերութիւնս, զորս գուցէ նկատիցէք, վերաբերեալ զպնոսիկ մեծաւ մասամբ անձկութեան ժամանակիս և աճապարմանս, որով գուն գործէի, պի ըստ հաճոյից կամաց Ձերդ Վեհափառութեան ի նշանակեալ ժամանակին պատրաստ գտանիլ ի Սուրբ Էջմիածին կարիցեմ։

Ամենախոնարհ ակնածութեամբ և կատարեալ հաւատարմութեամբ և հպատակութեամբ մատուցեալ ի համբոյր Սուրբ Գարշապարացդ բաղդատուր համարիմ զանձնս կալ մնալ

Ձերոյն Վեհափառ Տէրութեան
ամենախոնարհ ծառայ և որդի հոգևոր
Խոչէն Վարպապետ Սիմէոնէ.

Ի 22 Սեպտեմբ. 1879 ամի
Ի Սուրբ Էջմիածին։

Վեհափառ Հայրապետի հրամանով և տնօրէնութեամբ հրատարակելով Մայր Աթոռիս տարեկան մուտքը և ծախսը, օրինակ անցեալ 1878 թուին, կարևոր է տեղեկացնել նոյնպես թէ ներկայ Վեհ. Կաթողիկոսի օրով Էջմիածնի Մ. Աթոռը մերձաւորապէս որքան գումար ժողովել է և որքան ծախսել է, ուրեմն որքան աշխատութիւն և գործեր պիտի բարբառեն, երբ խօսքերը սպառնալու են։ Մի և նոյն ժամանակ հարկաւոր է յիշել, որ Վեհ. Կաթողիկոսի Էջմիածին հասած ժամին (1867 թ. ապրիլի 7) Աթոռիս գանձարանը յետագայ աննախանձելի դրութեան մէջ կգտնվէր։

	Մանէթ	կոպ.
Աթոռապատկան	940	—7¾
Վիճակապատկան	9,907	—12¼
Որբապատկան	979	—29¼
Աւանդապահութեան	3,835	—43½

Նոր շինո-ըն-նէը։

	Ման.	կոպ.
Ճեմարանի շինութեան համար ծախսված է . .	53,067	—59
1872 թ. շինութեան ճարտարապետի ապանվելուց յետոյ 1873 թ. ճարտարապետական քանի մի կապերը չիմանալուց և գործ չդրվելուց առաջ եկած խախտմունքի առիթով և կրկին յատուկ ճարտարապետ բերելու, միանգամայն խախտվածները վերաշինելու, տանիքը փոխելու համար	13,251	—89
Հրկիզված մասի վերաշինութեան ծախսվածը մանրամասն .	30,000	— »

Ճեմարանի նոր լուհանոցի, կահ կարասիքի, դասագրքերի ևլն.	6,743— »
3 Պահարանների (Թանգարանի) շինուածեան համար	12,390—34⅞
Դալմա անուանված առուի համար (նպատակին չկարողացաւ ծառայել)	11,314—60
Բիւրականի Հայրապետական ամարանոցի շինուածեան	13,040— »
Ճեմարանի հիւանդանոցի շինուածեան համար	5,245—16
Լճի շրջակայ պատերի մէջերը լցնելու, ծառեր տնկելու, բուլվար շինելու, փոքր անտառ շինելու, Վաղարշապատ անուանված հիւրատան վերանորոգուածեան, մատենադարանի առջևի ընդերցարան սենեկի շինուածեան, Աթոռի մէջ բերուած խմելու առուն (քանքան) առատացնելու համար բացուած հորերի.	15,000— »
Յովանդակ	
Ճեմարանի շինուածեան և վերաշինուածեան	96,319—48
Կահկարասիքի և դասագրքերի	6,643— »
Պահարանների շինուածեան	12,390 34⅞
Դալմա առուին	11,314— »
Բիւրականի ամարանոցի	13,040 60
Ճեմարանի հիւանդանոցի ևլն.	5,245—16
Լճի, անտառի ևլն.	15,000— »
	159,952—58⅞
Ասլև տպարանը, որ բոլոր իւր հնոտի պարագաներով հաղիւ 1000 մ. արժէր, այժմ իւր հարուստ և յարմարաւոր պարագաներով արժէ մօտ	15,000— ».

(Տպարանի հարստանալուն հայրենասիրաբար օժանդակեցին պատուական Պարոնները—Յովհաննէս Ցոլքանեանը, ընծայելով բոլոր մամուլներ և ուրիշ պարագաներ և Մկրտիչ Սանասարեանը, ընծայելով ամբողջ մի հարուստ ձուլարանի պարագաներ. Խորին և անկեղծ շնորհակալութիւն կմատուցանվի դարձեալ այս պատուական Պարոններին.)

Ասյս ամեն շինուածիւններից յետոյ, որոնք այսօր Աթոռի և ազգի թանկագին սեփականութիւն են, Աթոռիս գանձարանում կայ այժմ պատրաստ գումար (տոկոսաբեր զանազան տեսակ արժէքտումներ) մօտ 350,000 մանէ, որոնց տոկոսիքը յատկացած են Ս. Գէորգեան Ճեմարանին.

Դեռ ևս քանի մի շինուածիւնների մեծ ղգալի կարօտութիւն կայ. նախ վերջացնելու է իշարկէ Ճեմարանի նոր ննջարանի շինուածիւնը, որի վերայ արդէն ծախսված է, ինչպէս ծանուցվեցաւ նախընթաց ամսատետրում, 27,489 մ.; Ցետոյ շինելու է Վեհարան, որովհետև ներկայումս գտնվածին տեսնողը չի վստահանայ ընդհանուր հայկական ազգի Հայրապետանոց ասել: Շինելու է Աթոռավայել հիւրատուն իւր ամեն կարգուսարքով: Շինելու է յարմա-

բաւար միաբանական բնակարան, որովհետև ներկայ խուցերը բոլորովին հնացած են, անյարմար, մուխ և խոնաւ։ Եւայլն։

Մինչև 1878 ի՞նչ վերջն եղած հանգանակութիւններ։

Ճեմարանի շինութեան և էջմիածնի վերանորոգութիւնների համար բացված նպաստահաւաքութիւններից, (Թիֆլիսից Թիֆլիսի Ցանձնաժողովի և մի քահանայի ձեռով ստացած 499 մանեթի 20 կոպէկի հետ), ստացված է բոլոր ընդհանուր ժողովարարութիւնից	24,496—13
Ուխտաւորներից	4,949—84
Հրկիզութեան առիթով կամաւոր նուէրներ . .	7,200— »
Զանազան անձներից	5,000— »
	41,645—97

Մինչև 1867—68—69 թուականն էջմիածնի տարեկան բոլոր ծախսը եղած է 25,000—35,000 մանեթ։ 1870 թուից սկսած հետզհետէ բարձրացաւ տարեկան ծախսը և 1878 թ. ծախսված է ճեմարանի և տպարանի ծախսի հետ միասին մինչև 76,000 ման.։

Մոտ է 1878 ամի վան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի։

ի տոմարէ Աթոռապատկան արբենից.

1	Մնացորդ առ 1ն Յունվարի 1878 ամի.	.	5,062—31½
2	Գանձանակագրամ յանուն Ս. Էջմիածնայ.	.	1,720—97
3	Լուսագին յանուն Մայր Աթոռոյ.	.	121—90
4	Ի կտակաւանդութենից.	.	77—60
5	Ցուխտատեղեաց.	.	2,989—42
6	Գին վաճառեալ մմոց ի տաճարին Էջմիածնի.	.	70—40
7	» վաճառեալ մանրամասն իրաց.	.	178—65
8	» վաճառեալ պտղի ցորենոյ.	.	5,936— 4
9	» վաճառեալ Աթոռապատկան դրեանց.	.	61—55
10	» վաճառեալ պտղի իւղոյ և պանրի.	.	700— »
11	Նուիրագրամ յանուն Էջմիածնայ.	.	110— »
12	» ի Թամլեանց եղբարց.	.	44—50
13	Ի կայից հանգուցեալ վարդապետաց.	.	26—60
14	Արդիւնք մեռանողհնութեան.	.	831—67½
15	Ցաւելեալ դրամ ի ծախուց Աթոռոյ.	.	3,069—74
16	Գաղեալ դրամ.	.	100— »
17	Հարկադրամ և այգեհարկ.	.	4,077—19
18	Արդիւնք կալուածոց որ ի Քիշնեւի	.	8,000— »
19	Կապալադրամ կալուածոց Տփխուս.	.	5,728— »
20	» Հողոցն Օգէխէչլաճի.	.	1,680— »
21	» Կրպակաց դիմեվաճառութեան Վաղարշապատու.	.	2,489—60
22	» Կշռոյն և սպանդանոցին.	.	250— »
23	» Կրպակաց հացագործութեան.	.	432—70
24	» Տանն որ Հանդէպ Հասարակաց աղբերն.		200— »
25	» Գոմոց և մարագի.	.	20— »

26	»	Ղրս արօտատեղւոյն.	150— »
27	»	Բաղանեաց.	180— »
28	»	Այգւոյն Գանձակու. . . .	446—65
29	»	Այգւոյն Օշականու. . . .	210— »
30	»	Այգւոյն Աշտարակայ Ջորահորիկ կո-	
	»	չեցելոյ.	150— »
31	»	Սաղմոսավանից.	76— »
32	»	Ցինուպան գեղջ.	440—21
33	»	Կրպակաց Աղէքսանդրապօլու. . .	647—80
34	»	Այգւոյն Աշտարակայ Գալուստ Եպսկի.	122—50
35	»	Այգեաց Վաղարշապատու. . .	341— »
36	»	Ղոի այգւոյն.	200— »
37	»	Այգւոյն Դուխուրղանու. . .	60—44
38	»	Կրպակաց Ախալքալակու. . .	48—21
39	»	Կրպակաց Վաղարշապատու. . .	1,905— 6
40	»	Ծառատնկոց Տոլակի. . . .	75— »
41	»	Հողոցն Տոլակի.	100— »
42	»	Դաշտ Հողոցն Օշականու. . .	50— »
43	»	Տանն Ախալցխոյ.	9—35
44	»	Այգւոյն Փարաքարու. . . .	50— »
45	»	Այգեաց Երևանայ.	1,329— 8
46	»	Պարտիզացն ի Ծիրուղ գեղջ. . .	64—30
47	»	Հնձանափոս Հողոյն Վաղարշապատու.	30— »
48	»	Հողոց Խաթունարխայ և Փիլթափայի	1,800— »
49	»	Բնակարանի գաւառական կառավա-	
		րութեան Էջմիածնայ. . . .	697—14
50	»	Գիւղօրէից Գեղարդայ վանից. .	550— »
51	»	Մողնի գեղջ.	905— »
52	»	Հողոց Գետարգելոյ.	1,450— »
53	»	Ջրաղացից Երևանայ.	1,125— »
54	»	Օշական գեղջ.	6,242— »
55	»	Մաստարու.	1,500— »
56	»	Եղուարդու.	9,722— «
57	Արդեանց վանօրէից.		517—65
			75,173—91

ի տուրսն վճարապարտական արտեանց.

1	Մնացորդ առ 1ն Յունվարի 1878 ամի. . .		2,106—40½
2	Ի վիճակէն Նոր Նախիջևանայ և Բեսսարաբիոյ. .		436— »
3	Ի կառավարութենէն Նուխուոյ ճանապարհածախք վա-		
	նահօրն ճալէթու.		74—20
4	ճանապարհածախք քննչի վասն Արվանեանց քհնյի.		50— «
5	Ի վիճակէն Երևանայ.		19,466—36
			22,132—96½

ի տուրսն Տպարանական արտեանց.

1	Մնացորդ առ 1ն Յունվարի 1878 ամի. . .		2,049—55¼
2	Գին «Արարատ» ամսագրի բաժանորդագրութեան,		
	վաճառեալ մատենից և զանազան տպագրեալ թղթոց.		9,700—90
3	Գին ձայնագրեալ շարականաց.		2,758—35
4	Գին ճաշոց մատենից.		5,460—91
			19,964—71¼

ի տոմարին ատենապահութենան սրտից.

1	Դին համեմի երիվարի օտարական հանգուցեալ Սարգիս քահանայի.	3— »
2	Դրամք և Տոմք պատկանեալք վանից Սաղիանու.	1085—60
3	Գրաւադրամք ստացեալք ի կապալառուաց այգւոյն Զօրավարայ.	68—50
4	Գրաւադրամք այգւոյն Նորագեղայ.	130— »
5	» 5 կրպակին և տանն որ ի Տփխիս, տոմս.	700— »
6	» Այգւոյն Գալուստ Եպիսկոպոսի որ յԱշտարակ.	25— »
7	» Հողոյն Գողթայ.	100— »
8	Դրամք յօգուտ որբոց և այրեաց.	5—29
9	Ի վաճառմանէ կալից հանգուցեալ Կարապետի Անանեան.	24—39
10	Կտակաւանդեալ դրամ ի Լաղարեանցէ յօգուտ որբոց և այրեաց.	500— »
11	» Թամնցաղրամ յանուն միաբանից.	15— »
12	Դրամք վասն ծախուց Խաչակայ Օրբէլեանց ի հիւանդանոցին Երևանայ.	32—32
13	Գանձանակադրամ յանուն վանից Երուսաղէմայ.	278—78
14	Ժողովեալ դրամ յօգուտ վտանգելոցն Շամախեցւոց.	47— 3
15	» յօգուտ սովելոց Հայոց ի Պարսկաստան.	884— 4
16	» յանուն սովելոց Հայոց ի փոքրն Ասիայ.	966—25 ½
17	» յօգուտ գաղթականացն Հայոց Վաղարշակերտցւոց և Բագրեւանդցւոց	17,341—21 ½
18	Դրամք պատկանեալք ձեմարանի Ամիրոդյս.	15,365—25
19	Կտակաւանդեալ դրամ յանուն վանուցն ս. Երուսաղէմայ և ս. կարապետի.	50— »
20	Տոմս Պրիկազի յանուն Եկեղեցւոյն Պուբայու.	1,000— »
21	Նուիրաղրամ յանուն և յօգուտ աղքատ այգեստարց Ղզլարցւոց ձեռնելոց ի ցրտահարութենէ.	285—77
22	Գրաւադրամ ի ժամավաճառաց Ամիրոդյ.	200— »
23	Ի կապալառուաց կօշկակարաց ձեմարանի.	174—69 ½
24	Գրաւադրամք այլ և այլ անձանց կապալառուաց	7,700— »
25	Սննդադրամ Սերովբէ Եպիսկոպոսի.	625— »
26	Նուէր ի Պարսից Արեգակնափայլ Շահէ յանուն աղքատաց.	300— »
		47,787— 8 ½

Մախթ.

ի տոմարին վիճակագրական սրտից.

1	Ծոճկադրամ փոխանորդին Երևանայ, պաշտօնակալաց Թեմական ատենին և դիւանատան ծախք.	2,449—78 ½
2	Ծոճիկ Անանիա Վ. գործակալին նոր Բայազիտու.	112—50
3	Ճանապարհածախք Թեմական տեսչին Երևանայ.	57— »
		2,619—28 ½

ի տոմարին Տպարանական սրտից.

1	Վասն զանազան ծախուց Տպարանի և ի զին պարագայից	5,922— »

ի փոխարէն Ա–անդամագոհութեան արդիւնից.

1	Փոխանցուցեալ Հայոց ազգային մատենին գրաւոր դրամ այգւոյն Նորգայ.	100— »
2	Գրաւադրամք վերադարձուցեալք կապալառուաց	7,500— »
5	Դրամք և տոմսք Սադիանու վանից տուեալ վիճակային Կոնսիստորիային Ճամխուոյ. .	1,085—60
6	Անդադրամ տուեալ Սերովբէ Եպիսկոպոսի ի հաշիւ և ի վճարումն պարտուց Հախպատու վանից. .	625— »
7	Ի դրամոց վանիցն Երուսաղէմայ առաքեալ առ Պատրիարքարան ի Կ. Պոլիս	303—68
8	Ի ճեմարանական դրամոց առաքեալ ի դրամատունն .	9,238—25
9	Ի դրամոց գաղթականացն տուեալ գաղթականացն. .	920—45
		19,772—98

Նշ. — Ա.) Մայր Աթոռս եկամուտի մէջ գիւղական կալուածներից ստացված տարեկան արդիւնքները ամեն տարի միօրինակ չեն կարող լինել, երբեմն նուազ և երբեմն ներկայ մուտքի ցուցակին համեմատ և կամ աւելի ևս կարող են լինել։

Բ.) Օտիսէյդաճի հողերի եկամուտը Հին-Խրիմի ս. Խաչ վանքին կվերաբերվին, և ս. Էջմիածնի պահանջները ստանալու համար առժամանակեայ կերպով կապված էին մինչև 1878 տարի։

Գ.) Տփխիսի, Փիշնևի Գանձակի և ուրիշ տեղերի Էջմիածնական կալուածների եկամուտը տարուէ տարի կրաղմապատկվին։

Դ.) Հայրապետական վիճակ եղող Երևանի թեմից զատ, բոլոր միւս վիճակներում ևս յանուն ս. Էջմիածնի և Հայրապետական Աթոռի պոչի, հոգէբաժին, Աթոռ և ևն. եկամուտներ կան, որոնց առժամանակեայ թողված են առաջնորդների, թեմական տեհանների և հոգևոր կառավարութիւնների պիտոյքների համար մինչև որ նոքա իւրեանց սեփհական արդիւնքներով ապահովվին։ Բայց մինչև ե՞րբ . . . ։

Ե.) Կան շատ եկամուտներ, որ զանազան տեղեր և առժամանակեայ յատկացած են թեմական պրօնոցներին ի նպաստ, մինչև որ նոքա ուրիշ աղբիւրներով ապահովվին։ Ցիշեալ եկամուտներ են Տփխիսի Ներսէսեան պրօնոցին թողված Թէլէթի, Ջահնապադի, Ծիրանաւորի և ուրիշ ուխտատեղերի արդիւնքները, Արցախի պրօնոցին թողված Գանձասարի, Խոթաւանքի և ուրիշ տեղերի կալուածները և արդիւնքները, Երևանի պրօնոցին թողված ուխտատեղերի և ուրիշ արդիւնքների մասը ևն. ևն։

Զ.) Այս հաշուից դուրս կմնան պոչ և ուրիշ անուններով ստացված արդիւնքները, որոնք զուտ դրամի չեն վերածված։

Ծախք ի 1878 ամի վասն Մայր Աթոռոյ Սբոյ Էջմիածնի։

		Ման.	Կոպ.
1	Ուտելեաց, ըմպելեաց, վառելեաց ևն. .	14,216	– 56

2	Վարձ համայն ծառայից . . .	7,672—69
3	Հանգերձապին ևլն. . . .	4,403—80
4	Համայն մշակապործութեանց և մշակաց	3,869— 1
5	Ճանապարհածախք ապրանաց, երթևեկութիւնք ևլն.	3,270—80
6	Վերանորոգութեանց շինութեանց, կառուց, սայլից, կահկարասեաց ևլն. .	2,606—37
7	Պարգև և ողորմութիւն . . .	2,382—17
8	Նահկարասեաց և պարագայից ապարակի ևլն.	2,999—55
9	Հեռագրաց և սուրհանդակատան (փոշտի)	455—38
10	Փաստաբանի և ճանապարհածախք .	1,238—89
11	Թամոց	250— »
12	Բժշկի և դեղօրէից . . .	431—27
13	Գրագրի դիւանատան Վ.հ. Հայրապետի	154— »
14	Ճանապարհածախք Մատթէոս Եպիսկոպոսի Իզմիրլեան ց/կ. Պօլիս 250 մ. և Վահան վարդապետի Պարտիզակցոյ վան երթևեկելոյ Ալաշկերտ ևլն 80 մ.	330— »
15	Վասն ապահովելոյ ի հրդեհէ զէջմիածնապատական կալուածս ի Տփղիս .	249—16
16	Քաղաքական հարկք վասն յիշեալ կալուածոց	871—52
		45,401—17
17	Վասն Գէորգեան Ճեմարանի.	
ա	Ուտելեաց, հանդերձեղինաց, կահկարասեաց, վառելեաց, դասագրոց, վերանորոգութեանց ևլն. . . .	12,165 53 ½
բ	Ուսուցչաց	8,660—87
գ	Բժշկին, օգնականին, դեղօրէից .	803—61
դ	Ծառայից	1,733—75
ե	Ճանապարհածախք ուսուցչաց, երթևեկութեանց, ապրանաց ևլն. . .	1,577—55
զ	Սուրհանդակատան և հեռագրաց .	59—55
է	Եւրոպական լրագրաց . . .	130—28
		25,131—14 ½
	Համագումար ծախք.	70,532—31 ½

Տե՛ս.—ա.) Ս. Էջմիածնի ծախքի հետ հաշուած է ապարակինն (պլանին) ևս՝ որ տարեկան հինգ հազար մանէթիից աւելի գումար կըռնէ.

բ.) Այս հաշուից դուրս կմնայ թէ Էջմիածնի ապարակից, թէ դիւղօրէից և թէ պողինեներից ստացված բերքերը, որոնցից աննդեան համար գործ կդըրվի 320 խալուարից աւելի ցորեան, 600 լիտրից աւելի արդար իւղ և 800 լիտրից աւելի պանիր, 15 խալուարից աւելի ձաւար ևլն.

գ.) Նոն զանազան նաև պատահական ծախքեր, որ այս ցուցակում չեն երևում և վիճակներում գտնված Էջմիածնապատական կալուածներին կվերաբերվին, ինչպես Քիշնևի, Թիֆլիսի, Ալէքսանդրօպօլի, Գանձակի և այլն կալուածների նորոգութիւնների կամ նոր շինութիւններ աւելացնելու վե-

բայ եղած ծախսերը, որոնց համար կծախսվի նոյն ինքն կաղուածներուն եկամուտը, է որ մնացամբ և է որ ամբողջութեամբ։

***

Ցայտնի է ամենքին, ինչպէս և «Արարատի»-ի մէջ հրատարակվեցաւ, որ Վեհափառ Կաթողիկոսն տեսնելով 1872 թուին սուրբ Մեսրովբ Թարգմանչի գամբարանի վերայ Վահան Ամատունի մեծ իշխանի ձեռով 441 թուին կառուցեալ, հետզ 1635 թ. Փիլիպպոս Կաթողիկոսից նորոգված, եկեղեցին քայքայված և անշուք դրութեան մէջ, կամեցաւ և կարգադրեց, որ նորոգվի այն եկեղեցին վայելուչ շինութեամբ, որ և աւարտվեցաւ այս 1879 թուին Ռուսիայի Հայերի տուրքով, ինչպէս և եկեղեցու շինութեան արձանագիրն ցոյց կտայ։ Եկեղեցու նոր ձևն շատ վայելուչ է կամարաձև դռներով և մեծ լուսամուտներով, հոյակապ սեղանով և առանց սիւների և արտաքուստ կամարաձև և խաչաձև զարդերով։ Եկեղեցու մէջ շինված է վերնատուն կանանց համար։

Վեհափառ Հայրապետը Բիւրականի ամարանոցից վերադարձին Օշական գալով անձամբ տեսաւ նորակառոյց եկեղեցի և իւր գոհունակութիւնն յայտնելով ճարտարապետին, հոգաբարձուներին և մանաւանդ գիւղի հասարակութեանը, որոնք բացի եկեղեցու շինութեան վերայ աշխատող օտարական արուեստաւորներին ամենայն օր կերակրելուց, այլև շինութեան հարկաւոր նիւթեղէնները, կիր, աւազ և. իւրեանց սայլերով անվարձ կրելով, իրև մշակ կաշխատէին նոյնպէս անվարձ։ Նորակառոյց եկեղեցու օծումն Վեհափառ Տէրը բարեհաճեց Հոկտեմբերի 21ին նշանակել, որի մասին Սինօդը շրջաբերականով ծանուցած էր Հայաստն ժողովրդին։

Օծման նախընթաց օրը Վեհ. Հայրապետի հրամանով գնացին Օշական գեր. Անդրէաս Արքեպիսկոպոսն, գեր. Մեսրովբ Եպիսկոպոսն, գեր. Ներսէս Եպիսկոպոսն և վեց վարդապետներ և սարկաւագներ։ Եկած էին Մողնու Ս. Գէորգ վանքի վարդապետներ և շրջակայ գիւղերի քահանաներ և պսիրներ։ Եկած էր նոյնպէս շրջակայ տեղերից բազմաթիւ ժողովուրդ։ Բազմութիւնն այնքան խուռն էր, որ հազիւ եկեղեցական պաշտօնեաներ կկարողանային եկեղեցու մէջ կարգ կատարելու շարժել։ Հաւատացօղ այրեր և կանայք այնպիսի բարեպաշտական ցոյցեր կերևեցնէին, որ իրաւի կյիշեցնէին հայկական նախնի Աստուածպաշտութեան ոսկէդարն։ Օծման հանդէսից և ս. պատարագից հետզ եկեղեցու շինութեան հոգաբարձուներ—Եսայի աւագ քահանայ Ամատունի և պ. Մկրտիչ Մօրիկեան պատրաստել տուած էին հասարակաց համար նախաճաշ, Օշականի ժողովրդի նուիրած մատաղներով։ Որովհետև նորակառոյց եկեղեցին քանի մի կտրօտութիւններ ունի լրացնելու, ուստի ժողովուրդը հրաւիրվեցաւ նուէրներ անելու, որոնց ժողովողներն էին յարգելի պարոններ. Յովակիմ Շամքորեան (Վաղարշապատից), Փիլիպպոս Տէր Մատթէոսեան (Փարաքարից), Սիմէոն Շահալիլեան (Աշտարակից) և Մովսէս քահանայ Շահնազարեան (Երասխեան

Արմաւիրից) և նոցա հետ բազմաշխատ հոգաբարձուները։ Բոլոր նուէրներից գոյացաւ 560 մանէթ։

Դէպի հայկական ազգի կենդանութեան հոյակապ ախոյեաններից մին ազգի երախտագիտութեան, գարերով ապառիկ մնալուց ծանրացած, բայց մի և նոյն ժամանակ քաղցր և նուիրական պարտքը հատոյց վերջապէս մեր Աստուածընտիր ազգաշէն Հայրապետը։ Ուստի ազգովին երախտապարտ ենք Նորին Վեհափառութեան, որին այս պարծանքն վերապահած էր վերին Տեսչութիւնն, որովհետև դեռ 1850 թուին երջանկայիշատակ Ներսէս Ե. Կաթողիկոսն իւր կոնդակով նորոգելու մտադրութիւնն յայտնած է Սինօդին, բայց չէ յաջողած։ Խորին շնորհակալութեամբ ցանկալի է յիշել այստեղ հոգաբարձուների անունները. Եսայի ա. քահ. Ամատունու և պ. Մօրիկեանի, որոնք շատ աշխատութիւն գործ դրած են պանծալի գործի վերայ եկեղեցու շինութեան սկզբից մինչև վերջը։ Հարկաւոր է յիշել այստեղ, որ Ս. Մեսրովբի եկեղեցու զանգակատունը մնաց թերի և ծախսի կկարօտի, նմանապէս իսպառ նորոգութեան կարօտ է Վահան Ամատունի հայկազն մեծ իշխանի և սպարապետի դամբարանը, որ 15 քայլ հեռի է եկեղեցուց և շատ անշուք դրութեամբ կմնայ տակաւին, ուստի կհրաւիրէ Վեհափառ Հայրապետը հայրենասէր և հայրենական պարծանքների բեկորներին գին դնող հայերին արժանաւոր յիշատակարանով յարգել մի փառաւոր Հայի դամբարանը։

***

Ներկայ ամառտերում Սինօդի վճիռների մէջ ընթերցողը կարդալու է Վեհ. Հայրապետի հրամանով կայացած վճիռը Ալաշկերտի ժողովրդի անունով ժողովված և պահված փողի մասին։ Ցայտնի է որ Բագրեւանդ գաւառի, Բայազէդի, Վաղարշակերտի և շրջակայ տեղերի Հայերը վտանգվեցան պատերազմից և երկիւղից և աւարառութենից ստիպված գաղթեցին Ռուսիա, Էջմիածին, և իսպառ զրկվելով իւրեանց ստացուածքից և վարուցանքից զիմեցին օգնութեան համար Վեհափառ Կաթողիկոսին։ Այն տագնապելի և տառապելի միջոցում Վեհ. Տէրը հրամայեց նոցա տալ հաց Ամոռիս շահմարաններից և կերակուր միաբանութեան սեղանատունից և բժիշկ յատկացրեց նոցա հիւանդների համար։ Վեհ. Հայրապետը այս հազարաւոր ողբերգի ժողովուրդը երկար ժամանակ Էջմիածնի վանքում խնամելուց յետոյ, ոմանց Արարատեան դաշտի զանազան տեղերում զետեղելով, կարևոր դատեց շրջաբերական հրամանագրութեամբ հրաւիրել Ռուսիայի հայազն բնակիչներին կամաւոր նուէրներ անել աղքատ գաղթական համարիւն եղբայրների ապրուստը դիւրացնելու։ Ռուսիայի զանազան վիճակներից հետզհետէ ուղարկած են Էջմիածին յօգուտ գաղթականների 17,476 մանէթ 47 կոպ., որից Սինօդը դրամական օգնութիւն արած է ոմանց իւրեանց հայրենիք վերադարձածներին 1118 մ. 25 կոպ.։ Ամոռի զանձարանում աւանդապահութեամբ մնաց 16,358 մ. 22 կ։ Պատերազմի վերջը Վեհափառ Հայրապետը կամեցաւ Իւչքիլիսէի քայքայված վանքը նորոգել և պրված դպրոցը նորից կառուցանել Վաղարշակերտի և Բայազէդի հայազն

մանուկների կրթութեան համար, և այս նպատակով կանչեց Էջմիածին Բագրեւանդի առաջնորդ, նոյն և Իւչքիլիսէ կոչված Ս. Յովհաննէս վանքի վանահայր Յովհաննէս վարդապետին և խօսակցեց այս մասին։ Ուստի և հրամայեց գնել մեացած բոլոր գումարով 5% դրամանոցական տոմսակներ և տոկոսները գործ դնել նոյն վանքի մէջ և ուրիշ տեղերում կառուցանելի դպրոցների վերայ։ Վեհափառ Հայրապետը իւր համոզման համաձայն, որ համաձայն է ճշմարտութեանը, Ալաշկերտի Հայերի համար ժողովված փողը նոցա վերայ գործ գնելով, բացի վերոյիշված բազմատեսակ օգնութիւն ևս հասցնելուց նոցա, կ՚ուսայ որ իւր հոգևոր որդիներն ևս հետևելու են նորա արդար օրինակին և Ալաշկերտցիների անունով ժողովված փողերը թէ Երևանի և թէ Թիֆլիսի Մասնաժողովի ձեռով գործ պիտի դնվին յօգուտ էքսաւոր Ալաշկերտցիների, իսկ եթէ կարիք չեն տեսնում էքսաւորների վերաբերմամբ, թող գործ դնեն դպրոցների վերայ Ալաշկերտցիների համար։ Ապա թէ ոչ, անվայել գործ համարելու է մինի անունով ժողովել փողը, և միւսի համար գործ դնել, որ յանցանք է Աստուծու առաջ, խղճմտանքի առաջ, ժողովրդի առաջ և նոյն ինքն նուիրօղների առաջ, որոնք պիտի վշտանան անշուշտ, թէև գուցէ և չբողոքեն, որ իւրեանց նուիրած փողը ուրիշ նպատակով գործ կդնվի և իւրեանք բարոյապէս վիրաւորված և արհամարհված պիտի համարվին։ Սա ի հարկէ ներելի չէ այն անձներին, որոնք իբրև հասարակութեան առաջնորդներ ժողովել են նոյն գումարները։ Ուստի Վեհ. Հայրապետը կ՚ուսայ որ նոքա նպատակայարմար կերպով կվարվին։

***

Վեհ. Հայրապետ Ատրպատականի վիճակի Հայերի Առաջնորդ հաստատելով գեր. Գրիգոր Եպիսկոպոս Մուշեղեանին, գեր. Անդրէաս Արքեպիսկոպոսի տեղ, Արքեպիսկոպոսութիւն ևս շնորհեց նորան։ Գերապատիւ Հայրն այստեղից մեկնվեցաւ իւր թեմը գնալու, որ հեռաւոր և բազմակարօտ թեմերից մին է։ Կշնորհաւորենք գեր. Գրիգոր Արքեպիսկոպոսին իւր նոր նուիրական պաշտօնը և միանգամայն Վեհ. Հայրապետի նոր վարկը և վըստահութիւնը առ նա, մեր ամենայն սրտեռանդ բարեմաղթութիւններ նուիրելով։ Գրիգոր Արքեպիսկոպոսն գործունեայ է։ Կհաւատանք, որ նորին Գերապատուութիւն պիտի գոհացնէ Վեհ. Հայրապետը բանիմացութեամբ հովուելով իւր ժողովուրդը և հոգալով նորա բարոյական և մտաւորական պէտքերը։ Կ՚ուսանք որ ժողովուրդն ևս պիտի ճանաչէ իւր պարտքերը և միանալով Վեհ. Հայրապետի խնամածութեամբ կարգված նորընտիր առաջնորդին, օգնութեան ձեռը ձեռին տուած, առանց բաժանվելու, առաջնորդը և ժողովուրդը, սիրտը սրտի հետ կապված և հոգին հոգու հետ զուգախառնելով, պիտի մշակեն ազգային յառաջադիմութեան ասպարէզը։

***

Քանիցս նկատած ենք թէ «Մեղու Հ—ի» և թէ «Մշակ» լրագիրների թղթակցութիւնների մէջ այնպիսի անձնիշդ ոճեր, որոնք թղթակիցների խօսքին անհմտութիւն կ՚ցուցանեն։ Օրինակ «Մշակի» 178 Ֆ ում Համախոհ թղթ.

թակիչը դարձեալ նոյն խոշոր սխալ կանէ, գրելով թէ գպրոցը օձեցին։ Գըպրոցը երբէք չէն օձուած, այլ գպրոցը կըճնեն միայն, իսկ օձել կարելի է եկեղեցի և մկրտութեան կամ ձեռնադրութեան խորհուրդ կատարելիս։ Հարկաւոր է որ գոնէ խմբագրողներն ուղղէին այսպիսի խոշոր սխալներ, չասենք ոչինչ միւս սխալների մասին անհարազատ և անկանոն ոճերի վերաբերմամբ։

***

Ցաւալի իրողութիւն կատարվեցաւ Կարսում սեպտեմբեր ամսի 3 ին, երբ քաղաքապետը նահանգապետ Պ. Ֆրանկինիի հրամանով փակեց նախընթաց օրն օրհնված հայկական երկսեռ գպրոցները։ Ցաւալի է որ նոր նուաճված նահանգի մէջ այսպիսի անխորհուն գործ կըռնվի։ Պ. Ֆրանկինին չգիտէ թէ հայկական եկեղեցին, նոյն իսկ կայսերական օրէնքով, իրաւունք ունի հոգևոր գպրոցներ պահպանելու առանց աշխարհական գպրոցական իշխանութեան միջամտութեան։ Շատ և շատ ցաւալի է որ այսպիսի անգիտութեան շնորհով կշօշափվին ընդհանրական Վեհափառ Հայրապետի իրաւասութիւնը, Կարսի եպիսկոպոսի պատիւը և ժողովրդի զգացմունքը։ Վեհ. Կաթողիկոսը սեպտ. 25 ին հեռագրով պատուիրեց Կարսի առաջնորդին բանալ անմիջապէս հոգևոր գպրոցները և շարունակել ուսումն։ Հարկաւոր է յուսալ որ բարեխնամ կառավարութիւնը առանց վայելուչ ուշադրութեան չի թողնի այս վշտալի դէպքը։

***

Վերջին ամսատետրում քանի մի վրիպակներ սպրդած են, որ կշտապենք ուղղել և լրացնել։ Կրօնական յօդուածի մէջ տպվել է լսեցէք բառը (եր. 373 և 376) լսեցէք բառի փոխանակ։—Հանդիսաւոր բառը տպվել է (եր. 411) մեծահանդէս բառի փոխանակ։—Վաղարշապատի օրիորդական ուսումնարանի նոր վարժուհու ազգանունը բաց է թողված, որ է Մարիամ Մամիկոնեան, Թիֆլիսի օրիորդական գիմնազիոնում ուսումնասիրած օրիորդ։ Օր. Մամիկոնեանի աշխատութեամբ օրիորդական ուսումնարանը սկսած է բարեկարգվել և հետզհետէ առաւել ևս պիտի յառաջադիմէ ի մխիթարութիւն Վեհ. Հայրապետի, Որը վաղուց կցանկար ուսումնարանին այս ուղղութիւն տալ և Որի սրտեղրուհի էր օր. Մամիկոնեանը գիմնազիոնում։—Ալևճեմբարանի ուսուցիչների ցուցակում բաց է թողված, որ Հայկական լեզուի ուսուցիչը շուտ հասնելու է Էջմիածին։ Այժմ արդէն հասած է Պ. Անանիա Էլմասեան և կշարունակէ իւր դասերը։—Վեցերորդ դասարանի ընդհանուր պատմութեան դասերը ուսուցչական ժողովն առաջարկած է Խորէն Վ. Սահիանէին ուսուցանելու յանձն առնել, որով նորա շաբաթական դասերի թիւը պիտի լինի 28։—Պ. Քէրէստէճեան կատանայ վանքից բացի ոռճկից հաց, իւղ, պանիր, բրինձ։ Սորա վերայ է նոյնպէս Վեհ. Կաթողիկոսի բոլոր գրագրութիւն օրինակելու պարտքը։—Պ. Սադինեանը, բացի նկարչութեան դասերից, պարտաւորված է Ամոռի համար տարին 12 եկեղեցական պատկերներ նկարել։

***

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց շնորհել սեպտեմբեր ամսի 25 ից

մինչև հոկտեմբերի 25ը հետևեալ Կոնդակներ։

Կոնդակ, որով կհաստատէ Քեօրփալու գիւղի դպրոցի նորընտիր հոգաբարձուներ. Յովհ. Ք. Տէր Մելիքսեդեկեան, Մ. Յովհաննէսեան և Այր. Գրիգորեան։ Սեպտ. 28, 1879, № 449։

Կոնդակ օրհնութեան ի պատասխանի գրութեան Մեծ. պ. Յովհաննէս Յովնանեանին Մօսկվայում, որով շնորհակալութիւն կայտնէ 1500 մ. նուիրելու համար ի նպաստ Գէորգեան ճեմարանի ննջարանի շինութեան։ Սեպտ. 26, 1879, № 450։

Կոնդակ օրհնութեան պ. Անտոնի Թամբեանին Գէօրգիեվսկում տարեկան ուխտը (ամեն տարի Աթոռին մի ձի կամ մի ձիու փող նուիրելու) կատարելու համար, ուղարկելով 139 մ. 1877 և 1878 թուերի։ Սեպտ. 28, 1879, № 451։

Կոնդակ օրհնութեան Ատրպատականի հայ ժողովրդին, որով կկարգէ Անդրկաս Արքեպիսկոպոսի տեղ Գրիգոր Եպիսկոպոս Մուշեղեանին Ատրպատականի առաջնորդ, շնորհելով նորան Արքութեան տիտղոս։ Հոկտ. 1, 1879, № 460։

Կոնդակ օրհնութեան պ. Խաչ. Ալաթեանին Խլի-Ղարաքիլիսում իւր արդիւնաւոր երեսփոխանութեան համար։ Հոկտ. 4, 1879, № 469։

Կոնդակ օրհնութեան Խորէն վարդապետ Ստեփանէին, որով կշնորհէ նորան կերպասեայ կապտագոյն փիլօն ճեմարանի ննջարանի համար նուէրներ ժողովելու յանձնարարութիւնը արդիւնաւորապէս կատարելու համար։ Հոկտ. 4, 1879, № 473։

Կոնդակ Գևոնդ վարդապետ Յովակիմեանին, որով կշնորհէ նորան ակաունակուռ խաչ ժրաջան և հաւատարիմ պաշտօնակատարութիւնների համար։ Հոկտ. 4, 1879, № 474։

Կոնդակ, որով կհաստատէ Վ. Ագուլիսի երկսեռ դպրոցների հոգաբարձուներ — պ. Յով. Կոստանդեան, Ալ. Տէր Մկրտչեան, Յար. Շահնազարեան, գանձապետ — Թովմաս Ասլանեան և Մինաս Արասխանեան։ Հոկտ. 4, 1879, № 475։

Կոնդակ, որով կհաստատէ Որդնաւու ծխական դպրոցի հոգաբարձուներ. Գաղ. քահ. Տէր Մխիթարեան, Յով. քահ. Տէր Մինասեան, Գալ. Տէր Յակոբեան, Մկր. Թումանեան, Գաղ. Տէր Բաղդասարեան, Ալ. Մալխասեան, Նիկ. Գասպարեան, Մկր. Վարդումեան և Յար. Սիրինեան։ Հոկտ. 4, 1871, № 476։

Կոնդակ օրհնութեան Սահակ Բաբայեանին, որի հայրը Վրթանէս Բաբայեան կատկել է Քեօրփալու գիւղի ծխական դպրոցին 200 մ. և 50 մ. Գ. ճեմարանին։ Հոկտ. 11, 1879, № 490։

Ս. Էջմիածնի Սինօդի օրագրութիւնների վճիռներ։

Ի 29 յունիսի 1879 ամի։ Առաքմամբ Լանդրոյ և վկայականի Ասորի Քաթոլիկ Սայադեան Հանդերձ Թարգմանութեամբ ի ռուս լեզու առ կառավարիչն գլխաւոր կառավարութեան փոխարքային Կովկասու Լանդրել

զանօրէնութիւն նորին յաղագս թոյլատրելոյ նմա ընդունել զՀայոց դաւանութիւն համաձայն ցանկութեան նորա։

Ի 29 յունիսի 1879 ամի։ Առաքմամբ իսկական յայտարարութեան և գործոյն կոնսիստորիային Վրաստանի, որ ընդ № 1721, յանձնել Սահակեան քահանայի Տէր Սահակեանոսեան Ախալքալաքու օրինաւոր քննութեամբ ի յայտ ածել զվանդամանս և զիսկութիւն արձանագրութեան կազմելոյ ի Խորէն աւագ քահանայէ Բարսեղեան և զառիթ անբաւականութեան ընդ մէջ Քէչեան և Փաշեան քահանայից, և թէ յորմ՞ վարկէ ստիպեալ Քեչեան քահանայն ցուցանել յօժարութիւն իսպառ հեռանալոյ ի հովուութենէ ժողովրդեան քան հաւասարաբաժին առնելոյ զարդիւնս ընդ ընկերակից քահանային, և զգործս քննութեան հանդերձ դիտողութեամբ իւրով մատուցանել ի տնօրէնութիւն Սինոդին, և զայսմանէ ի տեղեկութիւն ծանուցանել Հոգևոր կառավարութեան Ախալցխոյ։

Ի 29 յունիսի 1879 ամի։ Որովհետև որպէս երևի ի յայտարարութենէ կառավարութեանն Ալէքսանդրապօլու, կինն ալէքսանդրապօլցի Պետրոսի Տէր Պետրոսեան Նազան Ալէքսանդրեան փոխանակ զի յետս կասելոյ յանվայել գնացից և ջանալոյ համեստ կենցաղավարութեամբ ի հաշտութիւն ածել ընդ ինքեան զայր իւր, անղեղջ մնացեալ ի մեղս անառակութեան ապօրինաւորապէս կենակցի ընդ պյուտ, վասնորոյ հրամանագրել Հոգևոր կառավարութենէն Ալէքսանդրապօլու գնապոյ կինն ևնթարկել ի ներքոյ եկեղեցական ապաշխարանաց, արգելուլ ի հաղորդութենէ եկեղեցւոյ այսինքն չթողուլ նմա մտանել ի տաճար Տեառն և չհաղորդիլ կենարար մարմնոյ և արեան Յիսուսի, բայց միայն արժանացուցանել վերջնում թօշակի և տնօրինել չօրհնել զտուն նորա ի շարս պյոց հաւատացելոց ի Զատկի և Աստուածայայտնութեան տօնսն և զայսմանէ ընթեռնուլ ի լսելիս նորա առաջի ժողովրդեան յեկեղեցւոջ ի խրատ և ի զգուշութիւն պյոց, զորմէ և ծանուցեալ առն յիշատակեալ կնոջ Պետրոսի Տէր Պետրոսեան յայտնել նմա, զի ըստ կանոնական կոնդակի Վեհափառ Կոթողիկոսի պսակ որդւոց Հայաստանեայց Եկեղեցւոյ անլուծանելի է, զորչափ կենդանի իցէ մինն յամուսնացելոց անտի։ Եւ զայսմանէ վերադարձուցմամբ գործոյն որ ընդ № 110, ծանուցանել կոնսիստորիային Երևանայ ի տեղեկութիւն։

Ի 29 յունիսի 1879 ամի։ Ի յարգանս Թախանձանաց Հայազգի ժողովրդականաց Գօրւոյ քաղաքի Թողուլ զԳրիգոր վարդապետն Գառնակերեան յիւրումն փոխանորդական պաշտաման ի Գօրի, իսկ զկնդիրն նորա վասն արձակմանն ի պաշտօնէ Թողուլ առանց հետևանաց, զորմէ և յայտնել նմա հրամանաւ։

Ի 29 յունիսի 1879 ամի։ Ըստ որում որպէս երևի ի բացատրութենէ Պօղոս վարդապետի, զի ի մասին աւերակաց եկեղեցական գանձոյն Դիլիջանայ, հաւատարմատար Տէր Յովհաննէսեանն սկզբնաւորեալ է զգործ առ հաշտարար դատաւորն Դիլիջանայ և մնացեալ է ցարդ թերի, ուստի և պատուիրել Կոնսիստորիային Տփղեաց, յանձնել հաւատարմատարին, որպէս զի

եթէ նա տեսանիցէ ի նմին ջհիմն ինչ օրինական, փոյթ կալցի շարունակել դդատն առ ի բառնալ տալոյ ղշինուածսն, զորս արարեալ է մալական Շտերբակովն, ի պարսպի եկեղեցւոյն, իսկ զմիւսն տեղին, յորոյ վերայ պարտէր չինել Աստուածահաճոյ շինուածս, յանձնել միւսմ ի գործակալաց տեղւոյն տալ առ առժամ շրջապատել պարսպաւ, զի մի՛ մնալով յաւերակ դրութեան անցցեն ի տիրապետութիւն օտարաց, մինչև դէպք յաջողեսցին առնել անդէն ջշինուածս ինչ յօգուտ եկեղեցւոյն։

Ի 18 յուլիսի 1879 ամի։ Ըստ նախընթաց հաճութեան Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց յանձն առնել օգնականի թեմական տեսչի համայն ուսումնարանաց Հայոց Երևանայ և Կարուց վիճակի խորհրդակցութեամբ հոգաբարձութեանն բանալ զչորրորդ դասատուն ի հոգևոր դպրանոցին Երևանայ, ուր ժողովեալ ջհարկաւորեալ թիւ դպրաց ուսուցանել նոցա գկարևորն առանձնապէս համաձայն իւրումն յայտարարութեան։ Զայսմանէ տալ տեղեկութիւն և հոգաբարձութեան հոգևոր դպրանոցին Երևանայ և Կանսիստորիայի տեղւոյն վասն տեղեկութեան և պարտուպատշաճն կատարման։

Ի 15 օգոստոսի 1879 ամի։ Առաքմամբ իսկական յայտարարութեան հոգաբարձութեան սուրբ Գայիանեայ օրիորդական դպրոցին Հայոց Երևանայ առ օգնական թեմական տեսչի Երևանայ պ. Պերճ Պռօշեան պատուիրել խորհրդակցութեամբ ընդ տեսչի և հոգաբարձութեան սուրբ Գայիանեան օրիորդական դպրոցին Երևանայ և համաձայն տուեալ նմա ի Վեհափառ Հայրապետէ ամենայն Հայոց հրահանգութեանն կարգադրել զարժանն ի բանալ և յաւելուլ այլ ևս դասատունս հանդոյն միջնակարգ օրիորդական դպրոցաց Հայոց Տփխիսու, և այսուհետև զդպրոցն զայն համարել միջնակարգ ուսումնարան, և զհետևանացն յայտնել Սինօդիս վերադարձուցմամբ իսկական յայտարարութեանն։ Զայսմանէ հաղորդել և նոյն հոգաբարձութեան։

Ի 22 օգոստոսի 1879 ամի։ Հրամանագրել զանձապահի Ամիռոյս հանեալ ի ծախս ի մատենի աւանդապահութեան արդեանց զժողովեալ գումարս յանուն գաղթականացն տասնևվեց հազար երկք հարիւր չիսուն ութն րուբլի քսան երկու կէս կոպէկ առաքել ընդ գրութեան Սինօդի ի Ս. Պետերբուրգ յընկերութիւն զեմնկոյ տամբովսկոյ երկաթուղի ճանապարհին, խնդրել յայնմանէ առաքել այնոքիկ գումարօք զ5% տոկոսաբեր արժէթուղթս Սարատովի երկաթուղւոյ ընկերութեանն հանդերձ հաշուեցուցակաւ ստացեալ գումարացն և առաքեալ տումնացն, զորս պահել ի զանձարանի Ամիռոյս, զի ի ժամանակին ծախեսցի ի վերանորոգութիւն վանից սրբոյն Յովհաննու Իչէքիլիսէ անուանելոյ և ի շինութիւն ուսումնարանի և ի պահպանութիւն նորա։ Եթէ յաւելցի դրամ, մարթ է օգնել և դպրոցի Հայոց, որ ի Բայազիդ քաղաքի կամ ի Թօփրակ քալէ։

Ի 26 սեպ. 1879։ Առեալ յուշագրութեան զհանգամանս բացատրեալս ի յայտարարութեան վարչութեան եկեղեցական երկսեռ դպրոցաց Հայոց Վաղարշապատայ յանձնել համաձայն բարեհաճութեան Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց ի տնօրէնութեան և ի հոգատարութեան եկեղեցական

երկսեռ դպրոցաց զամն վեց սկսեալ ի ներկայ 1879 ամէ մինչ ցամն 1885 զամենատեսակ արդիւնս ուխտատեղւոյն սրբոյն Գէորգայ որ ի Կօշ, զորմէ առանձին ծանուցեալ վարչութեան յիշեալ դպրոցաց պատուիրել նոցա զտարեկան խոստացեալ մի հարիւր յիսուն րուբլիս անպակաս հասուցանել ի գանձարանն Ամոռոյս ի վերջ ուխտի եօթն շաբաթուց իւրաքանչիւր ամի, իսկ զյաւելեալ գումարս դոյացեալ արդեանց ի գործ դնել ի նպաստ յիշեալ եկեղեցական երկսեռ դպրոցաց Վաղարշապատու։

Ի 28 սեպ. 1879 ամի։ Ըստ որում նախնաւանդ ծէս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, որպէս երևի ի հեռագրութեանց անդամոյ Կոնսիստորիային Հայոց Վրաստանի Մամբրէ վարդապետի, եղծեալ է, հանելով ի կնքեալ գերեզմանէ զղի կնոջ հանգուցեալ գեներալ Լազարեանի, ուստի ըստ բարեհաճ կամաց Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց առնել զՀետևեալս. Նշանակել զանդամ Սինոդի զգերապատիւ Մկրտիչ Արքեպիսկոպոս քննիչ ըստ այսմ մասին և առաքել զնա ի Տփղիս, առ ի ստուգիւ հասու լինել ըստ հրահանգութեանն Նորին Վեհափառութեան հանգամանաց գործոյս և ճշտութեամբ ածել յերեսան, թէ պ՞ք ոմանք լեալ են սկզբնապատճառ եղծման կանոնի եկեղեցւոյ, և ի ձեռն որոյ փոխադրեալ է դի հանգուցեալն յաւագ եկեղեցին վանից, որոյ վասն տուեալ լինի Մկրտիչ Արքեպիսկոպոսի իրաւունս ի քննութեանն ժամու, եթէ երևեսցին յանցաւորք յեկեղեցականաց անտի և մինչ յանդամոց Կոնսիստորիային, իսկզոն դադարեցուցանել զնոսա ի պաշտամանց և ի քահանայագործութեանց, մինչ ցաւարտ քննութեանն, առնել զզրպարտութիւն ընդ որում արժան դատեսցի նա ըստ այմ գործոյ։ Վասն գործակարութեանն ի ժամ քննութեան Մկրտիչ Արքեպիսկոպոսի նշանակել առ նա զաստիճանաւորն առանձին յանձնարարութեանց զՀաքարիա Տէր Հաքարեան, որում զայսմանէ տալով հրամանաւ պիտել պատուիրել երթալ ընդ քննիչ Մկրտիչ Արքեպիսկոպոսի ի Տփղիս և զամենայն զրպարտութիւնս ըստ քննութեան գործոյ փոխադրութեան զիւր կնոջ գեներալ Լազարեանի առնել ըստ հրահանգութեանն Նորին գերապատուութեան։ Զվերոյգրեալ անօրէնութեանց Սինոդիս տալ պիտել Կոնսիստորիային Հայոց Վրաստանի և պատուիրել իսկութեամբ կատարել զամենայն հրամայեալս քննիչ Մկրտիչ Արքեպիսկոպոսի ի մասին փոխադրութեան մարմնոյ կնոջ գեներալ Լազարեանի։ Փոխադարձաբար տուեալս Մկրտիչ Արքեպիսկոպոսի ի գանձարանէ Ամոռոյս ի հաշիւ վիճակային արդեանց Վրաստանի, զՀարիւր րուբլիս վերադարձուցանել ի Սինոդն և Հոգալ զամենայն զծախս ապրուստի նոցա պատուաւոր եղանակաւ, և զծախս վերադարձի նոցա մինչ ցԷջմիածին նոյնպէս տալ Մկրտիչ Արքեպիսկոպոսի, զորս անցուցանել ի ծախս ի մատենի վիճակապատկան արդեանց Վրաստանի։ Հրամանագրել գանձապետի Ամոռոյս գերապատիւ Ներսէս եպիսկոպոսի տալ փոխադարձաբար ի հաշիւ վիճակային արդեանց Վրաստանի զՀարիւր րուբլի Մկրտիչ Արքեպիսկոպոսի, որ ունի մատուցանել զհաշուեցուցակ հարիւր րուբլեաց և յետ ստացման այնոցիկ զրամոց ի Կոնսիստորիայէ Հայոց Տփղիսոյ հաշուել ի տեղի փոխ առեալ զրամոցն, և

զանուն գերապատիւ Մկրտիչ Արքեպիսկոպոսի ցուցանել յօրագիրս բացակայ ցվերադարձն։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.

Գերմանական մի լրագրում դպրոցների և աշակերտների յետագայ վիճակագրական տեղեկութիւններ հրատարակված էին, համեմատելով նոցա թիւը զանազան եվրօպական տէրութիւնների բնակիչների հետ։ Գերմանիայում 42 միլիօն բնակիչներ կան, 60 հազար դպրոցներ և 6 միլիօն աշակերտներ։ Ուրեմն միջին թուով իւրաքանչիւր դպրոցին 100 աշակերտ կընկնէ։ Դպրոցների վերայ իւրաքանչիւր բնակիչը կծախսէ 80 կօպէկ։ Անգլիայում 34 միլիօն բնակիչներ կան, 58 հազար դպրոցներ և 3 միլիօն աշակերտներ,—ուրեմն 52 աշակերտ կընկնէ իւրաքանչիւր դպրոցին և իւրաքանչիւր բնակչին 50 կօպ. ծախս։ Աւստրիայում 37 միլիօն բնակիչներ կան, 30 հազար դպրոցներ և 3 միլիօն աշակերտներ—ուստի 104 աշակերտ իւրաքանչիւր դպրոցում, և իւրաքանչիւր բնակչին կընկնէ 45 կօպէկ ծախս։ Ֆրանսիայում 37 միլիօն բնակիչներ կան, 71 հազար դպրոցներ և 4 միլիօն 700 հազար աշակերտներ,—ուրեմն 66 աշակերտ իւրաքանչիւր դպրոցում և իւրաքանչիւր բնակչին կընկնէ 40 կօպ. ծախս։ Իսպանիայում 17 միլիօն բնակիչների համար կան 29 հազար դպրոցներ, 1 միլիօն 600 հազար աշակերտներ,—56 աշակերտ իւրաքանչիւր դպրոցում, և իւրաքանչիւր բնակչին կընկնէ 36 կօպ. ծախս։ Իտալիայում 28 միլիօն բնակիչների համար կան 47 հազար դպրոցներ և 1 միլիօն 200 հազար աշակերտներ,—40 աշակերտ իւրաքանչիւր դպրոցում, և իւրաքանչիւր բնակչին 22 կօպ. ծախս կընկնէ։ Ռուսիայում 84 միլիօն բնակիչների համար կան 32 հազար դպրոցներ և 1 միլիօն աշակերտներ,—36 աշակերտ իւրաքանչիւր դպրոցում, և իւրաքանչիւր բնակչին կընկնէ 7¹/₄ կօպ. ծախս։

Մեր թեմական վերատեսուչների հաշիւներից, որ պարտաւոր են նորա ամենքը շուտ ներկայացնել Սինօդին, մենք կարող ենք յետագայ ամսատետրակներում հրատարակելով, մակաբերել թէ ինչ չարաբերութիւն կայ Հայերի թուի, նոցա ունեցած դպրոցների և իւրաքանչիւրին հասնող ծախսի մէջ։

Պետերբուրգի Մարդասիրական ընկերութիւնը իւր բարեգործական գումարներից օգոստոս ամսում ծախսել է զանազան բարեգործական ձեռնարկութիւնների և գործերի վերայ 23,884 ման. 25 կօպ։

Ռուսիայում կան 4 լավրա (միաբօպօլիտների անմիջական տնօրէնութեան ներքոյ գտնվող վանքեր), 7 ստաւրօպիգիական վանք (սինօդի անմիջական տնօրէնութեան ներքոյ գտնվող), 193 արական վանք և 96 իգական վանք,—բոլորը 305 վանք, որոնց պահպանութեան համար, բացի նոյն ինքն վանքերի ահագին եկամուտներից, արքունի գանձարանը կվճարէ տարեկան 430,000 մանէթ, և արական վանքերն աւելի կծախսեն համեմատաբար քան թէ իգական վանքերը։

Եկատերինոդար	*Մինաս քհնյ. Բաբեան*
Եյսկ	*Մարզար ա. քահ. Սուքիասեան*
Թեոդոսիա	*Մարտիրոս ա. քհնյ. Տ. Դաւթեան*
Կարասուբազար	*Յովհաննէս քհնյ. Սարըյեան*
Մեղհսօպոլ	*Պ. Գէորգ Խարամրզեան*
Մօսկվա	*Յակովբ ա. քհնյ. Սուրէնեան*
Նախիջեւան Նոր	*Հոդեւոր Կառավարութիւն Հայոց*
Ս. Պետերբուրգ	*Գէորգ քահանայ Խանթարճեան*
Սիմֆերօպոլ	*Օգսէնտիոս քհնյ. Կոպչակեան*
Փիշվեւ	*Ստեփաննոս Վարդապետ Մխիթարեան*
Օդեսսա	*Գրիգոր քհնյ. Խօրասանճեան*
Օրբազար	*Օգսէնտիոս քահ. Հայրունի.*
Օրհէյ	*Կարապետ քհնյ. Զորայեան*

Երեւանի թեմ.

Ալէքսանդրոպոլի	*գաւառ.*	*Գէորգ վրդպ. Սուրէնեան եւ Յովսէփ ա. քհ. Կոստանեան*
Ախտալա	»	*Ղուկաս Վարդապետ, Մողնում*
Գառնիքարաւար	»	*Յակովբ քհնյ., Թամամլում*
Գեօգչայ	»	*Անանիա Վարդապետ, Նոր Բայազէտում*
Գողբիճ	»	*Պ. Հայրապետ Աբրահիմեանց*
Դարալագեազ	»	*Մեսրոբ քհնյ., Քէշիշվերանում*
Դարայիչագ	»	*Գէորգ քհնյ., Ջամաքաբերդում*
Երեւանի	*Ջանգիքար.*	*Աստուածատուր ա. քհնյ., Երեւանում*
Ջանգիեազօր	»	*Իսրայէլ քհնյ. Յարութիւնեան Գեօրիսում*
Կարբի	»	*Թովմաս քհնյ., Բիւրականում*
Կարս	»	*Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեան*
Կողբ	»	*Յովսէփ քհնյ., Կողբում*
Կոտայք	»	*Յովհան քհնյ., Արամուսում*
Նախիջեւան Հին	»	*Հոդեւոր Կառավարութիւն Հայոց*
Շարուր	»	*Գրիգոր քհնյ., Վարմազիարում*
Սարդարապատ	»	*Ստեփան քհնյ., Ղուրտուղուլում*
Սուրմալու	»	*Սարգիս ա. քհնյ., Խղիրմաւայում*
Վաղարշապատ	»	*Թադէոս ա. քհնյ., Վաղարշապատում*
Տաթեւ	»	*Յովհաննէս Վարդ. Ղալամեան*

Թիֆլիսի թեմ.

Ախալցխա	*Գրիգոր Արքեպիսկոպոս Յազինեան*
Ախալքալաք	*Խորէն ա. քահ. Բարսեղեան*
Գանձակ	*Թադէոս վարդապետ եւ Գրիգոր քհնյ. Բաբաքեւխեան*
Գօրի	*Հոդեւոր. Կառավարութիւն Հայոց*

Դիլիջան	Յարութիւն քհնյ. Տէր Գէորգեան
Դուշէթ	Ալէքսանդր քհնյ. Տէր Յարութիւն
Ջամթամտա	Յովհան քհնյ. Ատովմեան
Թեղուտ եւ շրջակայքում	Գէորգ ա. քհնյ. Տէր Սարգսեան
Թիֆլիս	Ղազար ա. քհ. Պալիտալթայեան եւ Սարգիս ա. քհ. Ադաջանեան
Մեծ Ղարաֆիլիսա եւ շրջակայքում	Աբսէն քհնյ.
Սղնախ	Սարգիս քհնյ. Տէր Ստեփաննոսեան
Սուրամ	Յովսէփ քհնյ. Ասլիբեան
Փոթսխիս	Գաբրիէլ ա. քհնյ. Եարալեան

Ղարաբաղի թեմ.

Նուխի եւ շրջակայք.	Գրիգորիս Վարդապետ
Շուշի եւ շրջակայքում	Աբիսաակէս Վարդապետ Սեդրակեան

Շամախու թեմ.

Բագու	Թադէոս ա. քահ. Բուդաղեան
Դերբենդ	Աբսէն քհնյ. տ. Ղազարեան
Ղուբայ	Աւագ քհնյ. Աւշարեան
Շամախի եւ շրջակ.	Համազասպ Վարդապետ

Դավրեժ — Գրիգոր Արքեպիսկոպոս Մուշեղեան
Զմիւռնիա — Մելքիսեդեկ Եպիսկոպոս Մուրադեան
Թեհրան — Եղբօր Աղա Մասուճեան
Կալկաթայ — Ստեփաննոս Աղանուրեան
Կ. Պոլիս — Պօղոս Վարդապետ Խոլտամեան

Տեղ. — Ռուսաստանի և արտաստհմանի վերոյիշեալ ուրիշ քաղաքներից ու շրջականերից ամենագրիս բաժանորդագրվիլ ցանկացողները կարող են նշանակված գործակալների միջոցով ստորագրվիլ, և բաժանորդագինը կանխիկ վճարելուց յետոյ, ուղղակի կամ՝ գործակալների միջոցով ստանալ ամսագիրը։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ։

1880 Յունուարի Օրացոյցն արդէն տպված Մ. Աբեղեան տպարանում հրատարակվեցաւ եւ ուղարկվեցաւ գործակալներին վաճառելու։ Գինն ամեն տեղ 20 կոպէկ է։ Կխնդրենք գործակալ հայրերից հասկել որ նշանակված գնից աւելի չպահանջվի գնողներից օրացոյցի համար։